

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱԶՄԱՆ, ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ
ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԻՄԻՐ ԴՎԿԻԹԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱԶՄԱՆ, ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԵՎ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 341:94(479.25)
ԳՄԴ 67.412+63.3(5Հ)
Վ 301

*Ժողովածուն պատրաստված և հրատարակված է
ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով*

*Աշխատությունը երաշխավորված է տպագրության
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական
խորհրդի կողմից*

Գիտական խմբագիր՝ Կիրակոսյան Ե. Գ., ի. գ. թ., ասիստենտ

**Գրախոսողներ՝ Գևորգյան Կ. Ա., ի. գ. թ., դոցենտ
Քոչարյան Վ. Վ., ի. գ. թ., դոցենտ**

Վարդանյան Վ.

Վ 301 Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման հիմնախնդիրները/ Վ. Վարդանյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2017.- 174էջ:

Աշխատությունում վեր հանվում են Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և դրա հետևանքների հաղթահարմանն ուղղված հիմնական իրավական միջոցները: Հետազոտվում են Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի, պատշաճ դատավարական ընթացակարգերի, թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության իրավաչափության և դրան առնչվող այլ հիմնախնդիրներ:

Աշխատությունը նախատեսված է իրավագետների, պատմաբանների, միջազգայնագետների, ինչպես նաև Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերով հետաքրքրված հանրության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 341:94(479.25)
ԳՄԴ 67.412+63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2173-8

© Վարդանյան Վ., 2017
© ԵՊՀ հրատ., 2017

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ 13

1. Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի միջազգային իրավական նշանակությունը 13
2. Հայոց ցեղասպանության ճանաչման արդի փուլի իրավական մարտահրավերները 29

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԺԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԵՐԸ 34

1. Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը 34
2. Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործության հայեցակարգի մշակումը և Հայոց ցեղասպանության ազդեցությունը ցեղասպանության հանցագործության հայեցակարգի ձևավորման վրա 48
3. Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի կիրառելիության հիմնահարցը 55
4. Հայոց ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության իրավաչափության վերլուծություն ... 78
 - 4.1. Հայոց ցեղասպանությունը կազմող արարքները թուրքիայի Հանրապետությանը վերագրելու անհրաժեշտ վավերապայմանների վերլուծություն 78
 - 4.2. Թուրքիայի Հանրապետության որպես Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողի կարգավիճակի վերլուծություն 84

5. Հայոց ցեղասպանության համար Հայաստանի Հանրապետության կողմից Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավաչափությունը և հիմնական պայմանները	100
--	-----

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

112	
1. Հայոց ցեղասպանության ուղղակի (անմիջական) հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն	114
2. Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարմանն ուղղված միջազգային իրավական հատուցմանն հնարավոր ձևերի և եղանակների վերլուծություն	124
3. Հայոց ցեղասպանության միջնորդավորված հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն	141
4. Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելուն ուղղված հիմնական ռազմավարական մոտեցումները	150

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....

155	
164	Резюме
169	Summary

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց ցեղասպանությանն առնչվող իրավական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը հայ իրականության առջև ծառայած ամենալուրջ մարտահրավերներից մեկն է:

Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցից հետո առավել պարտավորեցնող դարձավ այդ հանցագործության համար իրավական պատասխանատվության հնարավոր եղանակների համակողմանի, օբյեկտիվ և ամբողջական ուսումնասիրությունը:

Տարատեսակ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով երկար տարիներ Հայոց ցեղասպանությանն առնչվող հիմնահարցերը դիտարկվել են հիմնականում պատմական փաստերի վերլուծության լույսի ներքո, ինչը թույլ չի տվել բացահայտել ու գնահատել ցեղասպանություն երևույթի ու դրա հետևանքների բոլոր բաղկացուցիչների փոխկապակցված էությունն ու բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման հիմնահարցերը բարձրացվեցին պետական քաղաքականության մակարդակի՝ ձեռք բերելով նոր որակ և բովանդակություն:

Դեռևս 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված անկախ պետականության կայացման գործընթացին սկիզբ դրած Հայաստանի անկախության մասին հռչակագիրը՝ կետ 11-ում հստակորեն ամրագրեց Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում Հայոց պետականության առանցքային հանձնառությունները՝ սահմանելով, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգ-

նում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»¹:

Հռչակագրի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության համար Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը դադարեց հանդիսանալ սոսկ պատմական հարթությունում գտնվող երևույթ՝ վերածվելով արտաքին քաղաքականության և արդի միջազգային իրավական հարաբերությունների հիմնախնդրի:

Անկախության հռչակագրի ընդունումն իրավական հիմք ստեղծեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված համապատասխան իրավաքաղաքական միջոցներ ձեռնարկելու համար: Հայոց պետականության ստեղծումն ազդարարող հիմնադիր փաստաթղթում ամրագրվեց Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարային հիմնախնդիրներից մեկը, այն է՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դրա հետևանքների հաղթահարումը:

«Հ Սահմանադրության նախաբանը, հիշատակելով «Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները»², Հայոց ցեղասպանության համար միջազգային պատասխանատվության հիմնախնդիրն անուղղակի կերպով ներառեց Սահմանադրությամբ կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակի մեջ:

Նշվածի վառ ապացույց հանդիսացավ «2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաս-

¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990/16:

² Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2015.12.21, Հատուկ թողարկում, հոդված 1118:

տանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴԴ-850 որոշման 5-րդ կետում արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «...«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին»³:

Հայաստանի անկախության հռչակագրում ամրագրված հանձնառությունը՝ սատար կանգնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը, իր տրամաբանական զարգացումն ստացավ 2015 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի համահայկական հռչակագրում, որում ընդգծվեց Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համընդհանուր ճանաչմանը հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում իրավական պահանջների թրթածրար մշակելու վերաբերյալ՝ որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի անհրաժեշտ նախադրյալ⁴:

Կարելի է ասել, որ XX դարի վերջին տասնամյակը բեկունային դարձավ Հայոց ցեղասպանության հիմնախնդրին առնչվող հարցերի վերաիմաստավորման և նորովի ընկալման

³ «2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «...«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴԴ-850 որոշում: ՀՀՊՏ 2010.01.20/3(737) Հոդ.9.

⁴ <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>

տեսանկյունից: Եթե 1980-ականների երկրորդ կեսին կարելի էր խոսել Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն իրավական դաշտ տեղափոխելու որոշ միտումների մասին, 1990-ականները նշանավորվեցին Հայոց ցեղասպանության իրավական հարթությանն առնչվող հիմնախնդիրների ակտիվ լուսաբանմամբ, ապա երրորդ հազարամյակում Հայոց ցեղասպանության հիմնական բաղկացուցիչ դարձան հենց իրավական հարթության հիմնահարցերը: Իրավական դաշտ Հայոց ցեղասպանության հիմնախնդրի տեղափոխումը փաստորեն վերակենդանացրեց այդ հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու՝ դեռևս XX դարի 20-ական թթ. վերջից սառեցված գործընթացը: Ինքնին հասկանալի է, որ առավել քան 70 տարի սառեցված լինելուց հետո տվյալ հարցի ժամանակակից արծարծումը չէր կարող նույն բովանդակությունն ու ծավալն ունենար, ինչ 1920-ականներին: Մասնավորապես, հիմնախնդրի պարտադրված սառեցումը բացառեց ցեղասպանության կազմակերպիչներին և անմիջական կատարողներին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը նրանց ողջ չլինելու պատճառով: Այսօր գրեթե հնարավոր չէ նաև վերականգնել այդ հանցագործության արդյունքում պատճառված հստակ նյութական վնասի չափը և ծավալները:

Սույն հետազոտության իրականացումը մեծամասամբ պայմանավորված է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական գործընթացին սատարելու և Հայոց ցեղասպանության իրավական հարթության հիմնախնդիրների վերհանման և դրա հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական լուծումներ առաջարկելու անհրաժեշտությամբ:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, այդ հանցագործության փաստական հանգամանքների վերհանումը, դրա նկատմամբ կիրառելի իրավունքի հստակեցումը, Օսմանյան կայսրության միջազգային իրավական պարտավորությունների հետազոտությունը, Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված վնասի բնույթի և ծավալների կոնկ-

րետացումը, ներկայացվելիք իրավական պահանջների ձևակերպումը պահանջում են խորքային իրավական հետազոտությունների իրականացում:

Նշված հիմնահարցերի գիտական ուսումնասիրվածության մակարդակը միատեսակ չէ, որոշ հիմնահարցեր խորքային վերլուծության են ենթարկվել մասնագիտական գրականության մեջ, որոշներին մասնակի անդրադարձ է կատարվել, իսկ շատ հիմնախնդիրներ պարզապես անտեսվել են մասնագետների կողմից:

Թեև տարբեր ժամանակահատվածներում Հայաստանում և Սփյուռքում առանձին կառույցների և հաստատությունների կողմից Հայոց ցեղասպանության իրավական հարթությանը վերաբերող մի շարք հիմնարար իրավական հետազոտություններ են իրականացվել, որոնցում արտացոլվել են Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերը, սակայն, հիմնված չլինելով միասնական ռազմավարության վրա և կտրված լինելով արդի միջազգային իրավական զարգացումներից, դրանք արտացոլել են ոճրագործության միայն որոշ կողմերը՝ մեծապես պարունակելով նաև զուտ նկարագրական, փաստագրական բնույթի տեղեկություններ:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումն իրենից ներկայացնում է բարդ, համալիր, բազմասպեկտ հիմնախնդիր, որի լուծումը պահանջում է տարաբնույթ միջոցների՝ իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական, ժողովրդագրական, հոգեբանական և այլ հարակից հարթությունների հիմնահարցերի համադրված վերլուծություն:

1920 թ. հայկական անկախ պետականության կորուստը և Հայաստանի հետագա խորհրդայնացումը, որի արդյունքում հայ ժողովուրդը զրկվեց իր օրինական շահերը ներկայացնող միջազգային իրավունքի սուբյեկտի հովանավորությունից, առավել խորացրեց Հայոց ցեղասպանության հետևանքները՝ թույլ չտալով հնարավորինս արագ արձագանքել դրա հետևանքով պատճառված վնասի վերացմանը և հավուր պատշաճի ձեռնարկել դրա հետևանքների հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ:

Ժամանակի գործոնի ազդեցության ներքո Հայոց ցեղասպանության բացասական հետևանքներից շատերն առավել արմատավորվեցին՝ բացասաբար անդրադարձնալով իրավական լիարժեք պահանջներ ներկայացնելու հնարավորությունների վրա: Մասնավորապես, տարիների ընթացքում ամենաթողության մթնոլորտում ոճրագործներին հաջողվեց զգալիորեն պարտակել Հայոց ցեղասպանության հետևանքները, վերացնել ապացուցողական նշանակության բազում փաստաթղթեր, խիստ սահմանափակել կամ արգելել դրանց հասանելիությունը, շարունակել հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը, յուրացումը և ձևախեղումը, ինչպես նաև հսկայական ջանքեր գործադրել Արևմտյան Հայաստանում հայկական էթնիկ տարրի գոյությունը մոռացության մատնելու համար:

Նշված հիմնախնդիրներից գատ, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնապես ուրացման ազդեցիվ քաղաքականության նախաձեռնումն առավել բարդացրեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Անհրաժեշտ է նշել, որ ըստ թուրքական պաշտոնական մոտեցման՝ այս հարցն ընդհանրապես պետք է իրավական ոլորտից տեղափոխվի պատմական հետազոտությունների ոլորտ: Այսպես, օրինակ, Թուրքիայի Հանրապետության Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Թուրքիայի պետական հեռուստառադիոընկերությանը (TRT) տված հարցազրույցում նշել է. «Մենք պարտավոր չենք ճանաչելու, այսպես կոչված, Հայոց ցեղասպանությունը այլոց հրամաններով: Այն ինչ մենք ասում ենք, սա է, եթե դուք անկեղծ եք այս քննարկման շուրջ, թողեք այս հարցը պատմաբաններին և թույլ տվեք նրանց աշխատել դրա շուրջ»⁵:

Վերը նշված տնտեսական, պատմական, քաղաքական և այլ գործոնները Հայոց ցեղասպանության հիմնահարցը զուտ իրավական խնդրից վերածեցին իրավաքաղաքական համալիր հիմ-

⁵ Erdoğan accuses Armenian diaspora of exploiting 1915 events. http://www.todayzaman.com/diplomacy_erdogan-accuses-armenian-diaspora-of-exploiting-1915-events_371286.html

նահարցի, որի հետևանքների հաղթահարման գործում իրավական միջոցները թեև ունեն կենտրոնական դեր, սակայն չեն կարող արդյունավետ լինել առանց այլ, մասնավորապես, աշխարհաքաղաքական, տնտեսական և այլ միջոցների համալիր, սիներգետիկ համադրման հնարավորության: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում իրավական միջոցներն անվերապահորեն պետք է զուգակցվեն այլ հարակից միջոցների հետ՝ ստեղծելով բարենպաստ հիմնապաստառ համապատասխան իրավաբանական պահանջներ ներկայացնելու համար:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական պահանջների թղթածրարի ստեղծումը ժամանակի հրամայականն է, սակայն այն չպետք է ընկալվի որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված այլ միջոցներին փոխարինող: Իրավական հիմնախնդիրների վերլուծությունից գատ, պետք է շարունակվեն Հայոց ցեղասպանությանն առնչվող պատմական, քաղաքագիտական, սոցիոլոգիական, մարդաբանական և այլ ոլորտների հետազոտությունները:

Սույն աշխատության շրջանակներում փորձ է կատարվում վերլուծել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը՝ վերհանելով դրա միջազգային իրավական նշանակությունը, ճանաչման հիմնական ձևերն ու տեսակները, ինչպես նաև վերլուծության ենթարկելով արդի փուլում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում առկա հիմնական իրավական մարտահրավերները: Դրանում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատժելիության հենքերը՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցի, այդ հանցագործության իրավական որակման առանձնահատկությունների և դատաիրավական հիմնախնդիրների շեշտադրմամբ:

Հետազոտության առանցքային մաս է կազմում Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանն ուղղված իրավական միջոցների վերլուծությանը նվիրված բաժինը, որի շրջանակնե-

րում ուսումնասիրվում են Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանն ուղղված հնարավոր միջազգային և ներպետական իրավական միջոցները:

Բացի նշվածից, աշխատությունում հայեցակարգային մոտեցումներ են առաջ քաշվում Հայոց ցեղասպանության ուղղակի և անուղղակի հետևանքների հաղթահարման հիմնահարցերի վերաբերյալ, անդրադարձ է կատարվում տարբեր աշխարհամասերում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական ռազմավարության և մարտավարության առանձնահատկություններին:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական միջոցների հարցում հետազոտողների և վերլուծաբանների միջև առկա չէ ներդաշնակ փոխհամաձայնություն բոլոր հարցերի առնչությամբ: Այդ իսկ պատճառով տվյալ հետազոտության շրջանակներում քննության առարկա է դարձել հնարավոր կիրառելի իրավական միջոցների առավել ընդգրկուն շրջանակը, որի սահմաններում հնարավոր կլինի առանձնացնել այնպիսիք, որոնց շուրջ կարող են կառուցվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնական հայեցակարգային մոտեցումները և ձևավորել դրա հետևանքների հաղթահարման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն:

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի միջազգային իրավական նշանակությունը

Հայոց ցեղասպանության իրավական հարթության հիմնահարցերն ուսումնասիրելիս հնարավոր չէ չանդրադառնալ այդ հանցագործության միջազգային ճանաչման հիմնահարցերին: Միջազգային իրավունքի տարբեր սուբյեկտների կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը և արարքի՝ որպես ցեղասպանություն որակումը թեև չեն կարող որևէ պարտադիր իրավական ուժ ունենալ Թուրքիայի Հանրապետության համար, սակայն չափազանց կարևոր բարենպաստ հիմնապատասխան են ստեղծում Հայոց ցեղասպանության եղելության փաստը և որակումն աներկբայելի դարձնելու համար: Ելնելով նշվածից՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի միջազգային իրավական նշանակության հիմնախնդիրներին:

Ավելի քան մեկ հարյուրամյակի ընթացքում Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է տարատեսակ մարմինների, կառույցների, հաստատությունների և պետությունների կողմից: Ընդ որում, այդօրինակ ճանաչման փաստերն ունեցել են դրսևորման տարաբնույթ եղանակներ:

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձվել միայն միջազգային իրավունքի սուբյեկտների, ներառյալ պետությունների, դրանց մարմինների, պետա-

կանակերպ կազմավորումների կամ միջազգային կազմակերպությունների կողմից կատարված պաշտոնական ճանաչման փաստերը, քանզի իրավական առումով միայն վերջիններս կարող են ունենալ իրավական նշանակություն:

Պետությունների և պետականակերպ կազմավորումների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցին անդրադարձնալիս անհրաժեշտ է նշել, որ հայությունն այդ հարցում հաջողություններ է արձանագրել Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում (նահանգային մակարդակով), սակայն Ասիայում և Աֆրիկայում, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ճանաչման գործընթացը չափազանց ոչ արդյունավետ է (փաստացիորեն Ասիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչել են միայն Կիպրոսը և Լիբանանը): Աֆրիկայում Հայոց ցեղասպանության ճանաչման առումով արդի զարգացումները վերաբերում են միայն Եգիպտոսի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելուն առնչվող ոչ պաշտոնական հայտարարություններին⁶:

Ինչպես հայտնի է՝ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը հիմնականում կրում է խորհրդարանական բնույթ: Սույն աշխատության հրապարակման օրվա դրությամբ Հայոց ցեղասպանության փաստը պաշտոնապես ճանաչվել է 22 պետության խորհրդարանների կողմից ընդունված բանաձևերի միջոցով⁷: Ավստրիայի Հանրապետու-

⁶ Egyptian Parliament Preparing to Include Armenian Genocide resolution into agenda. <https://www.armenpress.am/eng/news/868383/parlament-egipta-gotovitsya-vnesti-v-povestku-rezolyuciyu.html>

⁷ Առայսօր Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են Կիպրոսի Հանրապետությունը (խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի 1975 թ. ապրիլի 24-ի, (36/1975), 1982 թ. ապրիլի 25-ի (74/1982) և 1990 թ. ապրիլի 19-ի (103/1990) բանաձևեր), Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունը (Ազգային ժողովի 1985 թ. ապրիլի 23-ի բանաձև), Արգենտինայի Հանրապետությունը (խորհրդարանի 1985 թ. ապրիլի 23-ի բանաձև), Ռուսաստանի Ղաշնությունը (Ղաշնային ժողովի Պետական դումայի 1995 թ. ապրիլի 14-ի որոշում), Բելգիայի Թագավորությունը (Սենատի 1996 թ. մարտի 26-ի (1-736/3) բանաձև), Հունաստանի Հանրապետությունը (խորհրդարանի 1996 թ. ապրիլի 25-ի (2397/1996) բանաձև), Լիբանանի Հանրապետությունը (խորհրդարանի

թյան խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական խմբակցությունների համատեղ հայտարարության ընդունման միջոցով⁸, Բուլղարիայի Հանրապետության խորհրդարանն ընդունել է բանաձև՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի՝ առանց ցեղասպանության եզրույթի կիրառման, Սուրբ Աթոռը Հռոմի պապի մի շարք հայտարարություններում հայերի հետ տեղի ունեցածը որակել է որպես ցեղասպանություն:

Ինչպես տեսնում ենք, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման եղանակները միատեսակ չեն: Հաճախ այդօրինակ ճանաչումները կատարվում են օրենսդիր մարմնի կամ դրա պալատներից մեկի կողմից, իսկ իշխանության մյուս թևերը՝ գործադիր և դատական, որպես կանոն, այդ հարցի վերաբերյալ որևէ դիրքորոշում չեն արտահայտում: Արդյունքում՝ պետության արտաքին քաղաքականության համար պատասխանատու մարմինները, մասնավորապես, պետության գլուխը, գործադիր

1997 թ. մայիսի 3-ի բանաձև), Իտալիայի Հանրապետությունը (Պատգամավորների պալատի 2000 թ. նոյեմբերի 16-ի բանաձև), Շվեյցարիայի Համադաշնությունը (Ազգային խորհրդի 2003 թ. դեկտեմբերի 16-ի բանաձև), Կանադան (Համայնքների պալատի 2004 թ. ապրիլի 21-ի բանաձև), Նիդեռլանդների Թագավորությունը (խորհրդարանի 2004 թ. դեկտեմբերի 21-ի բանաձև), Լեհաստանի Հանրապետությունը (Սեյմի 2005 թ. ապրիլի 19-ի (2005-07-13) բանաձև), Վենեսուելայի Բոլիվարյան Հանրապետությունը (Ազգային ժողովի 2005 թ. հուլիսի 14-ի բանաձև), Չիլիի Հանրապետությունը (Սենատի 2005 թ. հունիսի 5-ի բանաձև), Լիտվայի Հանրապետությունը (Սեյմի 2005 թ. դեկտեմբերի 15-ի (2005-12-15) բանաձև), Շվեդիայի Թագավորությունը (խորհրդարանի 2010 թ. մարտի 11-ի բանաձև), Բոլիվիայի Բազմազգ Հանրապետությունը (Պատգամավորների պալատի 2014 թ. նոյեմբերի 27-ի բանաձև (019/2014-2015)), Սենատի 2015 թ. հոկտեմբերի 29-ի բանաձև (122/2014-2015)), Լյուքսեմբուրգի Դքսությունը (Պատգամավորների պալատի 2015 թ. մայիսի 6-ի բանաձև), Բրազիլիայի Հանրապետությունը (Դաշնային Սենատի 2015 թ. մայիսի 21-ի բանաձև (550, DE 2015)), Պարագվայի Հանրապետությունը (Սենատի 2015 թ. հոկտեմբերի 29-ի բանաձև), Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (Բունդեստագի 2016 թ. հունիսի 2-ի բանաձև) և այլ երկրներ, իսկ Ֆրանսիայի Հանրապետությունն ընդունել է օրենք «Հայոց ցեղասպանության ճանաչման մասին» դեռևս 2001 թ. հունվարի 18-ին:

⁸ «Ավստրիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը. խորհրդարանի խմբակցությունները համատեղ հայտարարություն են ընդունել»

<http://www.panarmenian.net/arm/news/191014/>

իշխանության ղեկավարը կամ արտաքին գործերի նախարարությունը մնում են ձեռնպահ տվյալ հարցում, ինչը թույլ չի տալիս տվյալ երկրներում առավել հետամուտ լինել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրին:

Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչումները, ինչպես նշվեց, չեն կարող ուղղակի պարտավորեցնել Թուրքիայի Հանրապետությանը ճանաչել այն, սակայն դրանց առկայությունը չափազանց կարևոր է Հայոց ցեղասպանության եղելության հարցը և որակումը հնարավոր վիճարկման առարկա չդարձնելու համար: Թեև Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած պետությունների թիվն աճում է, այդուհանդերձ, դրա աշխարհագրական ծածկույթը մեծ չէ: Ինչպես արդեն նշել ենք, ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից Հայոց ցեղասպանությունը ճանաչել են միայն երկու տասնյակից ավելի պետություններ: Նշված «սակավաթվությունը» կարող է Թուրքիայի Հանրապետության և այլ կառույցների կողմից շահարկումների առարկա դառնալ, ինչին ականատես դարձանք «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի Համադաշնության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատի վճռում, որում, մասնավորապես, հղում էր կատարվում այն պետություններին, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանության փաստը, մյուս կողմից էլ մեջբերվում էին այն պետությունները, որոնց օրենսդրությամբ ճանաչված ցեղասպանությունների գոյության հերքումը պատժող օրենքը համարվել է հակասահմանադրական⁹: Սրանով դատարանը փաստորեն փորձեց շահարկել Հայոց ցեղասպանության եղելության ոչ միանշանակ ընկալումն աշխարհի տարբեր պետությունների կողմից: Բարեբախտաբար, ՄԻԵԴ-ի Մեծ պալատի վճռով շտկվեց նշված բացթողումը և դատարանն ընդհանրապես չանդրադարձավ Հայոց ցեղասպանության եղելության կամ արարքի որակման հիմնահարցին:

⁹ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 131:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ խորհրդարանական բանաձևերն աչքի են ընկնում իրավական, փաստագրական և ժամանակագրական խայտաբղետությամբ:

Միասնական չեն նշված բանաձևերում Հայոց ցեղասպանության ժամանակագրության հետ կապված հարցերը: Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչող խորհրդարանական փաստաթղթերում հիմնականում հիշատակվում է միայն 1915 թվականը: Մինչդեռ, օրինակ, Լիբանանի, Արգենտինայի և Չիլիի խորհրդարանների պաշտոնական ճանաչման փաստաթղթերում նշված է 1915-1923 թթ., Ռուսաստանի Պետական դումայի որոշման մեջ նշված են 1915-1922 թթ.¹⁰, իսկ Եվրախորհրդարանի բանաձևում՝ 1915-1917 թթ.¹¹:

Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակագրությունը կարևոր հանգամանք է, որովհետև Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915-1923 թթ. ընկած ժամանակահատվածում¹²: Այն իրագործվել է երիտթուրքական վարչակարգի կողմից և շարունակվել քեմալականների օրոք՝ կրելով շարունակական բնույթ:

Կան պետություններ, որոնց կողմից ցեղասպանության իրագործման կոնկրետ ժամանակագրական սահմաններ ընդհանրապես նշված չեն, Հայոց ցեղասպանության ժամանակագրությունը պայմանավորվում է պատմական իրադարձություններով: Օրինակ, «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»¹³ (Լեհաստան), կամ նույնիսկ որևէ ժամանակագրական

¹⁰ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում:

¹¹ Տե՛ս http://www.armenian-genocide.org/Affirmation.152/current_category.7/affirmation_detail.html

¹² Տե՛ս **Барцеров Ю.**, Геноцид армян- преступление по международному праву, **Պողոսյան Ս.**, Հայոց ցեղասպանության պատմություն, Հ. 2-րդ, Երևան, 2008, **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանություն (1876-1920 թթ.), Երևան, 2009:

¹³ Poland Parliament Resolution

http://www.genocide-museum.am/eng/Poland_Parliament_Resolution.php

նշում առկա չէ, այլ միայն հիշատակված է ապրիլի 24-ը՝ որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Իտալիա, Վենետուելա, Հունաստան)¹⁴:

Փաստագրական առումով հատկապես ուշագրավ է Հայոց ցեղասպանության զոհերի թվին անդրադարձը: Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ գրեթե բոլոր բանաձևերում, որոնցում հիշատակված է զոհերի թիվը, խոսվում է մեկից մինչև երկու միլիոն զոհերի մասին¹⁵:

Մյուս փաստագրական հանգամանքը, որը հիշատակվում է պաշտոնական ճանաչման փաստաթղթերում և ունի էական նշանակություն, Հայոց ցեղասպանության իրագործման աշխարհագրությունն է: Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում, հատկապես Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում, սկզբում՝ իշխանության եկած երիտթուրքական պարագլուխների կողմից, այնուհետև շարունակվել է Հանրապետական Թուրքիայի կողմից¹⁶:

Հետաքրքրական է նաև Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման փաստաթղթերում աշխարհագրական տեղանունների օգտագործման հիմնահարցը: Իրավական տեսանկյունից հատկապես մեծ նշանակություն ունի դրանցում «Արևմտյան Հայաստան» հասկացության օգտագործումը: Այս առումով պետք է նշել, որ միայն երկու պետությունների ճանաչման փաստաթղթերում է առկա Արևմտյան Հայաստան բնորոշումը (Ռուսաստանի Դաշնություն և Բոլիվիա)¹⁷:

Փաստագրական առումով ուշագրավ է նաև Հայոց ցեղասպանությունն իրագործած սուբյեկտների հիշատակումը: Ճանաչման փաստաթղթերից շատերում պարզապես նշվում է, որ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել Օսմանյան կայսրու-

¹⁴ Տե՛ս Recognition- <http://www.genocide-museum.am>

¹⁵ Ավելի մանրամասն տե՛ս **Բարսեղյան Լ.**, Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, Երևան, 2004:

¹⁶ Տե՛ս ավելի մանրամասն տե՛ս **Թորիկյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976 թ.:

¹⁷ Տե՛ս Recognition- <http://www.genocide-museum.am>

թյունում՝ առանց իրագործողների մասին տեղեկատվության ներկայացման (Շվեյցարիա, Լիտվա, Սլովակիա): Որոշ պետությունների խորհրդարանների պաշտոնական ճանաչման փաստաթղթերում էլ նշված է. «Հայոց ցեղասպանությունը իրագործվել է Օսմանյան կայսրությունում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների՝ երիտթուրքերի կողմից» (Գերմանիա, Վենեսուելա)¹⁸:

Անհրաժեշտ է անդրադարձնալ հատկապես Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման հիմնական խոցելիության հիմնահարցերին: Ինչպես հայտնի է, հիմնականում պետությունների մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչվում է խորհրդարանների կամ դրանց պալատների, այն է՝ օրենսդիր իշխանության մարմինների կողմից: Մինչդեռ վերջիններս չեն հանդիսանում արտաքին հարաբերությունների մարմիններ, ի տարբերություն գործադիր իշխանության մարմինների, որոնց դիրքորոշումը, որպես կանոն, առավել պասիվ է, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ հակառակվում է օրենսդրի դիրքորոշմանը: Այսպես, նման իրավիճակ ձևավորվեց Շվեդիայի Թագավորության Ռիգսդակի կողմից 2010 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձև ընդունելուց հետո, որում դատապարտվում էր Օսմանյան կայսրությունում հայերի, ասորիների և Պոնտոսի հույների ցեղասպանությունը¹⁹: Ի պատասխան այս բանաձևի Շվեդիայի այդ ժամանակվա վարչապետ Ֆրեդրիկ Ռեյնֆելդտն իր թուրք գործընկերոջ հետ հեռախոսային զրույցի ընթացքում նշել է, որ «իրեն վշտացրել է, որ խորհրդարանն ընդունել է այդ բանաձեւը: Նա վստահեցրել է թուրք վարչապետին, որ բանաձեւը Շվեդիայի կառավարությանը չի պարտավորեցնում և օրենքի ուժ չունի»²⁰:

Ցավոք, քիչ չէ այն պետությունների թիվը, որոնք հետևել են Շվեդիայի գործադիր իշխանության օրինակին նույնիսկ Հայոց

¹⁸ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Երևան, 2014, էջ 47:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ <http://www.panarmenian.net/arm/news/46319/>

ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևերի ընդունման ձախողման պարագայում: Պետք է նշել, որ նման իրավիճակ էր տիրում ԱՄՆ-ում Ջորջ Բուշ կրտսերի կառավարման տարիներին, երբ հստակորեն նշվում էր, որ ընդունվելիք բանաձևը որևէ պարտադիր ուժ չի կրելու գործադիր իշխանության համար: Նույնիսկ անցյալ տարի ԳՂՀ Բունդեստագի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման ժամանակ, որը փաստացիորեն սատարում էին խորհրդարանական բոլոր ուժերը, ներառյալ կառավարող կուսակցությունների դաշինքը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը և արտաքին գործերի նախարար Ֆրանկ Վալտեր Շտալմայերը գերադասեցին չգտնվել խորհրդարանում բանաձևի քվեարկության ժամանակ՝ բավարարվելով հետագա ձեպագրույցների ընթացքում իրենց դիրքորոշումը ներկայացնելով:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի իրավական նշանակությանն անդրադառնալու համար էական նշանակություն կարող է ունենալ Հայոց ցեղասպանությանն առնչվող ազգային սահմանադրական դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումները: Այս առումով կարող է չափազանց մեծ նշանակություն ունենալ տակավին վերջերս Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի որոշումը: Բունդեստագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև ընդունվելուց հետո մի շարք թուրքամետ կազմակերպություններ ութ հայց ներկայացրեցին Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարան՝ վիճարկելով 2016 թ. հունիսին Բունդեստագի կողմից ընդունված բանաձևը: Սակայն 2016 թ. դեկտեմբերի 19-ին Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը մերժեց ութ հայցերն էլ՝ այն հիմնավորմամբ, որ դիմումատուները չէին կարողացել ներկայացնել բավարար ապացույցներ առ այն, որ խախտվել են վերջիններիս հիմնարար իրավունքները²¹:

²¹ Տե՛ս <http://www.usnews.com/news/world/articles/2016-12-19/german-court-rejects-suits-against-armenian-genocide-vote>

Պետք է նշել, որ պետությունների պաշտոնական ճանաչման փաստաթղթերում առկա են տարատեսակ ուղերձներ, որոնք ընդգծում են ճանաչման գործընթացի իրավական նշանակությունը: Իհարկե, անհրաժեշտ է ընդգծել, որ նշված ուղերձները միատեսակ և միաբովանդակ չեն: Մասնավորապես մի շարք բանաձևերում ընդգծվում է Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու համար (Իտալիա, Շվեդիա, Նիդեռլանդներ)²², որոշ բանաձևերում էլ, Թուրքիայի կողմից ճանաչման փաստը դիտվում է, որպես հայ-թուրքական խաղաղության հաստատման և հարաբերությունների վերականգնման կարևոր նախապայման (Բելգիա, Շվեյցարիա, Գերմանիա)²³: Որոշ երկրների՝ ճանաչման վերաբերյալ բանաձևերում դատապարտվում են Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը, նրա կողմից փաստերի աղավաղման հանգամանքը, ինչը կարող է հանգեցնել նման հանցագործությունների կրկնությանը (Կանադա, Բոլիվիա)²⁴:

Անդրադառնալով պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ պետք է նշել, որ տարբեր պետություններ ուրույն կերպ են ճանաչել և ամրագրել Հայոց ցեղասպանության եղելության և դրա որակման փաստը: Հիմնականում Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է պետությունների օրենսդիր մարմինների կամ դրանց պալատների կողմից պարտադիր ուժ չունեցող բանաձևեր ընդունելու միջոցով: Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած պետություններից միայն երեքն են օրենքով ամրագրել Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը: Դրանք են՝ Ֆրանսիայի Հանրապետությունը՝ 2001 թ.²⁵,

²² Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում:

²³ Տե՛ս Recognition- <http://www.genocide-museum.am>

²⁴ Տե՛ս Բոլիվիայի խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծ է ընդունել-<http://www.panarmenian.net/arm/news/185373/>

²⁵ Տե՛ս **Բարսեղյան Լ.**, Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունն օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան, 2002, էջեր 179-244:

Ուրուզվալի Արևելյան Հանրապետությունը՝ 2004 թ.²⁶, Արգենտինայի Հանրապետությունը՝ 2006 թ.²⁷:

Ֆրանսիայի Հանրապետության կողմից 2001 թ. ընդունված օրենքում մասնավորապես ասվում է, որ «Ազգային ժողովը և Սենատն ընդունել են, իսկ Հանրապետության Նախագահը հրապարակում է հետևյալ օրենքը՝ Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը»²⁸:

Պետք է նշել նաև, որ Հայոց ցեղասպանության եղելությունը և արարքի որակումը տվող բանաձևեր ընդունելուց զատ, մի շարք երկրներում քրեականացված է նաև Հայոց ցեղասպանության հերքումը: Մասնավորապես, նման օրենսդրական կարգավորումներ գործում են Շվեյցարիայում, Սլովակիայում և Հունաստանում: Բելգիայում և Շվեդիայում Հայոց ցեղասպանության ժխտման համար նույնպես քրեական պատասխանատվություն է սահմանված (45 հազար եվրո տուգանքից մինչև 1 տարվա ազատազրկում)²⁹:

2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը ձայների 54 կողմ և 42 դեմ հարաբերակցությամբ Այլատյացության դեմ քրեական օրենք ընդունեց՝ պայքարելով խտրականության, այլատյացության և ռասիզմի դեմ՝ քրեականացնելով Ողջակիզման և մյուս ցեղասպանությունների ժխտումը, որոնք ճանաչվել են միջազգային դատարանների կամ Հունաստանի խորհրդարանի կողմից: Այս օրենքը խախտողները կարող են տուգանվել մինչև 30 հազար եվրոյի չափով և ազատազրկվել մինչև երեք տարի ժամկետով³⁰:

Հունաստանի այս օրենքը բխում էր Եվրամիության 2008 թվականի «Ռասիզմի և այլատյացության դեմ պայքարի մասին»

²⁶ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 35:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 45:

²⁸ Նույն տեղում, էջ 29:

²⁹ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/news/185373/>

³⁰ Տե՛ս **Սասունյան Հ.**, Հունաստանը 3-րդ երկիրն է, որը քրեականացնում է Հայոց ցեղասպանության ժխտումը - <http://www.tert.am/am/news/2014/09/17/Harut-sassounian2/1194142> .

շրջանակային որոշումից, որը կոչ է անում Եվրամիության պետություններին՝ օրենքներ ընդունել՝ ռասիզմը, այլատյացությունը, ցեղասպանության ժխտումը, մարդկայնության դեմ գործած հանցագործությունները և ռազմական հանցագործությունները պատժելու համար³¹:

Ֆրանսիայում նույնպես փորձ կատարվեց օրենսդրական մակարդակով քրեականացնել Հայոց ցեղասպանության ժխտումը, սակայն, ինչպես հայտնի է, Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդն օրենքը ճանաչեց Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությանը հակասող³²: Պետք է նշել, սակայն, որ Ֆրանսիայի Հանրապետության թե՛ նախկին, թե՛ գործող նախագահները նշված որոշումից հետո հստակորեն հայտարարում էին Հայոց ցեղասպանության հերքման համար քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենք ընդունելու իրենց հանձնառության մասին: Արդյունքում՝ Ֆրանսիայի Հանրապետության Սենատի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին ընդունվեց Ցեղասպանությունների և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հերքման համար քրեական պատասխանատվություն սահմանող օրինագիծ՝ 156 կողմ, 146 դեմ ձայների խիստ վտանգավոր հարաբերակցությամբ: Նշված օրինագիծը սույն աշխատության հրապարակման պահին դեռ չէր ստորագրվել Ֆրանսիայի Հանրապետության Նախագահի կողմից և դեռ կարող է վիճարկվել Ֆրանսիայի սահմանադրական խորհրդում:

Գործադիր իշխանության մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ հիմնականում արվել են հայտարարություններ: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ գործադիր իշխանության մարմինները Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում դրսևորում են պասիվություն: Նշված հայտարարություններից երկի թե ամենանշանակալին ԱՄՆ Նախա-

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² See **Sassounian H.**, Greece: Third Country to Criminalize Denial of the Armenian Genocide- <http://asbarez.com/127003/greece-third-country-to-criminalize-denial-of-the-armenian-genocide>.

գահ Ռոնալդ Ռեյգանի հայտարարությունն էր, որում հնչեցվեց «Հայոց ցեղասպանություն» եզրույթը:

Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության եղելության հաստատման և դրա միջազգային իրավական որակման հարցում շարունակում է աննախադեպ մնալ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որում, մասնավորապես, նշվում էր. «Ողջ անցած ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ քրդերի և թուրքերի կողմից՝ օսմանյան իշխանությունների ակնհայտ թողտվությամբ, իսկ երբեմն՝ նաև դրանց ուղղակի աջակցությամբ:

Ելնելով Թուրքիայի կողմից մարդկայնության և քաղաքակրթության դեմ կատարվող այդ նոր հանցագործություններից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դաշնակցային կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչված կլինեն տվյալ կոտորածին»³³:

Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հիշատակված հռչակագրում առաջին անգամ օգտագործվեց **«հանցագործություն մարդկայնության դեմ»** եզրույթը՝ Թուրքիայում հայերի կոտորածը բնորոշելու համար, ինչն այսօրվա չափանիշներով համընկնում է ցեղասպանության հասկացության հետ³⁴:

Նշված փաստաթղթի իրավական բովանդակությունը վերլուծության կենթարկվի ստորև, սակայն դրա ընդունման ձևն իրոք հետաքրքրական է, ըստ երևույթին, միակ դեպքն է, երբ

³³ **Բարսեղյան Լ.**, Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջեր 17-18:

³⁴ Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1 (17), էջ 15:

Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է միաժամանակ մի քանի պետությունների (գործադիր մարմինների) կողմից: Հայոց ցեղասպանության հետագա ճանաչման գործընթացում նման դեպք այլևս չի արձանագրվել:

Անդրադառնալով դատական իշխանության մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին՝ պետք է նշել, որ տվյալ գործընթացն սկսվել է դեռևս 1919-1920 թթ.: Մասնավորապես, 1919 թ. մարտի 8-ին ստեղծվեցին Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական արտակարգ ատյանները՝ տրիբունալները: Սուլթանի հրամանով Առաջին ռազմական արտակարգ ատյանում տեղի է ունենում երիտթուրքական կառավարության ղեկավարների ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը, որն սկսվում է 1919 թ. ապրիլի 28-ին՝ Կոնստանդնուպոլսում և ավարտվում 1919 թ. հունիսի 26-ին, իսկ դատավճիռն արձակվում է հուլիսի 5-ին³⁵:

Երկրորդ ռազմական արտակարգ ատյանի առջև կանգնեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարները և պաշտոնյաները, իսկ Երրորդ ռազմական արտակարգ ատյանում 1919-1920 թթ. տեղի ունեցավ Յոզղաթի, Տրապիզոնի, Բոյուք Դերեի և Խարբերդի տեղահանության ու կոտորածների կազմակերպիչների և կատարողների դատավարությունը³⁶:

Այս ատյանների դատավճիռներում, ըստ էության, փաստվեց Հայոց ցեղասպանության եղելությունը և վերջինիս տրվեց համարժեք իրավական գնահատական:

Հայոց ցեղասպանության փաստը ճանաչվել և որակվել է որպես այդպիսին նաև միջազգային տարբեր կազմակերպությունների և հաստատությունների կողմից: Մասնավորապես Հայոց ցեղասպանության հարցը քննարկվել է դեռևս 1919 թվականի Փարիզի Խաղաղության վեհաժողովում, իսկ այնուհետև՝ Ղաշ-

³⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արմենոցիոը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 140:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 141:

նակից տերությունների և Թուրքիայի միջև կնքված Սևրի հաշտության պայմանագրում, որում ևս ճանաչվեց Հայոց ցեղասպանության եղելության փաստը:

Միջազգային կառույցները Հայոց ցեղասպանության եղելության հարցին անդրադարձան նաև Երկրորդ աշխարհամարտից հետո 1948 թ. Միավորված ազգերի Պատերազմի հանցագործությունների հանձնաժողովի պատրաստած զեկույցի՝ «Պատերազմի հանցագործների դատավարություններից ծագող, մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվություն» շրջանակներում³⁷:

Զեկույցի՝ «Զարգացումներն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում» վերտառությամբ երկրորդ գլխի առաջին մասում, որը կրում էր «Հայերի զանգվածային ջարդերը Թուրքիայում» խորագիրը, նշվում էր, որ «հայերի հանդեպ կատարված ջարդերը Թուրքիայի կողմից դեռ այն ժամանակ որակվում էին որպես մարդկայնության դեմ ուղղված միջազգային հանցագործություն»³⁸: Այնուհետև անդրադարձ էր կատարվում Սևրի պայմանագրի այն հոդվածներին, որտեղ Թուրքիան պարտավորվում էր «Դաշնակից պետությունների իրավասությանը հանձնել Թուրքիայի տարածքում պատերազմի ժամանակ զանգվածային ջարդեր իրականացրած պատասխանատու անձանց»³⁹:

Այսինքն՝ կարելի է ասել, որ այս զեկույցով Պատերազմի հանցագործությունների հանձնաժողովը հաստատում էր այն փաստը, որ հայերի հանդեպ Թուրքիայի կառավարության և իշխանությունների իրականացրած արարքները որակվում են որպես «մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ», որոնք հետագայում ընկան ցեղասպանության հասկացության ներքո:

³⁷ Տե՛ս **Քոչարյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 55:

³⁸ **Барсегов Ю. Г.**, Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, Т. 2, стр. 651.

³⁹ Նույն տեղում:

Հայոց ցեղասպանության եղելության, դրա իրավական որակման իրավաչափության հարցը քննարկվել է նաև ՄԱԿ-ի կառույցների շրջանակներում: Մասնավորապես, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի, Մարդու իրավունքների հանձնաժողովի, Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից պատրաստված՝ 1985 թ. հունիսի 2-ի՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու հարցի վերաբերյալ վերանայված և նորացված գեկույցի» (Բենջամին Ուիթեքերի գեկույց) կետ 24-ում մասնավորապես նշվում էր. «Ցավոք, նացիստների կողմից իրագործվածը 20-րդ դարում կատարված ցեղասպանության միակ օրինակը չէր: Այլ օրինակների թվին, որոնք կարող են որակվել որպես այդպիսին, դասվում են 1904 թ. գերմանացիների կողմից հերերոների կոտորածը, 1915-1916 թթ. հայերի կոտորածը Օսմանյան կայսրությունում...»⁴⁰:

1987 թ. հունիսի 18-ին էլ Եվրախորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»՝ հորդորելով Թուրքիայի կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը⁴¹: 2005 թ. սեպտեմբերի 28-ին Եվրախորհրդարանը վերահաստատեց իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ՝ ընդունելով նոր բանաձև, որի 5-րդ կետում կոչ էր արվում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ դիտարկելով ճանաչումը որպես Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության նախապայման⁴²:

Միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում հետաքրքրական են նաև պետությունների ինտեգրացիոն միավորումների կողմից վերջինիս ճանաչմանն ուղղված նախաձեռնությունները: Այսպես, 2007 թ.

⁴⁰ UN ECOSOC Commission on Human Rights, Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities Thirty-eighth session. Item 4 of the provisional agenda, E/CN.4/Sub.2/1985/6 - 2 July 1985.

⁴¹ Տե՛ս Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), էջ 4:

⁴² Տե՛ս http://www.armenian-genocide.org/Affirmation.341/current_category.7/affirmation_detail.html

նույնքերի 19-ին ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանը, որին անդամակցում են Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը և Վենեսուելան (Զիլին, Բոլիվիան, Կոլումբիան, Էկվադորը և Պերուն՝ կազմակերպության ասոցիացված անդամներ են) ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, որում, մասնավորապես, ասվում էր «ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանը վճռականորեն դատապարտում է 1915-1923 թվականներին Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը, որը խլեց մեկուկես միլիոն մարդկանց կյանք, և իր գորակցությունն է հայտնում հայ ժողովրդի արդար Ղատին, միաժամանակ կոչ է անում Հայոց ցեղասպանությունը դեռ չճանաչած և չդատապարտած կառավարություններին և խորհրդարաններին նմանատիպ որոշում կայացնել»⁴³:

Տարածաշրջանային կազմակերպությունների մակարդակում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում լատինաամերիկյան կազմակերպությունները կարծես թե չեն գիջում իրենց առաջատար դիրքերը: Ի լրումն ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի 2016 թ. սեպտեմբերի 17-ին Անդյան խորհրդարանը ևս ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ ընդունելով համապատասխան բանաձև, որը, Հայոց ցեղասպանությունը ճանաչելուց զատ, դատապարտեց նաև Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը⁴⁴:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումն սկսվել է դեռևս 1915 թ. և շարունակվում է առայսօր: Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացն ազգային մակարդակում կրում է առավելապես խորհրդարանական բնույթ, ինչը տեսականորեն նվազեցնում է ճանաչման միջազգային իրավական նշանակությունը, քանզի վերջիններս չեն դիտվում

⁴³ ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը <http://www.azatutyun.am/a/1591648.html>

⁴⁴ St'u The Andean Parliament Recognized the Armenian Genocide and Condemned Denialism. <http://www.prensaarmenia.com.ar/2016/09/the-andean-parliament-recognized.html?m=1>

որպես արտաքին հարաբերությունների մարմիններ, իսկ դրանց ընդունած բանաձևերը կրում են ոչ պարտադիր իրավական բնույթ: Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացում աճող նշանակություն է ձեռք բերում միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալումը: Թեև օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը չի կարող միջազգային իրավական առումով պարտադիր լինել Թուրքիայի Հանրապետության համար, սակայն այն կարևոր իրավաքաղաքական հիմնապատասխան է ստեղծում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցներ ձեռնարկելու համատեքստում:

2. Հայոց ցեղասպանության ճանաչման արդի փուլի իրավական մարտահրավերները

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի արդի փուլի իրավական մարտահրավերները հիմնականում պայմանավորված են Հայոց ցեղասպանության ժխտողականության հարցում Թուրքիայի Հանրապետության կողմից որդեգրած նոր ռազմավարական մոտեցումներով: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացն իրավական դաշտ տեղափոխելը հանգեցրեց թուրքական ժխտողականության քաղաքականության վերափոխմանը: Թուրքիայի Հանրապետությունը սկսեց առավել ակտիվ ներգրավվածություն ունենալ Հայոց ցեղասպանության իրավական բնույթ կրող գործընթացների ձախողման աշխատանքներում:

Թուրքիայի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի առումով հստակորեն արտացոլված է երկրի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում տեղակայված «1915 թ. իրադարձությունները

և պատմության վերաբերյալ թուրք-հայկական հակասությունը»⁴⁵ բաժնում, որտեղ հստակորեն արտացոլված են Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ պաշտոնական Անկարայի հիմնական դիրքորոշումները:

Սույն ենթաբաժնի շրջանակներում կանդիդատական թուրքական ժխտողականության քաղաքականության միայն իրավական հայեցակետերին: Այսպես, իրավական առումով թուրքական ժխտողականության քաղաքականությունը կարելի է բնորոշել առավելապես որպես **«արարքի որակման ժխտման քաղաքականություն»**, քանզի իրադարձությունների, մարդկային զոհերի թվաքանակի հարցում ժխտողականությունը կրում է **«հարաբերական բնույթ»**: Այսպես, պաշտոնական Անկարան հրաժարվել է Հայոց ցեղասպանության հարցում հայերի ոչնչացման փաստի ամբողջական ժխտումից: Այսպես, օրինակ, վերը նշված փաստաթղթում նշվում է. «Թուրքիան չի ժխտում հայերի տառապանքները, ներառյալ բազում անմեղ կյանքերի խլումը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Այդուհանդերձ, մեծ թվով թուրքեր են մահացել կամ սպանվել Պատերազմին նախորդող տարիներին կամ դրա ընթացքում: Առանց նվազեցնելու ցանկացած խմբի նկատմամբ ողբերգական հետևանքները՝ Թուրքիան առարկում է այս ողբերգության միակողմանի ներկայացումը որպես մեկ խմբի կողմից մյուսի նկատմամբ իրագործած ցեղասպանություն»⁴⁶: Նշված ձևակերպումից պարզ է դառնում, որ հիմնական ժխտողականությունն ուղղված է ոչ թե Հայոց ցեղասպանության եղելության փաստի, այլ վերջինիս որպես **ցեղասպանություն** որակման ժխտման հետ: Կարծես թե թուրքական ժխտողականության քաղաքականության հիմնական իրավական քաղադրատարրը հանգում է ցեղասպանության հանցագործության առավել էական տարրի, այն է՝ հատուկ ցեղասպանական մտադրության (*dolus specialis*-ի) բացակայության հիմնավոր-

⁴⁵ <http://www.mfa.gov.tr/controversy-between-turkey-and-armenia-about-the-events-of-1915.en.mfa>

⁴⁶ http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa

մանը, որը հանդիսանում է ցեղասպանության հանցագործության առավել դժվար ապացուցելի տարրը: Նշված դիրքորոշումը հաստատվում է նշված փաստաթղթում արտահայտված հետևյալ դիրքորոշմամբ, ըստ որի. «Չնայած նրան, որ հիմնահարցն ունի գերակա մարդասիրական հարթություն, դրա իրավական հարթությունը կենտրոնական է նշված բանավեճում: Ցեղասպանությունը հստակ սահմանված հանցագործություն է: Ցեղասպանությունը գեներիկ բնույթի եզրույթ չէ, որը կարող է օգտագործվել որոշ ծանր հրեշագործությունները ոչ պատեհ եղանակով բնորոշելու համար: Դա վատթարագույնն է հանցագործություններից: Այս հարցի վերաբերյալ մեղադրանքները չպետք է թողնվեն քաղաքական նկատառումների քմահաճույքին: Այս առումով խորհրդարանները չպետք է փոխարինեն դատարաններին և վճիռներ կայացնեն: Նույն ոգով, խորհրդարանները և այլ քաղաքական հաստատությունները չպետք է իրավաստեղծման միջոցով քաղաքականացնեն պատմությունը: Նման օրենսդրությունը հատկապես խնդրահարույց է, երբ նյութի շուրջ առկա է պատմաբանների բանավեճ»⁴⁷: Ըստ էության, պաշտոնական Անկարայի մոտեցմանը համահունչ մոտեցում էր արտահայտում նաև Դոդու Փերինչեքը, որը Եվրոպական դատարանում գործի քննության ընթացքում հարցազրույցի ժամանակ հստակորեն նշեց, որ նա չի հերքում հայերի զանգվածային ոչնչացումը, բայց չի կարող որակել այն որպես ցեղասպանություն⁴⁸:

Ընդհանրապես, Փերինչեքի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատի 2013 թ. դեկտեմբերի 17-ի որոշումը կարող էր ոչ միայն դադարեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, այլ ավելին՝ ընդհանրապես իրավական առումով ստվերել Հայոց ցեղասպանության եղելու-

⁴⁷ http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa

⁴⁸ Տե՛ս Verdict on "Perincek vs. Switzerland" case will be announced within 6-8 months <http://www.arminfo.info/index.cfm?objectid=CD0F62D0-A799-11E4-89000EB7C0D21663>

թյան փաստը: Բարեբախտաբար, Եվրոպական դատարանի խնդրո առարկա որոշումը վերջնական չէր, և գործը Շվեյցարիայի նախաձեռնությամբ ներկայացվեց Դատարանի Մեծ պալատի քննությանը, որը փորձեց հնարավորինս շտկել պալատի թույլ տված սխալները՝ վերահաստատեց Դոդու Փերինչեքի նկատմամբ Շվեյցարիայի Համադաշնության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտման փաստը՝ առանց Հայոց ցեղասպանության եղելության և որակման փաստին անդրադառնալու:

Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի շարունակումն ստիպեց Թուրքիային որոշակի փոփոխություններ նախատեսել իր ժխտողականության քաղաքականության ռազմավարության մեջ, որի առավել նոր իրավական դրսևորումները դարձան Հայոց ցեղասպանությունը ճանաչած սուբյեկտների նկատմամբ ճնշումների գործադրումները, որոնք ուղղված էին Հայոց ցեղասպանությունը ճանաչած բանաձևերը չեղարկելուն: Մասնավորապես, 2016 թ. մարտին միջազգային մամուլում տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Բուլղարիայի և Թուրքիայի միջև անդրսահմանային համագործակցության ծրագրերի շրջանակներում վերջինս արգելափակում է համագործակցությունն այն քաղաքների հետ, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը⁴⁹: Թուրքիայի այդ շանտաժը վերաբերում էր մասնավորապես Բուրգասին, Հասկովոյին և Սվիլենգրադին: Ընդ որում, նման արգելքը գալիս էր Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունից: Արդյունքում նշված բուլղարական քաղաքները հայտնվել էին անելանելի վիճակում, քանզի չէին կարող գտնել գործընկեր Թուրքիայից համատեղ ծրագրեր իրագործելու համար, ինչի արդյունքում ստիպված էին հրաժարվել մի քանի միլիոն եվրոյից: Պետք է նշել, որ Էդիբնեի քաղաքապետ Ռեյեփ Գյուրկանն ընդհուպ հայտարարել էր, որ

⁴⁹ Տե՛ս <https://www.euractiv.com/section/regional-policy/news/turkey-blackmails-bulgarian-municipalities-over-the-armenian-genocide/>

«արտաքին գործերի նախարարության դիրքորոշումը վերջնական է»⁵⁰: Բուլղարիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի չեղարկումը նոր երևույթ էր: Դեռևս 2012 թ. Բուլղարիայի Յամբոլ քաղաքի քաղաքային խորհուրդը քսան կողմ, ութ դեմ, երկու ձեռնպահ ձայներով չեղարկել էր դեռևս 2010 թ. հոկտեմբերի 28-ին 28 «կողմ» ձայնով ընդունված Հայոց ցեղասպանության մասին բանաձևը: Հռչակագիրը չեղյալ հայտարարելու մասին առաջարկը ներկայացրել են խորհրդի յոթ անդամներ՝ մի քանի կազմակերպությունների խնդրանքով, որոնց ծրագրերը Թուրքիայի հետ չեն իրականացվել այս փաստաթղթի պատճառով⁵¹:

Այդուհանդերձ, թուրքական նշված ձնշումների առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ Թուրքիան փորձ է կատարում նման շանտաժի միջոցով կանխարգելել Եվրոպական միության կողմից իրականացվող համատեղ ծրագրերը: Նշված պարագայում Եվրոպական միությունը կարող է միայն դադարեցնել համատեղ ծրագրի ֆինանսավորումը, քանի որ նշված կարգի ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է հարևան երկիրը ներկայացնող գործընկերոջ առկայությունը:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք արձանագրել, որ Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի արդի փուլի հիմնական մարտահրավերները պայմանավորված են Ասիայի և Աֆրիկայի երկրներում ճանաչման գործընթացի պասիվությամբ, ճանաչման փաստաթղթերում փաստագրական և իրավաբանական ձևակերպումների խայտաբղետությամբ, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության խորհրդարանային ճանաչման դեմ ուղղված ակտիվ մերժողական քաղաքականությամբ և միջազգային պետական և համայնքային մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչող փաստաթղթերը չեղարկելուն ուղղված պաշտոնական Անկարայի ակտիվ փորձերով:

⁵⁰ <https://www.euractiv.com/section/regional-policy/news/turkey-blackmails-bulgarian-municipalities-over-the-armenian-genocide/>

⁵¹ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/news/129676/>

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԵՐԸ

1. Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը

Հայոց ցեղասպանության դատապարտման և պատշաճ հատուցում պահանջելու համար անհրաժեշտ է հստակեցնել այն իրավական հենքերը, որոնք իրավունք են տալիս պնդելու Հայոց ցեղասպանության եղելության, դրա պատժելիության և համապատասխան իրավական պահանջներ ներկայացնելու իրավաչափության մասին:

Հայոց ցեղասպանությանն առնչվող իրավական խնդիրների համատեքստում ամենաբարդ հիմնախնդիրներից է, այսպես կոչված, «*կիրառելի իրավունքի*» *հիմնահարցը*, այլ կերպ ասած՝ ազգային և միջազգային իրավունքի այն նորմերի վերհանման խնդիրը, որոնք պատասխանատվություն են նախատեսում այն հանցագործության համար, որը հետագայում ստացել է «ցեղասպանություն» անվանումը, և որոնք կարող են հիմք ընդունվել Թուրքիայի Հանրապետությանը՝ որպես Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողին պատասխանատվության ենթարկելու պարագայում:

Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը քննարկելիս վերլուծության առարկա պետք է դառնան ոչ թե ցեղասպանության հանցագործության համար *միջազգային իրավական պատասխանատվություն նախատեսող արդի միջազգային և ներպետական իրավակարգավորումները*, այլ *Հա-*

յոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածում գոյություն ունեցածները. Նշված կանխադրույթը չափազանց կարևոր նշանակություն ունի հետագա միջազգային իրավական պահանջները պատշաճ եղանակով ներկայացնելու և տարատեսակ միջազգային և ներպետական ատյաններում ձախողումներից խուսափելու համար:

Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության տեսանկյունից չափազանց մեծ նշանակություն են ներկայացնում մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը գոյություն ունեցած՝ ցեղասպանության հանցագործության կատարումն արգելող միջազգային իրավական նորմերի վերհանումը և դրանց վերլուծությունը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին, թե արդյոք Հայոց ցեղասպանության ժամանակահատվածում գոյություն ունեցել են ցեղասպանությունն արգելող ազգային կամ միջազգային իրավական նորմեր, և եթե՝ այո, ապա որ իրավական աղբյուրներում են դրանք արտացոլվել, ինչպիսի բովանդակություն են ունեցել և դրանց հիման վրա Օսմանյան կայսրությունն ի՞նչ պարտավորություններ է ստանձնել: Գործնական տեսանկյունից չափազանց կարևոր է նաև ցույց տալ, որ Հայոց ցեղասպանության ժամանակ գոյություն ունեցած և ցեղասպանության հանցագործությունն արգելող նորմերը շարունակում են գոյություն ունենալ այսօր:

Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել, այսպես կոչված, «դասական միջազգային իրավունքի» գոյության ժամանակահատվածում, մինչև միջազգային իրավական նորմերի կողիֆիկացման գործընթացի նախաձեռնումը: Ղասական միջազգային իրավունքում գերիշխող իրավական աղբյուրը միջազգային սովորույթն էր: Սովորույթային միջազգային իրավունքի նորմերով էին հիմնականում կարգավորվում պետությունների միջև առկա միջազգային իրավահարաբերությունները, միայն 19-րդ դարի երկրորդ կեսին սկսվեց միջազգային պայմանագրերի թվի զգալի աճ: Հենց միջազգային պայմանագրային բազայի ոչ մեծ լինելն ու սովորույթային նորմերի միջոցով հիմնական միջազգային իրա-

վական հարաբերությունների կարգավորումն են բարդացնում Հայոց ցեղասպանության համար պատասխանատվություն նախատեսող նորմերի վերհանման հիմնախնդիրը:

Սովորութային միջազգային իրավունքի նորմի գոյության ապացուցման համար անհրաժեշտ է երկու փոխկապակցված տարրերի՝ պետությունների պրակտիկայի և *opinio juris*-ի (պետությունների պրակտիկայում առաջացած կանոնի՝ որպես պարտադիր ուժ ունեցողի ճանաչման կանխավարկածի) առկայությունը: Այս երկու տարրերի առկայությունը կարելի է ապացուցել պաշտոնատար անձանց՝ ներառյալ պետությունների ղեկավարների, հայտարարությունների և գործողությունների, մարդասիրական միջամտությունների պրակտիկայի, համանման իրավիճակներում պետությունների նույնօրինակ վարվելակերպի կրկնման երկարատևության և նման պրակտիկայի դեմ որևիցե էական առարկության բացակայության միջոցով:

Ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն, ըստ միջազգային իրավունքի՝ քրեաիրավական բնույթ ունի: Այդ հանցագործության սուբյեկտներ են հանդիսանում ֆիզիկական անձինք: Պետությունը, որպես այդպիսին չի կարող ցեղասպանության հանցագործության համար քրեաիրավական պատասխանատվության սուբյեկտ դիտարկվել: Նշվածը չի նշանակում, որ պետությունը որևէ պատասխանատվություն չի կրում ցեղասպանության իրագործման համար: Ընդհակառակը, պետության պատասխանատվությունն առավել խիստ է, սակայն վերջինս կրում է ոչ թե քրեաիրավական, այլ միջազգային իրավական բնույթ: Պետությունը պատասխանատվություն է կրում ոչ թե ֆիզիկական անձանց կողմից ցեղասպանության հանցագործության հանցակազմը կազմող արարքներ կատարելու, այլ ցեղասպանության չկատարման, դրա կանխարգելման կամ այն կատարած անձանց պատժելու առնչությամբ իր իսկ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունները խախտելու համար:

Հայոց ցեղասպանությունն արգելող միջազգային իրավական նորմերի վերհանման համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է ցեղասպանություն հանցագործությունը՝ *պետու-*

թյունների կողմից ստանձնված միջազգային իրավական պարտավորությունների տեսանկյունից: Եթե դիտարկենք ցեղասպանությունը Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 2-ում ամրագրված քրեաիրավական հանցակազմից դուրս, ապա վերջինս կարելի է բնորոշել որպես *որևէ կայուն և մշտական մարդկային խումբ՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ կանխամտածված արարքներ (սպանություններ, լուրջ մարմնական վնասվածքների կամ մտավոր խեղման պատճառում, կանխամտածված կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք միտված են խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը և այլն) չկատարելու, դրանք կանխարգելելու կամ դրանց համար պատժելու պարտավորություն:* Եթե դիտարկենք ցեղասպանությունը պետության միջազգային իրավական պարտավորության տեսանկյունից, ապա ակնհայտ կդառնա, որ նշված երևույթը գոյություն է ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի և նույնիսկ «ցեղասպանություն» եզրույթի ի հայտ գալուց շատ ավելի վաղ:

Եթե ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկենք մի շարք իրադարձություններ, ինչպիսիք են Հին Սպարտայում հիլոտների պարբերական զանգվածային ոչնչացումը, Բարդուղիմեոսյան գիշերը, միջնադարյան ինկվիզիցիայի որոշ դրսևորումներ, ապա դրանք ոչ այլ ինչ են, քան ցեղասպանության հանցագործության դրսևորումներ:

Այդուհանդերձ, ցեղասպանությունը ոչ բոլոր ժամանակաշրջաններում է դիտվել իբրև իրավունքով պատժելի արարք: Հին աշխարհում և նույնիսկ միջնադարում ցեղասպանության քաղաքականությունը, ըստ էության, արգելված չէր: Միայն մարդու անօտարելի իրավունքների հայեցակարգի երևան գալը և դրա ամրագրումը նորմատիվ փաստաթղթերում էական ազդեցություն ունեցան ազգային և միջազգային իրավունքի էության և բովանդակության վերաիմաստավորման վրա: Այդ փոփոխությունների արդյունքում ցեղասպանության, այսինքն՝ որևիցե ռասայական, ազգային, կրոնական կամ էթնիկական խումբ ամբողջովին կամ մասնակիորեն որպես այդպիսին ոչնչացնելուն

ուղղված կանխամտածված արարքների իրագործման պրակտիկան, նախ սկսվեց դիտվել իբրև բացասական, անընդունելի, իսկ հետագայում՝ արգելված և միջազգային իրավունքով պատժելի:

Արդեն 18-րդ դարավերջից սկսեցին ի հայտ գալ ցեղասպանությունն արգելող՝ ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի սահմեքը: Միջազգային իրավունքի սովորութային նորմի ձևավորումը հարաբերականորեն երկար ժամանակահատված պահանջող գործընթաց է: Այսպես, օրինակ, եթե ցեղասպանությունն արգելող սովորութաիրավական նորմերն սկսեցին ի հայտ գալ դեռևս 18-րդ դարի վերջում, ապա դրանց ձևավորման գործընթացը վերջնականորեն ավարտվեց միայն 19-րդ դարի երկրորդ կեսին՝ ընդգրկելով առնվազն մեկ դար:

Այն փաստը, որ ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմերը վերջնականորեն ձևավորվել են 19-րդ դարի երկրորդ կեսին, հաստատվում է հսկայական քանակությամբ միջազգային իրավական փաստաթղթերով, պաշտոնական հայտարարություններով և դասական միջազգային իրավունքի գոյության ժամանակահատվածում իրականացված մարդասիրական միջամտությունների պրակտիկայով:

Այսպես, 1774 թ. հուլիսի 21-ի Քյուչուք Քայնարջայի պայմանագիրն սկիզբ դրեց միջազգային իրավունքում մարդասիրական միջամտությունների դարաշրջանին: Տվյալ պայմանագրի հողված 7-ը ճանաչեց Ռուսական կայսրության իրավունքը՝ սատար կանգնել ռուսական ուղղափառ եկեղեցու բոլոր հետևորդներին և տարածականորեն բոլոր ուղղափառ հպատակներին (բուլղարներին, հույներին): Նշված պայմանագրի հողված 16-ի համաձայն՝ Մոլդավիան, Վալախիան և Սերբիան դարձան այդ իրավունքից ուղղակի և անմիջական օգտվողներ: 1774-1856 թթ. ընթացքում Ռուսաստանը թուրքիայում ակտիվորեն օգտվել է մարդասիրական միջամտության իր իրավունքից, թեև սահմանափակվելով ուղղափառ քրիստոնյաների պաշտպանությամբ: Կարելի է ասել՝ Քյուչուք Քայնարջայի պայմանագրի կնքման պահից, ինչպես նշում է Վ. Տատրյանը, միջազգային իրավունքում ի

հայտ եկավ սովորույթ, որն անվանվեց մարդասիրական միջամտություն (l'intervention d'humanite)⁵²:

Որակապես նոր մակարդակի մարդասիրական միջամտության ինստիտուտը բարձրացավ Հունաստանի անկախության պատերազմի (1821-1830 թթ.) ընթացքում և դրան հաջորդող տարիներին: Այսպես, օրինակ, 1840 թ. ԱՄՆ նախագահը պետքարտուղարի միջոցով միջամտեց ի պաշտպանություն Օսմանյան կայսրությունում հետապնդվող՝ Հրոդոսի և Դամասկոսի հրեաների⁵³:

Փարիզի պայմանագրի կնքումից հետո Ռուսական կայսրությունն ըստ էության զրկվեց Օսմանյան կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների օգտին միջամտելու մենաշնորհից: Մարդասիրական միջամտությունների հարցում առավել ակտիվ դարձան եվրոպական տերությունները, մասնավորապես Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Այդ միտման վառ ապացույց է Սիրիայում և Լիբանանում քրիստոնյա մորոնիների պաշտպանությանն ուղղված մարդասիրական միջամտությունը⁵⁴:

1860 թ. մահմեդական դրուզերը սանձազերծեցին քրիստոնյա մորոնիների լայնածավալ կոտորած այդ ժամանակ Օսմանյան կայսրության մաս կազմող Սիրիայում և Լիբանանում: Եվրոպական երկրները միջամտություն իրականացրին՝ իրենց գործողություններն անվանելով մարդասիրական 1860 թ. օգոստոսի 3-ի Փարիզի արձանագրության մեջ: Սիրիայում և Լիբանանում քրիստոնյաների պաշտպանությանն ուղղված միջամտությանը վերաբերող՝ եվրոպական տերությունների և Թուրքիայի միջև

⁵² Տե՛ս **V. N. Dadrian**, Genocide as a problem of National and International Law. The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications //Yale Journal of International Law, 1989, Vol. 14, № 2, p. 233:

⁵³ Տե՛ս նույն տեղում:

⁵⁴ Տե՛ս սույն աշխատության շրջանակներում չենք անդրադառնում ժամանակակից միջազգային իրավունքում մարդասիրական միջամտությունների իրավաչափության հարցին: Տվյալ աշխատանքի շրջանակներում մեջբերվող միջազգային մարդասիրական միջամտությունների դեպքերի հիշատակումը սոսկ նպատակաուղղված է ցեղասպանության երևույթի արգելվածության հիմնավորմանը՝ մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը:

կնքված «Սիրիայում խաղաղության վերականգնմանը և քրիստոնյաների պաշտպանությանն ուղղված» արձանագրության մեջ զուգակցվում էին «կարգուկանոնի» վերականգնման և «կրտորածներից» քրիստոնյաների պաշտպանության նպատակները⁵⁵:

Ցեղասպանության հանցագործության միջազգային հակաիրավականության մասին են վկայում նաև 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի՝ պետությունների գլուխների և այլ պաշտոնատար անձանց պաշտոնական հայտարարությունները: Այսպես, օրինակ, 1902 թ. ԱՄՆ պետքարտուղարը «հանուն մարդասիրության» բողոք ներկայացրեց Ռումինիային ընդդեմ այդ երկրում հրեաների հետապնդումների՝ նշելով, որ իր կառավարությունը «չի կարող լինել այդպիսի միջազգային իրավախախտումների լուռ մասնակից», իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը 1904 թ. Կոնգրեսին իր ուղերձում Ռուսաստանում Քիչնկյան պոգրոմների և «հայերի սիստեմատիկ և տևական ճնշման» առնչությամբ հայտարարեց, որ «գոյություն ունեն որոշ հանցագործություններ, որոնք կատարվում են հսկայական ծավալներով և այնպիսի աննկարագրելի դաժանությամբ, որ կասկած է առաջանում առ այն, թե արդյոք մեր ակնհայտ պարտականությունը չէ ընդդիմանալ, առնվազն դատապարտել կատարվածը և մեր համակրանքն արտահայտել նրանց, ում պատճառվել են այդ տառապանքները»⁵⁶: Ներկայացվածն ընդամենը սիստեմատիկորեն հետապնդվող ազգային, կրոնական, էթնիկական և այլ խմբերի պաշտպանությանն ուղղված մարդասիրական միջամտությունների պրակտիկայի և պաշտոնական հայտարարությունների որոշ դրվագներն էին, սակայն նույնիսկ դրանք թույլ են տալիս խոսել ցեղասպանության քաղաքականության միջազգային իրավական արգելման մասին արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին:

⁵⁵ Տե՛ս **Kuper L.**, Genocide: its political use in the twentieth Century, New Haven CT, 1982, p. 20:

⁵⁶ Նույն տեղում:

Թեև դասական միջազգային իրավունքի հիմնական աղբյուր էր հանդիսանում միջազգային սովորույթը, այդուհանդերձ, նշված ժամանակաշրջանում գոյություն ունեցած սակավաթիվ միջազգային պայմանագրերում ևս հայտնաբերվում են տարատեսակ նշումներ ցեղասպանության հանցագործության արգելվածության վերաբերյալ: Նման պայմանագրային նորմերի վառ օրինակ է, մասնավորապես, 1878 թ. Բեռլինի պայմանագիրը:

1878 թ. Բեռլինի պայմանագրով հաստատվեց որոշակի կրոնական խմբերի հետապնդումն արգելող միջազգային սովորութաիրավական նորմերի գոյությունը՝ ճանաչվեցին հավասար իրավունքներ օսմանյան բոլոր հպատակների համար՝ անկախ կրոնից կամ դավանանքից (հոդված 62): Բեռլինի պայմանագիրը համանման պարտավորություններ սահմանեց նաև այլ պետությունների՝ Բուլղարիայի (հոդված 5), Չերնոգորիայի (հոդված 27), Սերբիայի (հոդված 35) և Ռումինիայի (հոդված 44) համար: 1878 թ. Բեռլինի պայմանագիրը պարունակում էր նաև դրույթներ առանձին մարդկային խմբերի պաշտպանության վերաբերյալ, նրանում, մասնավորապես, սահմանվում էր, որ «Բարձր Դուռը պարտավորվում է իրականացնել, առանց հետագա ձգձգման, տեղական պահանջումներով պայմանավորված բարելավումներ և բարեփոխումներ հայերով բնակեցված շրջաններում և *պաշտպանել նրանց անվտանգությունը չեղքեսներից և քրդերից* (ընդգծումը մերն է): Այն պարբերաբար կտեղեկացնի այդ նպատակով իր կողմից ձեռնարկված միջոցառումների մասին, այն Տերություններին, որոնք կհետևեն դրանց կիրառմանը» (հոդված 61): Հենց նշված հոդվածի դրույթներն էլ ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը հիմք էին հանդիսանում եվրոպական տերությունների բազմաթիվ միջամտությունների համար՝ ի պաշտպանություն հայկական բնակչության, որոնք իրականացվում էին վերջինիս ոչնչացումը կանխարգելելու նպատակով⁵⁷:

⁵⁷ Տե՛ս օրինակ, 19-րդ դարավերջի հայտնի ավստրիացի իրավաբան Ֆ. Լիստը գտնում էր, որ հենց Բեռլինի պայմանագրի հոդված 61-ի դրույթները

Ցեղասպանության համար պատասխանատվության հիմքերը զարգացել են նաև պատերազմի օրենքների և սովորույթների նորմերի կողիֆիկացման շրջանակներում: 1899 և 1907 թթ. տեղի ունեցած Խաղաղության կոնֆերանսներում կողիֆիկացվեցին պատերազմի օրենքները և սովորույթները, որոնց արդյունքում ընդունվեցին մեկ տասնյակից ավելի կոնվենցիաներ՝ պատերազմական գործողություններ բացելու, չեզոքության, ծովային պատերազմի և այլնի մասին:

Հայոց ցեղասպանության տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունեն Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին 1899 և 1907 թթ. Հաագայի կոնվենցիաները, որոնք դրվագորեն անդրադառնում էին պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանությանն ընդհանրապես, սակայն չէին պարունակում կոնկրետ դրույթներ ցեղասպանության արգելման, այսինքն՝ պատերազմի ժամանակ որոշակի մարդկային խմբերի ոչնչացման արգելման վերաբերյալ⁵⁸: Այդուհանդերձ, նույնիսկ այն կցկտուր նորմերը, որոնք ամրագրված էին այդ կոնվենցիայում, ապացուցում են այն, որ որևէ մարդկային խումբ՝ որպես այդպիսին, ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացնելը դիտվում էր, եթե նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում ուղղակիորեն չարգելված, ապա, առնվազն, պատերազմի օրենքներին ու սովորույթներին չհամա-

բացահայտորեն ճանաչեցին մեծ տերությունների իրավունքը՝ «միջամտելու Թուրքիայի ներքին գործերին հայկական շրջանների առնչությամբ՝ ստեղծելով միջազգային իրավական հիմքեր հայերի օգտին 1895 թ. միջամտության համար»: Ավելի մանրամասն տե՛ս **Лист Ф.**, *Международное право в систематическом изложении*. Юрєв (Дерпт): 1909, с. 82-83:

⁵⁸Պետք է ընդգծել, որ միջազգային մարդասիրական իրավունքն ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը չէր պարունակում մանրամասն դրույթներ պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին: Քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ առաջին կոնվենցիան Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիան է: Ավելի մանրամասն տե՛ս **Пикте Ж.**, *Развитие и принципы международного гуманитарного права*. М.: МККК, 1993, с. 54-63; **Гассер Х-П.**, *Международное гуманитарное право*. М.: МККК, 1995, с. 55-58.

պատասխանող, դրանց ո՛չ համահունչ արարք: Անշուշտ, ո՛չ 1899 թ., ո՛չ էլ 1907 թ. Ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների մասին, ո՛չ էլ Հաագայի այլ կոնվենցիաները չէին անդրադառնում որոշակի խմբերի ոչնչացման հիմնախնդրին, ինչը, մեր կարծիքով, ինքնին հասկանալի էր. եթե արգելվում է քաղաքացիական բնակչության՝ ընդհանրապես, ոչնչացումը, ապա ենթադրվում է, որ քաղաքացիական բնակչության մաս կազմող որոշակի մարդկային խմբերի ոչնչացումը ևս արգելված արարք է:

Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության տեսանկյունից, սակայն, առավել մեծ նշանակություն ցայսօր ունեն ոչ այնքան նշված կոնվենցիաների դրույթները, որքան, այսպես կոչված, «Մարտենսի վերապահումը»:

1899 թ. Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիայի մշակման ընթացքում ռուս իրավաբան-միջազգայնագետ Ֆյոդոր Մարտենսը, որպես փոխգիշումային առաջարկ, որը թույլ տվեց առանց հիմնական հողվածների փոփոխման միաձայն ընդունել ողջ կոնվենցիան, առաջարկեց լրացնել կոնվենցիայի նախաբանը հետևյալ դրույթով. «Ներկայումս, սակայն, անհնար եղավ համաձայնության գալ՝ կապված այն դրույթների հետ, որոնք կներառեին գործնականում առաջացող բոլոր դեպքերը:

Մյուս կողմից՝ Բարձր Պայմանավորվող Տերությունների մտադրությունների մեջ չէր կարող մտնել այն, որպեսզի չնախատեսված դեպքերը, գրված դրույթների բացակայության հետևանքով, թողնվեին զորահրամանատարների կամայական հայեցողությանը:

Քանի դեռ հնարավորություն չի ընձեռվել ընդունել պատերազմի օրենքների ավելի ամբողջական ժողովածու, Բարձր Պայմանավորվող Կողմերը տեղին են համարում վկայել, որ իրենց կողմից ընդունված կանոնակարգերով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմողները շարունակում են գտնվել *միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանու-*

թյան և գործողության ներքո, որոնք բխում են քաղաքակիրթ ազգերի միջև հաստատված սովորույթներից, մարդկայնության օրենքներից և հասարակական գիտակցության պահանջներից (ընդգծումը մերն է)»⁵⁹: Ակնհայտ է, որ նշված վերապահումն արդեն իսկ իր գոյությամբ ցեղասպանություն հանցագործության արգելված լինելու լավագույնն ապացույցն է: Դժվար է պատկերացնել, որ 19-րդ դարի վերջին ցեղասպանության քաղաքականությունը՝ իր ցանկացած բնորոշմամբ, կարող էր դիտվել որպես «քաղաքակիրթ ազգերի միջև հաստատված սովորույթներին, մարդկայնության օրենքներին և հասարակական գիտակցության պահանջներին» համապատասխանող արարք:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «մարդկայնության օրենքներ» արտահայտությունը միջազգային իրավական շրջանառության մեջ է մտել դեռևս 1868 թվականին ընդունված Պայթուցիկ և բռնկվող փամփուշտները օգտագործումից հանելու մասին Սանկտ Պետերբուրգի հռչակագրով:

Անշուշտ, ցեղասպանության հանցագործության և հատկապես Հայոց ցեղասպանության արգելված լինելու հարցում անգնահատելի նշանակություն ունի Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որում, մասնավորապես, նշվում էր. «Ողջ անցած ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ քրդերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների ակնհայտ թողտվությամբ, իսկ երբեմն նաև դրանց ուղղակի աջակցությամբ:

Ելնելով Թուրքիայի կողմից *մարդկայնության և քաղաքակիրթության դեմ կատարվող այդ նոր հանցագործություններից* (ընդգծումը մերն է)՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը

⁵⁹ Международное право. Ведение военных действий: Сборник Гаагских конвенций и иных международных документов. 3-е изд., исправленное – М.: МККК, 2001, с. 18.

դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչված կլինեն տվյալ կոտորածին»⁶⁰:

Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հիշատակված հռչակագրում համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ գործածվեց «հանցագործություն մարդկայնության դեմ» եզրույթը «Թուրքիայում հայերի կոտորածը բնորոշելու համար, ինչն այսօրվա չափանիշներով ընկնում է ցեղասպանության հասկացության ներքո»⁶¹: Այս փաստաթուղթը վերջնականորեն հաստատեց ցեղասպանության միջազգային հակաիրավականությունը: Մեր կարծիքով, սույն հռչակագրի հրապարակմամբ ցեղասպանության հանցագործության պատժելիության պաշտոնական ճանաչման գործընթացն իր հաղթական ավարտին հասավ, այսինքն՝ երկար ժամանակ ընդհանուր միջազգային իրավունքի նորմի տեսքով գոյություն ունեցած նորմն ստացավ *expressis verbis* ճանաչում:

Անտանտի երկրները փորձեցին իրագործել Մայիսյան հռչակագրի դրույթները 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի խաղաղության պայմանագրում: Նշված պայմանագիրն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված միջազգային հանցագործությունների վերաբերյալ մի շարք դրույթներ էր պարունակում: Մասնավորապես, պայմանագրի Գլուխ 7-ում՝ «Պատժամիջոցներ» (հոդվածներ 226-230), նախատեսված էին նորմեր պատերազմական հանցագործությունների և «կոտորածների (massacres)», այսինքն՝ հայերի դեմ իրագործած հանցագործության առնչությամբ պատասխանատվության ենթարկելու համար: Այսպես, օրինակ, հոդված 226-ը նախատեսում էր, որ «Թուրքական կառավարությունը ճանաչում է Ղազնակից և Միավորված Տերությունների՝ նշված հանցագործությունները կատարողներին

⁶⁰ «Свет», 13 мая 1915. № 124, տեքստը տպագրված է նաև Геноцид армян в Османской империи: Сб. документов и материалов под ред. М. Г. Нерсисяна. 2-е изд., доп. Ереван, 1983, с. 602-603.

⁶¹ Международное право: Учебник. Отв. ред. В. И. Кузнецов. М.: «Юристъ», 2001, с. 640.

պատասխանատվության ենթարկելու իրավունքը»: Հողված 230-ն իր հերթին պարտավորեցնում էր Թուրքիային «հանձնել Ղաշնակից Տերություններին այդ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց»:

Ինչպես հայտնի է, Սևրի պայմանագիրն այդպես էլ չվավերացվեց, չստեղծվեց նաև հողված 230-ով նախատեսված տրիբունալը, թեև, այսպես կոչված, «զինադադարի ժամանակահատվածում» որոշ պաշտոնատար անձինք հայերի կոտորածների համար պատասխանատվության կանչվեցին ազգային դատարանների կողմից, Օսմանյան կայսրության քրեական օրենսդրության հիման վրա: Չնայած Սևրի պայմանագիրը, քաղաքական կոնյունկտուրայի փոփոխության հետևանքով, ուժի մեջ այդպես էլ չմտավ, այն, ըստ Ջ. Վերհովենի, շարունակում է մնալ Թուրքիայում հայկական բնակչության նկատմամբ կատարված արարքների հակաիրավական լինելու վառ ապացույցը⁶²:

Թեև սույն հետազոտության շրջանակներից դուրս է Սևրի և Լոզանի պայմանագրերի փոխհարաբերակցության վերլուծությունը, այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դժվար է համաձայնել այն հետազոտողների հետ, որոնք գտնում են, որ 1923 թ. Լոզանի պայմանագիրն ամբողջությամբ փոխարինել է Սևրի պայմանագրին, քանի որ վերջիններիս առարկաները, ինչպես նաև մասնակիցները միայն մասամբ էին համընկնում⁶³:

⁶² Տե՛ս **Joe Verhoeven**, «Le peuple arménien et le droit international», in Le crime du silence: le génocide arménien, Ed. Champs Flammarion, Paris, 1984, p. 277 (Original in French, author's translation) cited in Alfred de Zayas. Memorandum on the genocide against Armenians 1915-1923 and the application of the 1948 Genocide Convention, p. 2.

⁶³ Սևրի պայմանագիրն ստորագրվել է Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի (Գլխավոր Ղաշնակից Տերությունների), Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Հիջազի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սերբերի, խորվաթների և սլովենների պետության, Չեխոսլովակիայի (Ղաշնակից տերություններ) և Թուրքիայի կողմից, այն դեպքում, երբ Լոզանի պայմանագրի մասնակիցներ էին Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Սերբերի, խորվաթների և սլովենների պետությունը և Թուրքիան:

Ժամանակակից միջազգային իրավունքում ձևավորված պետությունների պատասխանատվության վերաբերյալ նորմերը սահմանում են, որ պետությունը միջազգային իրավական պատասխանատվություն է կրում ցանկացած միջազգային իրավախախտում կատարելու դեպքում: Ինչպես նշել ենք, համաձայն Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների՝ «Միջազգային հակաիրավական արարքն առկա է այն դեպքում, երբ գործողությունից կամ անգործությունից բաղկացած որևէ վարքագիծ.

ա) վերագրելի է պետությանը՝ համաձայն միջազգային իրավունքի,

բ) իրենից ներկայացնում է տվյալ պետության միջազգային իրավական պարտավորության խախտում» (հոդված 2):

Նշված բնորոշումը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավախախտում է և առաջացնում է Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվությունը, քանի որ այն՝

ա) հանդիսանում է գոյություն ունեցող միջազգային իրավական նորմի հիման վրա ստանձնված միջազգային պարտավորության խախտում,

բ) վերագրելի է Թուրքիայի Հանրապետությանը՝ համաձայն միջազգային իրավունքի:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է վստահորեն հայտարարել, որ պետությունների միջազգային իրավական պրակտիկան, մարդասիրական միջամտությունների ինստիտուտի առաջացումն ու զարգացումը և 19-րդ դարի երկրորդ կեսի միջազգային պայմանագրերի նորմերի վերլուծությունը վկայում են այն մասին, որ որևէ ռասայական, ազգային, կրոնական կամ էթնիկական խումբ որպես այդպիսին ոչնչացնելուն նպատակաուղղված կանխամտածված արարքների ամբողջությունը, որը հետագայում անվանվեց ցեղասպանություն, դիտվում էր որպես ընդհանուր միջազգային իրավունքի նորմերին հակասող և դրանով պատժելի արարք ամենաուշը 19-րդ դարի երկրորդ կեսից: Հետևաբար, Հայոց ցեղասպանությունը, անվանենք այն այդպես թե

ոչ, դիտվում էր որպես ընդհանուր միջազգային իրավունքի նորմերից բխող պարտավորության լրջագույն խախտում և հանգեցնում է Օսմանյան կայսրության միջազգային իրավական պատասխանատվությանը, որը պարտավորված էր և՛ միջազգային իրավունքի, և՛ ներպետական օսմանյան օրենսդրության շրջանակներում, չձեռնարկել իսկ հայ բնակչության հարկադիր տեղահանությունը, չդիմել բռնության կամ թույլ չտալ բռնության իրականացում այդ բնակչության նկատմամբ, չգրկել այդ բնակչությանն իր մշակութային ժառանգությունից և իր նյութական բարիքներից՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ գործողություններն ինչպես կանվանվեին 1894-1923 թթ. ժամանակահատվածի միջազգային իրավունքի հիման վրա:

2. Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործության հայեցակարգի մշակումը և Հայոց ցեղասպանության ազդեցությունը ցեղասպանության հանցագործության հայեցակարգի ձևավորման վրա

1921 թ. մարտի 15-ը չափազանց կարևոր նշանակություն ունի Ռաֆայել Լեմկինի կողմից Հայոց ցեղասպանության հայեցակարգի մշակման համար: Հենց այդ օրը Սողոմոն Թեհլերյանի կողմից Բեռլինի արվարձան Շարլոտենբուրգում գնդակահարվեց Հայոց ցեղասպանության հիմնական պարագլուխ, Օսմանյան կայսրության նախկին վեզիր Մեհմեդ Թալեաթ փաշան: Ռաֆայել Լեմկինը 1921 թ. Լվովի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի նորաթուխ ուսանող էր մամուլից տեղեկացել էր Բեռլինի դատարանի կողմից Թեհլերյանին արդարացնելու որոշման մասին: Լեմկինի իսկ կարծիքով ցեղասպանության միջազգային իրավական արգելման անհրաժեշտության գաղափարն իր մոտ առաջացել է Ս. Թեհլերյանի դատավարության և արդարացման հետ կապված իրադարձությունների առնչությամբ:

Համաձայն Լեմկինի հուշերի՝ դեռևս 1921 թ. լինելով Լվովի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանող բանավեճի է բռնվում իր դասախոսներից մեկի հետ Սողոմոն Թեփեթյանի արդարացման դատավճռի վերաբերյալ: Նա հարցնում է նշված դասախոսին առ այն, թե Թեփեթյանը փորձել է արդյոք, ձերբակալել Թալեաթին հայերի բնաջնջման համար՝ մինչ նրան գնդակահարելու վերաբերյալ որոշում կայացնելը: Դասախոսը պտտացնելով գլուխը՝ առարկում է Լեմկինին՝ հղում կատարելով պետական ինքնիշխանության հայեցակարգին՝ ասելով, մասնավորապես. «Չկար որևէ օրենք, որի հիման վրա նա (Թալեաթը) կարող էր ձերբակալվել... Քննարկենք մի գյուղացու դեպքը, որը հավի ճտեր ունի: Նա մորթում է նրանց, և դա միայն իր գործն է: Եթե դուք միջամտեք, ապա օրինազանցություն կկատարեք»⁶⁴: Լեմկինն ապշելով պատասխանում է. «Սակայն հայերը հավի ճտեր չէին՝ վստահաբար»: Լեմկինը հավելում է. «Ինքնիշխանությունը չի կարող դիտարկվել որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»:

Գերմանացի հետազոտող Շտեֆան Տրոբստի կարծիքով նշված անանուն դասախոսը կարող էր լինել սահմանադրական իրավունքի փորձագետ և Ավստրո-Հունգարական կայսրության և միջպատերազմյան Լեհաստանի հայտնի քաղաքական գործիչ Ստանիսլավ Ստաժինսկին⁶⁵: Շ. Տրոբստի վարկածը Ստանիսլավ Ստաժինսկու վերաբերյալ կարող է հիմնավոր լինել, քանզի վերջինիս մոտեցումներն ինքնիշխանության վերաբերյալ առավելապես սահմանադրաիրավական են, այլ ոչ թե միջազգա-

⁶⁴ **Samantha Power**, *A Problem from Hell: America and the Age of Genocide*. Basic Books 2002, p. 17

⁶⁵ Տե՛ս առավել մանրամասն տե՛ս **Stefan Troebst**, *Lemkin and Lauterpacht in Lemberg and Later: Pre-and Post-Holocaust Careers of Two East European International Lawyers*. Paper given at the Annual Conference 2013 of the Imre Kertész Kolleg at Friedrich Schiller University Jena on “Catastrophe and Utopia: Central and Eastern European Intellectual Horizons 1933 to 1958” in Budapest, 13-15 June 2013. Available at: <http://www.iwm.at/read-listen-watch/transit-online/lemkin-and-lauterpacht-in-lemburg-and-later-pre-and-post-holocaust-careers-of-two-east-european-international-lawyers/>

յին իրավական: Ավելին, դժվար է պատկերացնել, որ տվյալ ժամանակահատվածում միջազգային իրավունքի դասախոսը տեղեկացված չլիներ միջազգային իրավունքում տեղի ունեցած վերջին զարգացումների, ներառյալ՝ Օսմանյան կայսրության առնչությամբ ընթացող գործընթացների մասին:

Ինչպես արդեն նշեցինք, Ռաֆայել Լեմկինը դիտարկում էր այս բանավեճը որպես հետապնդումներից մարդկային խմբերի պաշտպանության հարցում իր հետաքրքրասիրության առաջացման սկզբնակետ: Իրականում նա չափազանց տպավորված էր Թեհլերյանի ազատ արձակման փաստով: Նա, մասնավորապես, նշում էր. «Գործում էր նա, արդյոք, որպես մարդկության խղճի անունից ինքնահռչակ իրավակիրառ պաշտոնյա: Կարող է, արդյոք, մի մարդ նշանակել իրեն որպես արդարություն իրագործող... Ես չգիտեի բոլոր պատասխանները, բայց ես զգում էի, որ աշխարհը պետք է օրենք ընդունի այդ տեսակ ռասայական կամ կրոնական սպանությունների դեմ»⁶⁶:

Ընդհանրապես պետք է նշել, որ Ռ. Լեմկինը նման արդարացի իրավական հաշվեհարդարների կողմնակից էր: Երբ 1926 թ. Փարիզում հրեա անարխիստ Շոլոմ Շվարցբարդը գնդակահարեց Ուկրաինայում հրեական պոգրոմներ կազմակերպած Սիմոն Պետյուրային, Լեմկինը բնորոշեց այս սպանությունը որպես «գեղեցիկ հանցագործություն (a beautiful crime)»⁶⁷: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Շոլոմ Շվարցբարդը ևս արդարացվեց Փարիզի դատարանում երդվյալների կողմից: Ավելորդ չի լինի հիշատակել, որ Ռաֆայել Լեմկինի ցեղասպանության հանցագործության արգելմանն ուղղված ողիսականը ոգեշնչված էր նաև Հենրիկ Սենկևիչի «3^o ռերթաս» երկով, որտեղ մանրամասն

⁶⁶ **Tessa Hofmann**, Drawing Conclusions: Lessons and Effects of the Armenian Genocide in: "Armenological Issues Bulletin" 1(4)2015, Yerevan, YSU Press 2015, p. 19.

⁶⁷ **Cathie Carmichael**, Raphael Lemkin, historians and genocide. In the Routledge History of Genocide ed. by Cathie Carmichael and Richard C. Maguire, Abingdon, Oxon; New York, NY: Routledge 2015, p. 3.

նկարագրված էին Հռոմի կայսր Ներոնի կողմից քրիստոնյաների հետապնդումները:

Ամեն դեպքում պետք է նշել, որ հենց 1921 թ. կայացած բանավեճը մեկնակետ հանդիսացավ Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործությունը համաշխարհային մակարդակում արգելելու համար:

Ռաֆայել Լեմկինի հետագա ջանքերը ցեղասպանության արգելման ուղղությամբ այնուհետև փոխկապակցվեցին Մադրիդում 1933 թ. տեղի ունեցած Միջազգային քրեական իրավունքի միասնականացման գիտաժողովի համար պատրաստված զեկույցի հետ: Անհրաժեշտ է հիշատակել, որ հակասեմիթական հռետորաբանության և լեհական կառավարության մտավախությունների պատճառով Լեմկինը չկարողացավ անձամբ մասնակցել գիտաժողովին՝ բավարարվելով միայն իր զեկույցի տեքստը գիտաժողովին ուղարկելով: Հենց այդ մադրիդյան զեկույցում Ռաֆայել Լեմկինն առաջարկեց բարբարոսության և վանդալիզմի հանցագործությունների հանցակազմերը: Ընդ որում, առաջինն առավելապես համապատասխանում է ժամանակակից ցեղասպանության հանցագործության հանցակազմին, իսկ երկրորդը՝ «մշակութային ցեղասպանությանը»:

Ցեղասպանության պրակտիկայի հետագա արգելման ջանքերն արդեն իսկ փոխկապակցված էին Ռ. Լեմկինի կողմից 1944 թ. հրատարակված «Առանցքի ղեկավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատության հետ: Թեև այդ աշխատությունը դիտարկվում է որպես ցեղասպանության հանցագործության հայեցակարգն ամփոփող հիմնական աշխատությունը, դրա միայն աննշան մասն է նվիրված ցեղասպանության հասկացության բնորոշմանը, որը սահմանվում է հետևյալ կերպ. «*Ազգային խմբերի ոչնչացման նպատակով այդ խմբերի կյանքի էական հիմքերի ոչնչացմանն ուղղված տարատեսակ արարքների համակարգված ծրագիր: Նման ծրագրի նպատակն է ազգային խմբերի քաղաքական, սոցիալական և մշակութային հաստատությունների, լեզվի, ազգային զգացմունքների, կրոնի խարխլումը, ազգային խմբերի տնտեսական գոյության և նման*

խմբերին պատկանող անհատների անձնական անվտանգության, ազատության, առողջության, արժանապատվության և նույնիսկ կյանքերի ոչնչացումը: Ցեղասպանությունն ուղղված է ազգային խմբերի՝ որպես հանրությունների դեմ, և իրագործվող արարքները ուղղված են անհատների, ոչ թե իրենց անձնական կարգավիճակով, այլ որպես ազգային խմբի անդամների դեմ»⁶⁸:

Ինչպես տեսնում ենք, նշված ձևակերպումը համահունչ չէ Ցեղասպանության մասին կոնվենցիայում արտացոլված ցեղասպանության հանցագործության հանցակազմին: Օբյեկտիվ կողմի արարքների շարադրման տեսանկյունից այն ավելի լայն է՝ համադրված Կոնվենցիայում շարադրված արարքների հետ, սակայն միաժամանակ այն շատ ավելի նեղ կանոնակարգումներ է նախատեսում՝ կապված պաշտպանության ներքո գտնվող խմբերի հետ, քանզի Լեմկինն իր սահմանման մեջ ներառում է միայն ազգային խմբերը, մինչդեռ Կոնվենցիայում հիշատակվում են ևս երեք այլ մարդկային խմբեր՝ ռասայական, էթնիկ և կրոնական խմբերը:

Խոսելով ցեղասպանության հանցագործության արգելվածության մասին՝ պետք է հստակորեն տարանջատել ցեղասպանության հայեցակարգը և «ցեղասպանություն» եզրույթը՝ որպես այդպիսին: Թեև ցեղասպանության հանցագործության հայեցակարգը Ռաֆայել Լեմկինի և այլոց կողմից մշակվել է օբյեկտիվ նախադրյալների հիման վրա «ցեղասպանություն» եզրույթն ունի պայմանական բնույթ: Գտնում ենք, որ «ցեղասպանություն» եզրույթն ստեղծելիս Ռաֆայել Լեմկինը գործում էր առավելապես որպես լեզվաբան, այլ ոչ թե իրավաբան, քանզի «ցեղասպանություն» (գենոցիդ) եզրույթը սոսկ տարբեր լեզուներով բավականին երկար ժամանակ գոյություն ունեցած հասկացության, մասնավորապես, գերմաներեն «*Volkermord*», լեհերեն «*Ludobójstwo*» եզրույթների հունավատիմներեն թարգմանությունն է:

⁶⁸ Raphael Lemkin, Axis Rule in Occupied Europe. Laws of Occupation, Analysis of Government Proposals for Redress, the Lawbook Exchange, Clark, New Jersey 2005, p. 79.

Այդուհանդերձ, հետաքրքրական է, որ Լեմկինը մերժեց նաև Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի կողմից առաջ քաշված “the race murder” (ռասայի սպանություն)⁶⁹ հասկացությունը, որն ակտիվորեն օգտագործվում էր վերջինիս կողմից 1915 թ. պատրաստված գեկույցում: Մինչդեռ տվյալ եզրույթը հենց ցեղասպանության եզրույթի անգլերեն թարգմանությունն էր:

Առավել հետաքրքրականը ցեղասպանություն և մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ հասկացությունների միջև փոխհարաբերություններն են, որոնց հնարավոր չէ չանդրադառնալ Ռաֆայել Լեմկինի հայեցակարգի մշակումն ու ձևավորումն ուսումնասիրելու համատեքստում: Հայոց ցեղասպանությունը և Ողջակիզումը նեղ իրավաբանական մեկնաբանության պարագայում դիտարկվել են մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հասկացության պարադիգմի ներքո: Այդուհանդերձ, Ռաֆայել Լեմկինը հրաժարվեց դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգից, քանզի վերջինս բավականին նեղ մեկնաբանություն էր ստացել Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությունում փոխկապակցվելով ռազմական հանցագործությունների հետ⁷⁰, սակայն Լեմկինը մտադրված էր արգելել ցեղասպանությունը ոչ միայն պատերազմի ընթացքում, այլ նաև խաղաղության պայմաններում: Այդ իսկ պատճառով Ռաֆայել Լեմկինը նույնիսկ Նյուրնբերգյան դատարանի կողմից Ողջակիզման դատապարտումից հետո շարունակեց ցեղասպանության հանցագործության արգելմանն ուղղված իր ջանքերը, որոնք հանգեցրեցին Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունմանը, որի հոդված 1-ը սահմանեց, որ ցեղասպանությունը հանցագործու-

⁶⁹ Տե՛ս **Samantha Power**, *A Problem from Hell: America and the Age of Genocide*. Basic Books 2002, p. 6.

⁷⁰ Տե՛ս **Margaret M. de Guzman**, *Crimes against Humanity*. in: the *Routledge Handbook of International Criminal Law*/ ed. by William A. Schabas, Nadia Bernaz, Routledge, London and New York 2011, p. 233.

թյուն է ըստ միջազգային իրավունքի, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղության, թե պատերազմի ժամանակ:

Այդուհանդերձ, Ցեղասպանության հայեցակարգի կողմնակից Ռաֆայել Լեմկինի և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգի հիմնական ջատագով և Լվովի իրավաբանական դպրոցի ներկայացուցիչ Հերշ Լաուտերպախտի միջև ընթացած պայքարն արհեստականորեն բաժանեց նման հանցագործությունների միասնական հայեցակարգը՝ վտանգելով դրանց հետագա կանխարգելումը և դատապարտումը:

Պետք է նշել, որ հենց Լեմկինն իր աշխատություններում չէր պնդում ցեղասպանության՝ որպես նոր հանցագործության հայեցակարգի ձևավորման մասին: Ընդհակառակը, պնդելով տրամագծորեն հակառակ տեսակետն առ այն, որ ցեղասպանությունն ուղեկցել է մարդկությանն իր գոյության ողջ ընթացքում, ցեղասպանության վաղ դեպքերի թվին դասելով, մասնավորապես, «Կարթագենի ոչնչացումը մ.թ.ա. 146 թ., Տիտոսի կողմից Երուսաղեմի ավերումը մ. թ. 72 թ., իսլամի կրոնական պատերազմները, Խաչակրաց արշավանքները, Ալբիգոյցիների և Վալդենսցիների ջարդերը, Երեսնամյա պատերազմում Մագդեբուրգի պաշարումը: Չինգիզ խանի և Լենք Թեմուրի պատերազմներում տեղի ունեցած լայնածավալ կոտորածները»⁷¹:

Անհրաժեշտ է նշել, որ Ռաֆայել Լեմկինը իր «Առանցքի դեկավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատությունում նշված իրադարձությունների շարքում Հայոց ցեղասպանությունն ընդհանրապես չի հիշատակել: Լեմկինն անդրադառնում է այդ հիմնահարցին ավելի ուշ՝ 1946 թ. «the American Scholar» ամսագրում տպագրված իր «Հանցագործություն առանց անվանման» հոդվածում՝ ցեղասպանության տարբեր օրինակներ հիշատակելու համատեքստում: Այդ հոդվածում նա ցեղասպանության

⁷¹ **R. Lemkin**, Axis rule in occupied Europe: laws of occupation, analysis of government; proposals for redress. Washington: Carnegie Endowment for International Peace, Division of International Law, 1944, p. 80 n.3, **Raphael Lemkin**, A crime without a name // American Scholar, Volume 15, № 2 (April 1946), pp. 227-230.

պատմական իրադարձությունների շարքում արդեն իսկ նշում է. «Կարթագենի ոչնչացումը, իսլամի պատերազմներում կրոնական խմբերի ոչնչացումը, Խաչակրաց արշավանքները, Ալբի-գոյցիների և Վալդենսցիների ջարդերը, *առավել վերջերս հայերի կոտորածները* (ընդգծումը մերն է)»⁷²:

Այդուհանդերձ, Լեմկինը Հայոց ցեղասպանության վերաբերյալ առավել հայտնի հիշատակումն արել է 1949 թ.՝ իր հեռուստատեսային հարցազրույցի ընթացքում, որտեղ պատասխանելով CBS հեռուստաընկերության հեռուստամեկնաբան Քուինսի Հոփի հարցին, թե ինչո՞ւ է վերջինս հանգել ցեղասպանության արգելման գաղափարին, Լեմկինը պատասխանում է. «Ես սկսեցի հետաքրքրվել ցեղասպանությամբ, որովհետև այն տեղի էր ունեցել բազում անգամներ: Այն տեղի էր ունեցել հայերի հետ, և հայերից հետո Հիտլերը գործի անցավ»⁷³:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է հստակորեն եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության փորձառությունն էապես ազդել է Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործության հայեցակարգի հիմքերի ձևավորման համար:

3. Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի կիրառելիության հիմնահարցը

Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի միջազգային իրավունքի հարցում կարևորվում է նաև Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հիմնահարցը:

Թեև Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան (այսուհետ նաև՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա) կարելի է դիտել որպես

⁷² Raphael Lemkin, A Crime without a Name. American Scholar, Vol. 15, no. 2 (April 1946), p. 227

⁷³ Raphael Lemkin's Interview is available at <https://www.youtube.com/watch?v=-d992mJ27hs>

մարդու իրավունքների ոլորտում ընդունված առաջին ժամանակակից միջազգային ունիվերսալ փաստաթուղթը (այն ընդունվել է նույնիսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից մեկ օր առաջ), այդուհանդերձ, մոտ կես դար այն գործնականում երբևիցե չէր կիրառվել: Այս կապակցությամբ անհնար է չհիշատակել հայտնի իրավաբան-միջազգայնագետ Գ. Շվարցենբերգերի արտահայտած այն միտքը, որ *«Կոնվենցիան անհրաժեշտ չէ, երբ այն կիրառելի է, կիրառելի չէ, երբ անհրաժեշտ է»*⁷⁴: Կարելի է ասել, որ Կոնվենցիան որպես միջազգային իրավունքի մեռյալ տառ էին դիտում նաև միջազգային կառույցների ներկայացուցիչները: Օրինակ՝ 1978 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու հարցով հատուկ զեկուցող Նիկոդեմ Ռուհաշիանկիկոն ցավով նշում էր, որ *«Կոնվենցիան ի գործու չեղավ ստեղծելու ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու համար անհրաժեշտ պայմաններ, քանի որ Կոնվենցիայի ընդունումից հետո այն խոչընդոտ չդարձավ ցեղասպանության հետագա դեպքերը կանխելու համար»*⁷⁵: Համանման եզրակացության եկավ նաև նույն հարցով ենթահանձնաժողովի նոր հատուկ զեկուցող Բենջամին Ուիթքեթերը, հայտարարելով, որ *«Կոնվենցիան իրենից ներկայացնում է ավելի շուտ բողոք արդեն իսկ կատարված հանցանքների դեմ, քան ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի արդյունավետ կառուցակարգ ստեղծելու փորձ»*⁷⁶:

⁷⁴ См.: **Островский Я. А.**, Практика Международного уголовного трибунала по Руанде – преступление геноцида. Материалы Международного курса по МГП для государственных служащих и представителей академических кругов. – Москва, 16-19 сентября 2003 г. – с. 195.

⁷⁵ **Nicodeme Ruhashyankiko**, Special Rapporteur, Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, U.N. ESCOR, 31st Sess., P 393, U.N. Doc. E/CN.4/Sub.2/416 (1978) p. 440, at 120.

⁷⁶ Preliminary Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, Prepared by Mr. Whitaker,

Այսպիսին էր Ցեղասպանության մասին կոնվենցիային տրված ընդհանուր միջազգային իրավական գնահատականը ընդհուպ մինչև սառը պատերազմի ավարտը, երբ նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում ծավալված իրադարձություններն ստիպեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին 827 և 955 բանաձևերն ընդունելու միջոցով նախաձեռնել երկու միջազգային քրեական ad hoc տրիբունալների ստեղծումը, որոնց առարկայական իրավագործությունը տարածվում էր նաև ցեղասպանության հանցագործության վրա: Գրեթե նույն ժամանակահատվածից սկսվեցին նաև ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու փորձերը: Այսպես, 1990-ական թվականներին մի քանի դատավարություն նախաձեռնվեց ՄԱԿ-ի Միջազգային դատարանում (Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի (1993 թ.)⁷⁷, Հարավսլավիան ընդդեմ ՆԱՏՕ-ի (1999 թ.)⁷⁸, Խորվաթիան ընդդեմ Հարավսլավիայի (1999 թ.)⁷⁹: Կարելի է ասել հենց 1990-ական թթ. սկզբնավորվեց Ցեղասպանության մասին կոնվենցիայի գործնական կիրառումը և նոր մակարդակի վրա բարձրացվեց ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը:

Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948 թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951 թ. հունվարի 12-ին: Ժամանակակից չափանիշներով Ցեղասպանության մասին կոնվենցիան փոքրածավալ փաստաթուղթ է, այն բաղկացած է ընդամենը 19 հոդվածներից, ընդ որում, դրանցից «բովանդա-

Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities, p. 75, at 40, U.N. Doc. E/CN.4/Sub.2/1985/6 (1985).

⁷⁷ Order on Request for the Indication of Provisional Measures in Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Yugoslavia), 1993 I.C.J. (April 8).

⁷⁸ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Yugoslavia v. NATO.), 1999 I.C.J. (April 29).

⁷⁹ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Yugoslavia), 1999 I.C.J. (July 2).

կային» կարելի է համարել միայն I-IX հոդվածները, քանի որ մնացած 10-ն առավելապես տեխնիկական բնույթ են կրում և կարգավորում են Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վերանայելու, ուժի մեջ մնալու ժամկետի, տարածքային կիրառելիության և այլ հարցեր: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակներից մեկն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի, և մեկընդմիջտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստն ու սահմանել կոնվենցիայի բուն էությունը՝ հստակեցնել և մանրամասնել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված արարքը:

Սա էր պատճառը, որ 1948 թ. Ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ-ի անդամ պետություններն ամրագրեցին առաջին հոդվածում, որ *«Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի՝ հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»*⁸⁰:

Փաստորեն տվյալ եզրահանգումը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես հաստատվեց նաև 1951 թ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ, որում նշվում էր, որ *«Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»*⁸¹:

⁸⁰ Մասնավորապես, անգլերեն բնօրինակում օգտագործվում է confirm (հաստատել), իսկ ռուսերենում подтверждают (հաստատում են) բառերը:

⁸¹ Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports (1951), pp. 15-69, See **Diane F. Orentlicher**, «Genocide» in Roy Gutman and David Rieff (eds.), Crimes of War, New York, 1999, pp. 153-157. **Joe Verhoeven**, «Le Crime de Génocide», in Revue belge de droit international, vol XXIV, 1991, pp. 5-26 at 13.

Կոնվենցիայի II հոդվածն առանցքային նշանակություն ունի. այն սահմանում է ցեղասպանության հանցագործության հասկացությունը: Այդ հոդվածի տրամաբանական շարունակություն կարելի է համարել նաև III հոդվածը, որում սահմանված են ցեղասպանության հանցագործության հետ մեկտեղ պատժելի արարքները (ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, ցեղասպանություն կատարելու փորձը և հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ):

Կոնվենցիայի IV-VII հոդվածները նվիրված են ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց պատասխանատվության սկզբունքներին, ցեղասպանության դեմ արդյունավետ պայքարի համար համապատասխան օրենսդրության ընդունմանը և այդ հանցանքի համար արդյունավետ պատժամիջոցների սահմանմանը, ցեղասպանություն կամ Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց դատելու համար իրավազրկությանը և նրանց հանձնմանը:

Կոնվենցիայի VIII հոդվածը նվիրված է ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու ոլորտում Կոնվենցիայի մասնակից պետությունների լիազորություններին: Այսպես, Կոնվենցիայի VIII հոդվածի համաձայն *«Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և III հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և կանխելու համար»:*

Եվ վերջապես, Կոնվենցիայի IX հոդվածի հիմնական առաքելությունն է ապահովել անհրաժեշտ կառուցակարգ մասնակիցների միջև առկա վեճերը լուծելու համար: Նշված հոդվածում, մասնավորապես, սահմանվում է, որ «Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղա-

սպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:

Այսպիսին է Կոնվենցիայի դրույթների բովանդակության համառոտ նկարագրությունը, որի վերլուծությունն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս: Եվ առավել խրթին հարցերից էր մնում կոնվենցիայի շրջանակներում պետությունների պատասխանատվության խնդիրը, որը բավարար մակարդակով մանրամասնված չէր Կոնվենցիայում: Ահա հենց այս հարցերի պատասխանները մենք կփորձենք ներկայացնել սույն աշխատության շրջանակներում:

Միջազգային իրավունքի առանձնահատկություններին անժանոթ անձանց գուցեև զարմանալի թվա այն դրույթը, որ մինչև այսօր միջազգային իրավունքում գոյություն չունի պետությունների միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքներն ու կանոնները սահմանող որևէ պարտադիր գրված փաստաթուղթ, այդուհանդերձ դա ճշմարտություն է, քանի որ գոյություն չունի որևէ միջազգային պայմանագիր, որը պետությունների վրա պարտավորություն կդնեց միջազգային հակաիրավական արարքներ թույլ տված պետությունների նկատմամբ կիրառել որոշակի ընդհանուր նորմեր և սկզբունքներ: Այլ կերպ ասած՝ պետությունների պատասխանատվության, այսպես կոչված «երկրորդային» նորմերն ու սկզբունքները պայմանագրային ամրագրում գրեթե չունեն, բացառությամբ որոշ կցկտուր հիշատակումների առանձին փաստաթղթերում: Նման պայմանագրային փաստաթղթի ընդունումը, անշուշտ, ձեռնտու չէ և ոչ մի պետության, քանի որ մշտապես գերադասելի է միջազգային իրավական պատասխանատվության հարցերը կարգավորել ոչ թե կոշտ պայմանագրային ամրագրում ստացած նորմերի, այլ ձկուն մեկնաբանության ենթարկվող սովորութային միջազգային իրավական նորմերի միջոցով:

Ինչևէ, այս հարցում որոշակի պարզություն մտցրեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան՝ 2001 թ. դեկտեմբերի 12-ին ընդունելով 56/83 բանաձևը Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ⁸², որին հավելվածի տեսքով կցված էր նույն վերտառությամբ մի փաստաթուղթ, որը ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի ավելի քան 50 տարվա աշխատանքի արդյունքն էր և, ըստ էության, պետությունների միջազգային իրավական պատասխանատվության ոլորտում սովորության ճանաչման գոյությունը հավաստող եզակի փաստաթուղթ:

Այդ փաստաթղթում, *inter alia*, որոշակի լուծում ստացավ նաև ցեղասպանության և միջազգային հանցագործություն համարվող այլ հակաիրավական արարքների համար պատասխանատվության հարցը: Այսպես, տվյալ փաստաթղթում նախատեսվեց III բաժինը՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ» վերտառությամբ (հոդվածներ 40, 41), որում ամրագրվեցին հենց միջազգային հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ դրույթները: Տվյալ փաստաթուղթը նախապատրաստողները հրաժարվեցին միջազգային հանցագործություններ եզրույթից՝ այն փոխարինելով ***ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ*** արտահայտությամբ, որը թեև ավելի խրթին է թվում, սակայն առավել հստակ է արտահայտում նշված երևույթի էությունը՝ տարբերելով այն ֆիզիկական անձանց կողմից կատարվող հանցավոր արարքներից: Թեև փաստաթղթում ուղղակի չի խոսվում այն մասին, որ ցեղասպանությունը դիտվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում, ընդամենը սահմանելով հոդված 40-ի մաս 2-ում, որ ***«Նման պարտավորության խախտումը***

⁸² Official Records of the General Assembly, Fifty-sixth Session, Supplement No. 10 and corrigendum (A/56/10 and Corr. 1).

լուրջ է, եթե այն գուգորդված է պատասխանատու պետության պարտավորության կոպիտ կամ սխտեմատիկ չկատարման հետ», այդուհանդերձ, ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից այդ փաստաթղթի վերաբերյալ արված մեկնաբանություններում նշվում է, որ ցեղասպանությունը պետք է դիտվի որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում⁸³:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ տվյալ փաստաթուղթը վերջ դրեց միջազգային իրավունքում հաճախակի արտահայտվող այն կարծիքներին, որ պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել «միջազգային հանցագործություններ» կատարելու համար, իսկ պետության պատասխանատվությունն առավելապես կրում է քաղաքական և ոչ թե իրավական բնույթ: Այսպիսով, վերջ դրվեց նաև ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության անհնարինության վերաբերյալ ասեկտներին:

Այդուհանդերձ, մեր համոզմամբ, նշված զարգացումները չտվեցին պատասխան այն հարցին, թե կարող է ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության խնդիրը իրագործվել Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա: Այլ կերպ ասած, նախագծված է, արդյոք Ցեղասպանության մասին կոնվենցիան պետություններին պատասխանատվության կանչելու համար, թե այն միայն ֆիզիկական անձանց քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու առաքելություն է իրականացնում:

Որոշ հեղինակներ, հիմք ընդունելով այն փաստը, որ ցեղասպանության հանցագործությունն ամրագրող հիմնական ունիվերսալ միջազգային իրավական պայմանագրային գործիքը՝ Ցեղասպանության մասին կոնվենցիան, ընդունվել է 1948 թ. դեկ-

⁸³ Commentaries to the draft articles on Responsibility of States for internationally wrongful acts adopted by the International Law Commission at its fifty-third session (2001), p. 188. Official Records of the General Assembly: Fifty-sixth session: Supplement No. 10 (A/56/10), chp.IV.E.2.

տեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951 թ. հունվարի 12-ին, պնդում են, որ ցեղասպանություն՝ համաձայն միջազգային իրավունքի նորմերի, կարող են դիտվել միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո կատարված արարքները: Հակառակ դեպքում, այս տեսակետի կողմնակիցների կարծիքով, մինչև կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքները որպես ցեղասպանություն որակելը կդիտվի իբրև *nullum crimen sine lege*⁸⁴ սկզբունքի խախտում, քանզի ցեղասպանության հանցագործության հանցակազմն առաջին անգամ ամրագրվել է միայն Ցեղասպանության մասին կոնվենցիայում⁸⁵:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ անհնար է որևէ կերպ համաձայնել այն տեսակետին, որ ցեղասպանության հանցագործության միջազգային հակաիրավականությունը պայմանավորված է բացառապես Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունմամբ, դրա ուժի մեջ մտնելով և փոխշաղկապված է դրա հետ:

Նման մոտեցմանը սատարելու համար այդ տեսակետի կողմնակիցները շատ հաճախ թյուրիմացաբար օգտագործում են այն փաստարկը, որ ցեղասպանության, ինչպես նաև մարդկայնության դեմ ուղղված այլ հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելը տեղի է ունեցել միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալ-

⁸⁴ Չկա հանցագործություն չնշված օրենքում (լատ):

⁸⁵ Տե՛ս, օրինակ, **Gunduz Aktan**, *The Armenian Problem and International Law in Turkkaya Ataov* (ed.). *The Armenians in the Late Ottoman Period*, Ankara, 2001, pp. 264-279, 304-314. Ռուսաստանցի հետազոտող Ս.Կոչոյի կարծիքով՝ «այսօր մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը, մինչև միջազգային իրավունքում «ցեղասպանություն» եզրույթի ի հայտ գալը տեղի ունեցած՝ ազգային կամ կրոնական խմբերի ոչնչացումը որպես ցեղասպանություն որակելու փորձերն անիրավաչափ են (մանավանդ որ կոնվենցիան հետադարձ ուժ չունի): Այդ փաստերը պետք է որակվեն դրանց կատարման պահին գործող օրենքներով և անվիճելիորեն դատապարտվեն միջազգային հանրության կողմից, սակայն ձևականորեն իրավունքի դիրքերից դրանք ցեղասպանություն հանդիսանալ չեն կարող»: Տե՛ս **Кочой С.**, Геноцид: понятие, ответственность, практика // *Уголовное право*, 2001, № 2, с. 10.

ների շրջանակներում: Սակայն գործնականում պատասխանատվությունն իրագործելը դեռ վկայություն չէ այն փաստի, որ ցեղասպանությունը հանցավոր է դարձել նշված ժամանակահատվածից: Մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքները որպես ցեղասպանություն որակելը *nullum crimen sine lege* սկզբունքի խախտում դիտող հետազոտողները շատ հաճախ հաշվի չեն առնում միջազգային իրավունքի մի շարք առանձնահատկություններ: Իրոք, միջազգային իրավունքում չի վիճարկվում այն փաստը, որ առանց միջազգային իրավունքի նորմով որոշակի վարքագծի արգելման իրավաբանական պատասխանատվությունն անհնար է և անթույլատրելի: Այս դրույթն անվիճելիորեն վերաբերում է նաև ցեղասպանության հանցագործությանը: Սակայն նման մոտեցման կողմնակիցները, ինչպես նշվեց, հաշվի չեն առնում մեր մատնանշած այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի աղբյուր՝ պայմանագրային նորմերին զուգահեռ, դիտարկվում են նաև սովորութային իրավական նորմերը, որոնց միջև իրավաբանական ուժի տեսանկյունից ոչ մի տարբերություն գոյություն չունի, ինչը բազմիցս ընդգծվել է ինչպես միջազգային իրավունքի գիտության մեջ, այնպես էլ պրակտիկայում⁸⁶: Հետևաբար, մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը ցեղասպանության հանցագործությունն արգելող նորմերի առկայությունն ապացուցելու գործում պետք է ելնել ոչ միայն պայմանագրային իրավունքի նորմերից, այլ նաև պետությունների՝ կոտորածներից, բնաջնջումներից, զանգվածային և սիստեմատիկ հետապնդումներից որոշակի մարդկային խմբերի պաշտ-

⁸⁶ Տե՛ս **Даниленко Г. М.**, Обычай в современном международном праве, 1988, М. «Наука», с. 180, **Arthur M. Weisburd.**, Customary international law: the problem of treaties // *Vanderbilt journal of transnational law*, 1988, p. 85. Պայմանագրային և սովորութային նորմերի հավասար իրավաբանական ուժի մասին դրույթը բազմիցս հաստատվել է և՛ միջազգային դատական, և՛ արբիտրաժային մարմինների որոշումներում: Տե՛ս, օրինակ, *Rainbow Warrior* (Սոր Ջելանդիան ընդդեմ Ֆրանսիայի) և *Barcelona Traction* ընկերության գործերով որոշումները UN RIAA, vol. XX, p. 27 (1990), at p. 251, para. 75; *Barcelona Traction, Light and Power Company, Limited, Second Phase*, I.C.J. Reports 1970, p. 3 at p. 46:

պանությանն ուղղված և դրանով իսկ ցեղասպանությունն արգելող բավական կայուն պրակտիկայով, որը ներկայացվել է նախորդ ենթաբաժնում:

Պետք է նշել նաև, որ այն տեսակետը, համաձայն որի՝ ցեղասպանությունը դարձել է հանցավոր արարք Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից շատ ավելի վաղ, պաշտպանվում էր նաև բավականաչափ պահպանողական խորհրդային միջազգային իրավունքի գիտության կողմից: Այսպես, հայտնի իրավաբան-միջազգայնագետ Պ. Ս. Ռոմաշկինը դեռևս 1960-ական թվականներին այն տեսակետն էր արտահայտում, թե «ցեղասպանությունը մարդկայնության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է: Բուն «ցեղասպանություն» եզրույթն ի հայտ է եկել ոչ շատ վաղուց՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, և նշանակում է ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական դրդապատճառներով բնակչության առանձին խմբերի բնաջնջում: Սակայն դրանից դեռևս չի բխում, որ այդպիսի հանցագործություններ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը չեն եղել: Ցեղասպանությունն ի հայտ է եկել Երկրորդ համաշխարհային պատերազմը սանձազերծած ֆաշիզմի առաջացումից շատ ավելի վաղ: Սակայն ցեղասպանության հանցագործությունները գերմանական ֆաշիզմի ագրեսիայի ժամանակահատվածում ձեռք բերեցին հսկայական ծավալներ»⁸⁷:

Այս հարցում, մեր կարծիքով, անհնար է չհամաձայնել պրոֆ. Յու. Գ. Բարսեղովի այն պնդմանը, որ «ցեղասպանության հանցագործության միջազգային հակաիրավականության հարցում չի կարելի հիմնվել Ռ. Լեմկինի կողմից 1944 թ. ստեղծված «ցեղասպանություն» եզրույթի կոնվենցիոնալ ամրագրման վրա՝ որպես *sine qua non* պայման: Եթե պայմանավորենք այս հանցագործության հանցակազմի ներքո ընկնող արարքների որակման իրավաչափությունը տվյալ եզրույթի ձևական (ֆորմալ) պայմա-

⁸⁷ Ромашкин П. С., Преступления против мира и человечества, М. «Наука», 1967, с. 264.

նագրային ճանաչմամբ, ապա նման որակման հնարավորությունն ստիպված կլինենք սահմանափակել ոչ միայն Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո կատարված ցեղասպանության ակտերով, այլ նաև այն ստորագրած, վավերացրած կամ դրան միացած պետությունների շրջանակով»⁸⁸:

Եվ, իրոք, եթե առաջնորդվենք Ցեղասպանության մասին կոնվենցիայի՝ որպես ցեղասպանության հանցագործության պատժելիության հարցում «եզակի» փաստաթղթի կանխավարկածով, ապա կստացվի, որ նույնիսկ այսօր՝ այս հետազոտության պատրաստման օրերին, ՄԱԿ-ի անդամ առնվազն 50 պետությունում ցեղասպանությունը «թույլատրելի է», որովհետև վերջիններս Ցեղասպանության մասին կոնվենցիային մասնակից չեն: Ընդ որում, այդ պետությունների ցանկում այնպիսի պետություններ են, ինչպիսիք են Ճապոնիան, մահմեդական ամենամեծ բնակչություն ունեցող պետությունը՝ Ինդոնեզիան, Թայլանդը⁸⁹: Եթե առաջնորդվում ենք նրանով, որ այս կոնվենցիան *sine qua non* պայման է, ապա այսօր այս երկրներում կարելի է ցեղասպանություն իրագործել և չենթարկվել որևիցե պատասխանատվության:

Նշվածից զատ, անշուշտ, անհրաժեշտ է պարզել Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հարցը Հայոց ցեղասպանության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ պատասխան գտնել այն հարցին, թե Կոնվենցիան ամբողջովին կամ դրա առանձին դրույթներ կիրառելի են, արդյոք, Հայոց ցեղասպանության նկատմամբ, թե ոչ, և եթե՝ այո, ապա ինչ հիմքով և ինչ պայմաններում:

⁸⁸ Барсегов Ю. Г., Геноцид армян – преступление по международному праву, М. «XXI век – Согласие», 2000. – с. 62.

⁸⁹ Տե՛ս ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի մասնակիցների թիվը 2016 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմում է 147 պետություն: Կոնվենցիային մասնակից պետությունների ցանկը հասանելի է հետևյալ համացանցային հասցեով https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-1&chapter=4&clang=_en:

Իրոք, եթե դիտենք 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիան իբրև ցեղասպանությունն արգելող միջազգային իրավական նորմ ստեղծող փաստաթուղթ, ապա չի կարելի որպես պատժելի արարք որակել ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլ նաև Ողջակիզումը (որոնք բնորոշելու համար, ըստ էության, ստեղծվել էր ցեղասպանություն եզրույթը) և ցեղասպանության այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի առաջին կեսին: Նման ենթադրությունն ավելի քան անհեթեթ է և չի կարող իրավաչափ դիտվել, քանի որ հենց Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների տեքստային վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրա մշակողները չեն նպատակադրվել միջազգային իրավական նոր նորմ ստեղծել, այլ միայն փորձել են ամրագրել արդեն իսկ գոյություն ունեցող իրավական նորմի առկայության փաստը: Դրա մասին են վկայում հենց Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 1-ի ձևակերպումները, որը, մասնավորապես, սահմանում է, որ «Պայմանավորվող կողմերը հաստատում են *(այլ ոչ թե սահմանում)*»⁹⁰, որ ցեղասպանությունը, անկախ նրանից, կատարվում է խաղաղության կամ պատերազմի ժամանակ, միջազգային իրավունքի նորմերը խախտող հանցագործություն է...»:

Հետևաբար, Կոնվենցիայի հիմնական առաքելությունը գոյություն ունեցող միջազգային իրավական նորմի ունիվերսալ պայմանագրային ամրագրումն է, **այլ ոչ թե նորմի ստեղծումը**⁹¹: Այդ հանգամանքն ընդգծվել է դեռևս 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախապատրաստման ընթացքում: Կոնվենցիայի *Travaux preparatoires*-ը (նախապատրաստման փաստաթղթերը) պարունակում են ցեղասպանության պատմական փաստերի մասին բազմաթիվ նշումներ և հիշատակումներ: Այսպես, օրինակ, պայմանագրի նախապատրաստման ընթացքում Կուբայի ներկայացուցիչը նշել է, որ «պատմությունն ի հայտ է բերել ցեղասպանության անթվելի դեպքեր», Եգիպտոսի

⁹⁰ Ընդգծումը մերն է:

⁹¹ Տե՛ս **Барсеров Ю. Г.**, Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 68-70:

ներկայացուցիչը նշել է, որ «ցեղասպանության դեպքեր են տեղի ունեցել շատ վաղ անցյալում», Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ՝ սրբ Հարթլի Շոուքրոսը (որը, ի դեպ, նաև Նյուրնբերգյան դատավարության բրիտանական գլխավոր մեղադրողն էր) ցեղասպանությունը դիտում էր որպես «միջազգային իրավունքին արդեն իսկ ծանոթ հանցագործություն, որի դեպքերը պատմությունն ի հայտ է բերել դարերի ընթացքում», Արգենտինայի ներկայացուցիչը որակում էր ցեղասպանությունը որպես «հանցագործություն, որը, թեև միշտ հայտնի է եղել, որ գոյություն ունի, սակայն միայն վերջերս է բնորոշվել»⁹²:

Այն հանգամանքը, որ մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ցեղասպանության հանցագործության հանցակազմի կոնկրետ նկարագրություն գոյություն չուներ, ևս չի կարող որպես ցեղասպանությունն արգելող նորմի բացակայություն դիտվել: Միջազգային իրավունքի նորմերի յուրահատկությունն այն է, որ դրանք չեն պարունակում կոնկրետ հանցակազմեր և հաճախ բնորոշում են երևույթներն ընդամենը հիմնական գծերով՝ միջազգային իրավունքի սուբյեկտներին իրավունք ընձեռելով ինքնուրույնաբար որոշել դրանց իրագործման ձևերը: Մասնավորապես, Նյուրնբերգյան դատավարության ընթացքում մեղադրանքի հիմքում ընկան այնպիսի արարքներ, որոնք միջազգային կոնվենցիաներում ուղղակիորեն հանցագործություններ չէին անվանվում, և դրանց կատարման համար անհատական քրեական պատասխանատվություն չէր նախատեսվում: Ա. Ասատուրի կարծիքով՝ «Միջազգային իրավունքի ակնհայտ բացերը հաշվի առնելով՝ Նյուրնբերգյան դատավարության շրջանակներում մեղադրողները մեծ նշանակություն էին հատկացնում այն փաստին, որ Միջազգային ռազմական դատարանի կանոնադրությունում ամրագրված են միջազգային իրավունքի հանրաձանաչ նորմեր, որոնք միջազգային սովորույթների տեսքով գոյություն են ունեցել մինչև Դատարանի ստեղծումը: Այդ նորմերի գոյու-

⁹² Official Records of the Third Session of the General Assembly, Part I, Sixth Committee, statements by Mr. Blanco, p. 23, by Mr. Raafat, p. 500, by Sir Hartley Shawcross, p. 40, by Mr. Bustos Fierro, p. 28.

թյան ապացույց էր հանդիսանում պետությունների կողմից դրանք ճանաչելու և պահպանելու պրակտիկան, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների և ֆորումների՝ միջազգային իրավունքում այդ նորմերի հաստատմանը և ամրագրմանն ուղղված գործունեությունը: Այդ նորմերը դարձել էին ընդհանուր միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս և ճանաչվում էին անկախ պետությունների այս կամ այն կոնվենցիային մասնակցությունից»⁹³: Եթե հանցագործությունների պատժելիության հարցում ելնել միջազգային պայմանագրային նորմերում միջազգային հանցագործությունների կոնկրետ հանցակազմերի ամրագրումից, ապա նույնիսկ այսօր չի կարելի իբրև հանցագործություն դիտել այնպիսի արարքներ, ինչպիսիք են էկոցիդը, որի միջազգային պայմանագրային բնորոշում դեռևս գոյություն չունի, կամ միջազգային ահաբեկչությունը, որի համաշխարհորեն ճանաչված հասկացությունը միջազգային հանրության կողմից դեռևս չի մշակվել և այլն: Գտնում ենք, որ նման մոտեցումը չի համապատասխանում գոյություն ունեցող միջազգային իրավական իրականությանը:

Իհարկե, Հայոց ցեղասպանության ժամանակահատվածում «ցեղասպանություն» (գենոցիդ) եզրույթ դեռևս գոյություն չուներ, այն ի հայտ եկավ միայն 1944 թ. նոյեմբերին լույս տեսած Ռ. Լեմկինի «Առանցքի ղեկավարումը բռնազավթված Եվրոպայում» հայտնի աշխատության մեջ⁹⁴: Ռ. Լեմկինի պնդմամբ, այդ հանցագործությունը (ցեղասպանությունը) հանցագործություն էր առանց անվանման⁹⁵: Պաշտոնական շրջանառության մեջ այս

⁹³ **Асатур А. А.**, Развитие международного уголовного права и деятельность международных уголовных судов // Московский журнал международного права, 2000, № 2 (38), с. 228.

⁹⁴ Տե՛ս **Raphael Lemkin**, Axis rule in Occupied Europe: Laws of Occupation – Analysis of Government - Proposals for Redress, Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944, p. 79-95:

⁹⁵ Իր «Հանցագործություն առանց անվանման» հոդվածում Ռ. Լեմկինն ընդգծում էր. «Մինչ հասարակությունը պաշտպանություն է որոնում անձի դեմ գործած հանցանքներից, առ այսօր որևէ լուրջ ջանք չի արվել՝ ուղղված սպանությունները և միլիոնավոր մարդկանց ոչնչացումը կանխարգելելուն ու պատժելուն: Ակնհայտ է, որ նույնիսկ այդ երևույթի համապատասխան անվանում

Եզրույթն առաջին անգամ մտավ 1945 թ. հոկտեմբերի 18-ի Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի մեղադրական եզրակացություններից մեկի մեջ, այնուհետև ամրագրվելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96/1 բանաձևում և Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Հետաքրքրական է, որ ցեղասպանություն եզրույթն օգտագործվել է նաև Դաշնակից պետությունների վերահսկիչ խորհրդի կողմից ընդունված հմ. 10 օրենքի հիման վրա ամերիկյան դատարանի կողմից Նյուրնբերգում քննված Ալտշտոտերի (Արդարադատության գործով) կայացված վճռում՝ հղում կատարելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վերը նշված բանաձևին⁹⁶:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառման հիմնահարցին չի կարելի չանդրադառնալ վերջինիս փաստական հանգամանքների վերհանման հիմնահարցին և դրանում ցեղասպանության հանցագործության հանցակազմի առկայության հիմնահարցին:

Ցեղասպանության մասին կոնվենցիայում ամրագրված ցեղասպանության հասկացությանը Հայոց ցեղասպանությունը կազմող արարքների համապատասխանության հարցն ուսումնասիրվել և հաստատվել է մի շարք հեղինակավոր իրավաբանական հետազոտություններում, որոնցից, առաջին հերթին, պետք է հիշատակել ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի, Մարդու իրավունքների հանձնաժողովի, Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից պատրաստված՝ 1985 թ. հուլիսի 2-ի «*Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու հարցի վերաբերյալ վերանայ-*

գոյություն չունեն: Ինչ վերաբերում է նացիստների վայրագություններին այս պատերազմում, ապա Ուինստոն Չերչիլը 1941 թ. օգոստոսի իր ելույթում նշում էր, որ «մենք առանց անվանման հանցագործության վկաներ ենք»: Տես **Raphael Lemkin**, A crime without a name, American Scholar, Volume 15, no. 2 (April 1946), p. 227-230:

⁹⁶ **US v. Altstoetter**, III Trials of War Criminals before the Nuremberg Military Tribunals under Control Council Law No. 10 (1951), 954, at 983.

ված և նորացված գեկույցի» (Բենջամին Ուիթեքերի գեկույց) կետ 24-ը, որում մասնավորապես նշված է. «Ցավոք, նացիստների կողմից իրագործվածը 20-րդ դարում կատարված ցեղասպանության միակ օրինակը չէր: Այլ օրինակների թվին, որոնք կարող են որակվել որպես այդպիսին, դասվում են 1904 թ. գերմանացիների կողմից հերերոների կոտորածը, 1915-1916 թթ. հայերի կոտորածը Օսմանյան կայսրությունում...»⁹⁷, ինչպես նաև Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի համար Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի պատրաստած իրավաբանական վերլուծությունը, որում, մասնավորապես, նշված է, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը կազմող փաստական հանգամանքները «հավաքականորեն դիտարկված՝ պարունակում են ցեղասպանության հանցագործության, ինչպես այն սահմանված է Կոնվենցիայում, բոլոր տարրերը, և իրավագետները, քաղաքական գործիչները, լրագրողները և այլ անձինք արդարացված կլինեն՝ շարունակելով դրանք այդպես որակել»⁹⁸: Աշխարհի տարբեր մայրցամաքների պետությունների և միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների (Եվրախորհրդարան, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ և այլն), Սուրբ Աթոռի կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչման և այն որպես ցեղասպանություն որակելու շարունակվող գործընթացը ևս կարևորագույն ապացույցն է նրա, որ վերջինս իր բոլոր հատկանիշներով համապատասխանում է Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 2-ում ամրագրված ցեղասպանության հանցագործության հանցակազմին: Ուստի, ամփոփելով նշվածը՝ կարելի է սուկ արձանագրել, որ տարբեր միջազգային կառույցների ու հեղինակավոր հաստատությունների կողմից հայերի դեմ

⁹⁷ UN ECOSOC Commission on Human Rights, Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities Thirty-eighth session. Item 4 of the provisional agenda, E/CN.4/Sub.2/1985/6, 2 July 1985.

⁹⁸ Legal Analysis prepared for the International center for transitional Justice on the Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to events which occurred during the early twentieth century.

իրագործված արարքները որպես ցեղասպանություն որակելը՝ տարբեր պետությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչմանը զուգահեռ, թույլ են տալիս վստահորեն հայտարարել, որ դրա եղելության փաստը ոչ ոք չի վիճարկում, և եթե գոյություն ունեն որոշ կասկածներ, ապա այդ կասկածները վերաբերում են առանձին մասնավոր դրվագների ու երկրորդական փաստերի, որոնք որևէ կերպ չեն կարող ազդել այդ հանցագործությունն ընդհանրականորեն որպես ցեղասպանություն որակելու համար:

Հայոց ցեղասպանությունը, ինչպես վկայում են բազմաթիվ փաստերը, արխիվային նյութերը, 1915-23 թթ. դիվանագիտական նամակագրությունը, այդ թվում՝ և Թուրքիայի դաշնակիցներ Չեքոսլովակիայի ու Բուլղարիայի և դրանց դիվանագիտական ներկայացուցիչների միջև, իրագործվել է Օսմանյան կայսրության պետական իշխանության կենտրոնական և տեղական մարմինների կողմից կամ դրանց հանցավոր անգործության հետևանքով:

Այդուհանդերձ, Ցեղասպանության մասին կոնվենցիայի Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելիության հարցում գործնական նշանակություն ունեն ոչ այնքան քրեաիրավական բնույթի, ներառյալ արարքի որակման և ֆիզիկական անձանց պատժելիության հիմնահարցերը, այլ պետության միջազգային իրավական պատասխանատվության հիմնահարցը:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության հիմքերի հարցն ուսումնասիրելիս հետազոտողներն այն հանգեցնում են սոսկ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի կիրառելիության հարցին: Ցեղասպանության մասին կոնվենցիան, անշուշտ, կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ հանցագործության համար պատասխանատվություն սահմանող միջազգային իրավական հիմքերի շարքում, սակայն այն, ինչպես նշեցինք, սոսկ այդ հանցագործության միջազգային իրավական արգելվածությունն ամրագրող փաստաթղթերից մեկն է: Նշված

կոնվենցիայից զատ, այսօր ցեղասպանության հանցագործության հանցակազմն ամրագրված է տասնյակ այլ միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում (հոդված 6), նախկին Հարավսլավիայի (հոդված 4) և Ռուանդայի (հոդված 2) համար ստեղծված *ad hoc* միջազգային քրեական տրիբունալների կանոնադրություններում և այլն:

Այս տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հայոց ցեղասպանության իրավական հարթության ոլորտում առկա հետազոտությունների հայեցակարգային խոցելիությունը շատ դեպքերում պայմանավորված է նրանով, որ դրանցում Թուրքիայի Հանրապետության պատժելիության հիմնահարցը փոխկապակցվում է միմիայն կամ գերազանցապես Ցեղասպանության մասին կոնվենցիայի և դրա հնարավոր հետադարձության հետ: Իրականում կոնվենցիայի կիրառելիության և դրա հնարավոր ռետրոակտիվ ուժի վերաբերյալ տեսական բանավեճի մեջ մտնելը ոչ այլ ինչ է, քան իրավական ծուղակ: Հիմնահարցը շատ ավելի խորքային բնույթ է կրում, քանզի Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության կանչելու տեսանկյունից անհրաժեշտ է պարզել ոչ թե այդ իրադարձությունների նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հիմնահարցը, այլ այն, թե Հայոց ցեղասպանության ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունն ուներ, արդյոք, միջազգային իրավական պարտավորություն թույլ չտալու հայ ժողովրդի՝ որպես մշտական և կայուն մարդկային խմբի ոչնչացումը:

Ցեղասպանության մասին կոնվենցիան գրեթե ամբողջությամբ նվիրված է քրեական պատասխանատվության հիմնահարցին. այն կոչված է պատասխանատվության կանչել ֆիզիկական անձանց, այլ ոչ թե պետությանը: Թեև ընդհուպ մինչև 2007 թվականը նույնիսկ որոշ հետազոտողներ պնդում էին, որ

Ցեղասպանության մասին կոնվենցիան հիմք չի տալիս պետությանը պատասխանատվության կանչելու համար⁹⁹:

2007 թ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանը քննելով Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործը՝ վերջնական պատասխան տվեց նշված հարցին: Դատարանի իրավագործությանն առնչվող հիմնական խնդիրը վերաբերում էր այն բանին, թե Ցեղասպանության մասին կոնվենցիան ինչ պարտավորություններ կարող է դնել կողմերի վրա: Դատարանն արձանագրեց, մասնավորապես, որ կողմերի միջև «առկա է» վեճ Կոնվենցիայի IX հոդվածի իմաստի և իրավական շրջանակների կապակցությամբ առ այն, թե վերջինս սահմանափակում է Պայմանավորվող կողմերի պարտավորություններն իրավաստեղծությամբ և քրեորեն հետապնդելու կամ հանձնելու պարտավորություն, թե մասնակից պետությունների պարտավորությունները ներառում են ցեղասպանություն և Կոնվենցիայի III հոդվածում թվարկված արարքներ չկատարելու պարտավորությունը¹⁰⁰:

Դատարանը նշեց, որ Կոնվենցիայով կողմերի վրա դրվող պարտավորությունները պետք է դիտարկել Կոնվենցիայում ամրագրված հասկացությունների սովորական իմաստով՝ դրա օբյեկտի և նպատակի համատեքստում և դրանց լույսի ներքո¹⁰¹: Այն վերաիմաստավորեց Կոնվենցիայի հոդված 1-ի ձևակերպումները, որը, *inter alia*, նախատեսում էր, որ «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը

⁹⁹ Տե՛ս ավելի մանրամասն **Anja Seibert-Fohr**, State Responsibility for Genocide under Genocide Convention, In Paola Gaeta (edt) the UN Genocide Convention – A Commentary, Oxford University Press, 2009, pp. 349-371.

¹⁰⁰ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.58, para. 152 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

¹⁰¹ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.60, para. 160 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:

Դատարանը գտավ, որ «Կոնվենցիայի I հոդվածը, մասնավորապես, կոչված լինելով կանխարգելմանը, ստեղծում է պարտավորություններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք բխում են հաջորդ հոդվածներից: Այս եզրակացությունը հաստատվում է նաև Կոնվենցիայի զուտ մարդասիրական և քաղաքակրթական նպատակով»¹⁰²:

Դատարանն այնուհետև քննության ենթարկեց այն հարցը, թե կրում են, արդյոք, Պայմանավորվող կողմերը ցեղասպանություն չկատարելու պարտավորություն, քանզի նման պարտականությունը հստակ սահմանված չէ Կոնվենցիայի դրույթներում: Դատարանը հանգեց այն դիրքորոշմանը, որ I հոդվածի իրավական բովանդակությունն արգելում է պետություններին ցեղասպանություն կատարել: Նման արգելքը բխում է, նախևառաջ, այն փաստից, որ վերջինս բնորոշում է ցեղասպանությունը որպես «հանցագործություն ըստ միջազգային իրավունքի»: Համաձայնելով նշված սահմանմանը Մասնակից պետությունները պետք է տրամաբանորեն ձեռնամուխ լինեն չկատարել դրանում նկարագրված արարքները: Երկրորդ՝ այն բխում է ցեղասպանության ակտերը կանխարգելելու հստակորեն սահմանված պարտավորությունից: Անհերթթ կլիներ, եթե պետությունները պարտավորություն ստանձնեին կանխարգելելու ցեղասպանությունը, սակայն նրանց չարգելվեր կատարել նման արարքներ իրենց սեփական մարմինների միջոցով կամ այն անձանց կողմից, որոնց նկատմամբ նրանք ունեն այնպիսի հստակ վերահսկողություն, որ իրենց արարքները, ըստ միջազգային իրավունքի, վերագրելի են համապատասխան պետությանը¹⁰³:

¹⁰² Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.60, para. 160 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

¹⁰³ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and

Այլ կերպ ասած, ցեղասպանությունը կանխարգելելու պարտավորությունը անպայմանորեն ենթադրում է ցեղասպանության կատարման արգելքը: Դատարանը նշել է նաև, որ իր եզրակացությունն ամրապնդվում է նաև IX հոդվածի ձևակերպման մեկ հատուկ առանձնահատկությամբ, մասնավորապես, «*ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը*» արտահայտությամբ: Կոնվենցիայի անգլերեն և ռուսերեն բնօրինակների տեքստերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող պատասխանատվությունը պատասխանատվություն է **ցեղասպանության համար** և ոչ թե պատասխանատվություն **ցեղասպանության չկանխարգելման կամ չպատժելու համար**: Դատարանը, արդյունքում, հանգեց այն եզրակացությանը, որ նշված արտահայտության առանձին եզրույթներ, որպես այդպիսին, հաստատում են, որ Պայմանավորվող կողմերը կարող են պատասխանատվության ենթարկվել ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար¹⁰⁴:

Այսինքն, ՄԱԿ-ի միջազգային դատարանը, մեկնաբանելով Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթները, հանգեց այն դիրքորոշմանը, ըստ որի՝ պետությունը Կոնվենցիայի հիման վրա կարող է միջազգային իրավական պատասխանատվության կանչվել ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուն զուգահեռ: Կարծես թե տվյալ տեսանկյունից Հայոց ցեղասպանության համար Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնությունը շարունակող պետությանը Ցեղասպանության մասին կոնվենցիայի հիման

Montenegro), Judgment, I.C.J., p.63, para. 166 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

¹⁰⁴ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.64, para. 168 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

վրա պատասխանատվության կանչելու հարցը տարակարծություններ չի կարող առաջացնել:

Ո՞րն է, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության նկատմամբ կոնվենցիայի կիրառման կամ չկիրառման հիմնական խոչընդոտը: Այն հանգում է կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիմնախնդրին, ինչը կարծես թե արժանացել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի բացասական եզրակացությանը: Այսպես, 2015 թ. մարտի 3-ին կայացված *Խորվաթիան ընդդեմ Սերբիայի* գործով վճռում ՄԱԿ-ի միջազգային դատարանը նշեց, որ «ցեղասպանությունը պատժելու պարտականությունը, ինչպես և [Ցեղասպանության վերաբերյալ 1948 թ.] կոնվենցիայի այլ նյութական դրույթները նախատեսված են եղել ապագայում տեղի ունեցող արարքների նկատմամբ և ոչ թե Երկրորդ համաշխարհային պատերազմի կամ որևէ ժամանակ անցյալում տեղի ունեցած արարքների նկատմամբ կիրառվելու համար»¹⁰⁵: Նշված դիրքորոշումը, սակայն, մեկնաբանման կարիք ունի: ՄԱԿ-ի միջազգային դատարանն անդրադառնալով Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության խնդրին՝ չի տարածել հետադարձությունը կոնվենցիայով ստանձնված նյութական պարտավորությունների վրա, մասնավորապես, իրավացիորեն նշելով, որ Կոնվենցիայի մասնակից պետությունները չէին կարող արդեն իսկ կատարված պարտավորությունների «կանխարգելման» պարտավորություններ ստանձնել: Այդուհանդերձ, ՄԱԿ-ի միջազգային դատարանը որևէ բիծ չի գցում մինչև Կոնվենցիայի ընդունումը նշված արարքի արգելվածության և ընդհանուր միջազգային իրավական նորմերով դրա պատժելիության կամ կոնվենցիայից դուրս պետությունների ստանձնած պարտավորությունների վրա: Ցեղասպանության հանցագործության միջազգային իրավական պատժելիության և Ցեղասպանության կոնվենցիայի սկզբունքների միջազգային սովորութային բնույթը հաստատվել է դեռևս 1951 թ. ՄԱԿ-ի միջազգային դա-

¹⁰⁵ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Serbia), 2015 I.C.J.-unreported, ¶97.

տարանի խորհրդատվական եզրակացությամբ: Հետևաբար, Ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության անթույլատրելիությունը դեռևս չի նշանակում, որ դրա ընդունումից առաջ կատարված որևէ արարք որպես ցեղասպանություն որակելը պետք է անիրավաչափ համարել:

4. Հայոց ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության իրավաչափության վերլուծություն

4.1. Հայոց ցեղասպանությունը կազմող արարքները թուրքիայի Հանրապետությանը վերագրելու անհրաժեշտ վավերապայմանների վերլուծություն

Ընդհանրապես խոսելով պետության պատասխանատվության մասին՝ պետք է պարզենք, թե որ արարքների համար այն կարող է պատասխանատվության ենթարկվել: Պետությունը, ըստ էության, կարող է գործել միայն իր պետական ապարատի և իր վերահսկողության տակ գտնվող կառույցների և անձանց միջոցով: Այդ իսկ պատճառով պետությունների պատասխանատվության անկյունաքարային դրույթներից մեկն այն է, որ պետության յուրաքանչյուր մարմնի արարք պետք է դիտել որպես այդ պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի, և, հետևաբար, եթե այն իրենից ներկայացնում է պետության միջազգային պարտավորության խախտում, ապա պետության պատասխանատվության հարց է առաջացնում:

Այս խնդիրը, միգուցե, առաջին հայացքից երկրորդական և ոչ անհրաժեշտ կթվա, սակայն կարևորագույն նշանակություն ունի Հայոց ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ, դրա համար բավարար չէ սոսկ ցեղասպանության եղելության փաստի ապացուցումը, այլ պետք է ապացուցել, որ այն իրա-

գործվել է Օսմանյան կայսրության պետական մարմինների կողմից, դրանց մասնակցությամբ կամ թողտվությամբ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է որոշել, ընդ որում՝ ցեղասպանության յուրաքանչյուր դրվագի համար առանձին, թե արդյոք 1915-1923 թթ. տեղի ունեցած ցեղասպանության ակտերը կատարվե՞լ են այդ ժամանակ Օսմանյան կայսրության գործող մարմինների կարգավիճակ ունեցող անձանց կամ կազմավորումների կողմից, թե՛ ոչ:

Ինչպես արդեն նշեցինք, պետությունը պատասխանատվություն է կրում իր բոլոր մարմինների, ներառյալ զինված ուժերի արարքների համար, սակայն հայտնի է, որ Հայոց ցեղասպանությանը մասնակցություն են ունեցել նաև բազում այլ, այսպես կոչված, կիսապետական կամ իբր-պետական կազմավորումներ, որոնցից կարելի է մատնանշել, մասնավորապես, թուրքական և քրդական ռազմականացված խմբավորումները: Կարող են, արդյոք, դրանց արարքները վերագրելի լինել Օսմանյան պետությանը, և եթե՛ այո, ապա ինչ պայմանների ապահովման պարագայում: Նման խնդրի առաջ, մասնավորապես, կանգնեց ՄԱԿ-ի միջազգային դատարանը Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործով որոշում կայացնելիս, քանի որ անհրաժեշտ էր պարզել, թե կարող է, արդյոք, Սերբիան պատասխանատվություն կրել Սրեբրենիցայի տարածքում «Սկոպայիոններ» անունով հայտնի ռազմականացված աշխարհագրայինների արարքների համար:

Այս հարցում դատարանը հավատարիմ մնաց իր դեռևս 1986 թ. *Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով (Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) որոշման* մեջ ամրագրված դիրքորոշմանը, համաձայն որի՝ անձինք, անձանց խմբերը կամ կազմավորումները կարող են, միջազգային պատասխանատվության իմաստով, հավասարեցվել պետության մարմիններին, եթե նույնիսկ նման կարգավիճակը չի բխում ներպետական իրավունքից, պայմանով, որ այդ անձինք, անձանց խմբերը կամ

կազմավորումները փաստացի կերպով գործել են պետությունից «լիակատար կախվածությամբ»¹⁰⁶:

Ներկայացված փաստերը գնահատելիս հիմք ընդունելով այս մոտեցումը՝ Ղատարանը հանգեց այն եզրակացության, որ «Սկորպիոնները» չեն հանդիսացել «Սերբիայի ներքին գործերի նախարարության ստորաբաժանում» և 1995 թ. կեսերին չեն դիտվել որպես պատասխանողի *de jure* մարմիններ: Ուստիև, Ղատարանը գտավ, որ Սրբերենիցայում տեղի ունեցած ցեղասպանության ակտերը չեն կարող վերագրվել պատասխանողին՝ իր մարմինների կամ դրանից ամբողջովին կախված անհատների և կազմավորումների կողմից կատարված լինելու հիմքով և, հետևաբար, չեն կարող հանգեցնել պատասխանողի միջազգային պատասխանատվությանը:

Գտնում ենք, որ տվյալ առումով Հայոց ցեղասպանության և Սրբերենիցայում տեղի ունեցած ցեղասպանության փաստական հանգամանքները, անշուշտ, զգալիորեն տարբերվում են և Օսմանյան կայսրության մարմինների ներգրավվածության աստիճանը շատ ավելի բարձր է եղել: Սակայն նույնիսկ, եթե հիպոթետիկ կերպով ենթադրենք, որ միջազգային իրավունքի տեսանկյունից հնարավոր չի լինի ապացուցել Օսմանյան կայսրության մարմինների մասնակցությունը Հայոց ցեղասպանության մաս կազմող արարքներին (ինչն ինքնին անհեթեթ է), դա որևիցե կերպ չի կարող ազդել Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողի պատասխանատվության վրա, քանի որ պետական մարմինների արարքների համար պատասխանատվությունը թեև պետությունների միջազգային իրավական պատասխանատվության առանցքային, բայց ոչ միակ հիմքն է:

Միջազգային հակաիրավական արարքների, այդ թվում՝ ցեղասպանության համար պետությունների պատասխա-

¹⁰⁶ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.140-141, para. 392 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

նատվության ժամանակակից սկզբունքները նախատեսում են պատասխանատվության ևս մեկ կարևոր հիմք: Պետությունը պատասխանատվության է ենթարկվում նաև այն պարագայում, երբ ուղղորդում է այլ կազմավորումների կամ անձանց միջազգային հակաիրավական արարքները կամ վերահսկողություն է իրականացնում դրանց նկատմամբ: Այս հարցը, մեր կարծիքով, կարող է սկզբունքային նշանակություն ունենալ Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու համար, քանզի, ինչպես արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության մաս կազմող արարքների մի ստվար խումբ իրագործվել է այնպիսի կառույցների կողմից, որոնք կամ իբր-պետական կամ կիսա-պետական բնույթ են կրել, կամ անմիջականորեն ուղղորդվել, կամ վերահսկվել են պետական մարմինների կողմից: Այս տեսանկյունից Ղատարանի քննության առնվող որոշումը որոշակի լույս կարող է սփռել, քանի որ Ղատարանը քննության է առել այն հարցը, թե արդյոք Սրեբրենիցայի կոտորածները կատարվե՞լ են անձանց կողմից, որոնք թեև պատասխանող մարմինների կարգավիճակ չեն ունեցել, սակայն գործել են նրանց ցուցումներով, ուղղորդմամբ կամ վերահսկողության ներքո:

Ղատարանը, վկայակոչելով ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի Պատասխանատվության վերաբերյալ հողվածների հողված 8-ում ամրագրված դրույթը, արձանագրեց, որ միջազգային պատասխանատվության սովորույթային իրավունքի կիրառելի նորմն այն է, որ անձանց կամ անձանց խմբերի արարքը պետք է դիտվի որպես պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի, եթե անձինք կամ անձանց խումբն արարքն իրագործելիս փաստացիորեն գործում են տվյալ պետության ցուցումներով կամ ուղղորդմամբ կամ նրա վերահսկողության ներքո: Ըստ Ղատարանի՝ այս դրույթը պետք է ընկալվի տվյալ խնդրի վերաբերյալ Ղատարանի պրակտիկայի, մասնավորապես, Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով 1986 թ. որոշման

(Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների)¹⁰⁷ լույսի ներքո¹⁰⁸:

Պետք է նշել, որ այս հարցում Ղատարանի պրակտիկան հիմնված է, այսպես կոչված, «արդյունավետ վերահսկողության» («effective control») չափանիշի վրա, որը ենթադրում է, որ պետությունը վերահսկողություն է իրականացրել կամ ցուցումներ տվել խախտումներ կատարած անձանց կամ անձանց խմբերի յուրաքանչյուր օպերացիայի առնչությամբ, այլ ոչ թե ընդհանրապես վերահսկողություն է իրականացրել նրանց ընդհանուր գործողությունների նկատմամբ: Ուսումնասիրելով գործի նյութերը՝ Ղատարանը եզրակացրեց, որ Սրբերենիցայում ցեղասպանություն կատարած անձանց արարքները չեն կարող վերագրվել պատասխանողին՝ ըստ պետության պատասխանատվության միջազգային իրավունքի, քանի որ դրանք կատարած անձինք չեն գործել Սերբիայի ուղղակի ցուցումներով կամ անմիջական և արդյունավետ վերահսկողության ներքո: Անշուշտ, հավատարիմ մնալով այս հարցում իր դիրքորոշմանը՝ Ղատարանը, մեր կարծիքով, բավականին դժվարացրեց այդ հիմքով Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու խնդիրը, քանի որ այսօր, դեպքերից ավելի քան մեկ հարյուրամյակ անց բավականաչափ դժվար կլինի հայտնաբերել յուրաքանչյուր առանձին դրվագում ցեղասպանություն իրագործող կազմավորումների կամ անձանց արարքների նկատմամբ Օսմանյան կայսրության պետական մարմինների անմիջական վերահսկողությունը, ցուցումները կամ ուղղորդումը: Բավականին դժվար, սակայն իրականանալի, քանի որ այդ թվականների հարուստ պաշտոնական նամակագրությունը և առկա այլ պաշտոնական փաստաթղթերը,

¹⁰⁷ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America) (Merits, Judgment, I.C.J. Reports 1986, pp. 62-64).

¹⁰⁸ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.142-143, para. 392 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

մեր կարծիքով, թույլ են տալիս այս հարցին էլ դրական պատասխան տալ: Այդուհանդերձ, եթե տեսականորեն ենթադրենք, որ այստեղ ևս կարելի է ձախողվել, ապա նույնիսկ դա թույլ չի տա Թուրքիայի Հանրապետությանը խուսափել պատասխանատվությունից, քանի որ, ինչպես հայտնի է, պետությունը պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն գործողությունների, այլ նաև անգործության համար:

Անգործության հետևանքով ցեղասպանության համար պետությանը պատասխանատվության ենթարկելու նույնիսկ տեսական հնարավորությունը չափազանց կարևոր է Հայոց ցեղասպանության պարագայում, քանի որ նույնիսկ անգործության պարագայում պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը և իրավաչափությունն ի չիք կդարձնեն Թուրքիայի այն հնարավոր պնդումները, որ Օսմանյան կայսրությունը որևէ մասնակցություն չի ունեցել հայերի դեմ կատարված հանցավոր արարքների իրագործմանը:

Ինչպես նշեցինք, Ցեղասպանության մասին կոնվենցիայի համաձայն պետությունները ոչ միայն ցեղասպանություն չկատարելու, այլ նաև այն կանխարգելելու պարտավորություն են կրում: Քննելով Սերբիայի կողմից ցեղասպանությունը կանխարգելելու պարտավորության կատարումը՝ Դատարանը նշեց, որ պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել սոսկ այն պատճառով, որ հնարավորություն չի ունեցել հասնել իր ցանկալի արդյունքին («due diligence»). այդուհանդերձ, պետությունը պատասխանատվության կարող է ենթարկվել, եթե այն ակնհայտորեն ձախողվել է ձեռնարկելու ցեղասպանության կանխարգելմանն ուղղված բոլոր միջոցները, որոնք եղել են իր տրամադրության ներքո, և որոնք կարող էին գործածվել ցեղասպանության կանխարգելման համար¹⁰⁹:

¹⁰⁹ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.154, para. 430 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

Ուստի Ղատարանը գտավ, որ պատասխանողի մարմինները որևէ միջոց չեն ձեռնարկել Սրբերենիցայում տեղի ունեցած կոտորածը կանխարգելելու համար, այնդելով, որ նրանք ի զորու չէին անել դա, ինչը դժվար է համակերպվում այն հայտնի ազդեցության հետ, որը նրանք ունեցել են բոսնիական սերբերի զինված ուժերի նկատմամբ: Նշվածի հիման վրա Ղատարանը եզրակացրեց, որ պատասխանողը խախտել է Սրբերենիցայի ցեղասպանությունը կանխարգելելու իր պարտավորությունը՝ այնպիսի եղանակով, որը ենթադրում է նրա միջազգային պատասխանատվությունը¹¹⁰:

4.2. Թուրքիայի Հանրապետության՝ որպես Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողի կարգավիճակի վերլուծություն

Հայոց ցեղասպանության իրականացման համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հիմնական ասպեկտներից մեկն անմիջականորեն փոխկապակցված է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական ինքնության հիմնահարցի հետ: Տվյալ հարցն առավելապես գործնական նշանակություն ունի Թուրքիայի Հանրապետությանը Օսմանյան կայսրության կողմից կատարված միջազգային իրավախախտումների համար պատասխանատվության կանչելու հնարավորությունը դիտարկելու լույսի ներքո: Շատ հաճախ, թե՛ միջազգային իրավունքի տեսությունում և թե՛ գործնական իրավական հարթությունում, Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական ինքնությունների հարաբերակցության հարցը հանգեցվում է

¹¹⁰ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.158, para. 438 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

սոսկ պետությունների պարզ իրավահաջորդության համատեքստում դրա դիտարկմանը:

Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվությունից խուսափելու նպատակով շատ հաճախ թուրքական իշխանություններն ու գիտական շրջանակները վկայակոչում են այն հանգամանքը, որ Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողը չէ և, հետևաբար, չի կարող պատասխանատվություն կրել Օսմանյան կայսրության կատարած արարքների համար:

Գտնում ենք, որ այս տեսակետը որևէ հիմնավորում ունենալ չի կարող հետևյալ պատճառաբանություններով. այն փաստը, որ իրավահաջորդ պետությունը չի կարող ազատվել պատասխանատվությունից իրավանախորդ պետության կողմից կատարված իրավախախտումների համար, լայնորեն ճանաչված է միջազգային իրավունքում: Այդուհանդերձ, այն հարցին պատասխան գտնելու համար, թե արդյոք Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակող, թե՛ ոչ, անհրաժեշտ է պարզել հետևյալը: Արդյոք Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության փլուզմամբ վերջինիս միջազգային իրավական ինքնությունը դադարել է գոյություն ունենալ, թե՛ ոչ: Այս հարցին պատասխանելու երկու տարբերակ կարող է գոյություն ունենալ.

- ա) Օսմանյան կայսրության փլուզման և վերջինիս միջազգային իրավական ինքնության դադարման արդյունքում ձևավորվել են նոր պետություններ՝ ներառյալ Թուրքիան, առանց վերջիններիս և Օսմանյան կայսրության միջև որևիցե միջազգային իրավական կապի,
- բ) կայսրության փլուզման արդյունքում ստեղծվել են մի շարք նոր պետություններ, ինչպիսիք են Իրաքը, Սիրիան և Լիբանանը, սակայն ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այն ոչ թե նոր պետություն է, այլ սոսկ նախկին

Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողը:

Գտնում ենք, որ վերջին տարբերակն առավել հստակ է արտացոլում իրականությունը: «*Եթե գոյությունը շարունակող պետությունն ամբողջությամբ պահպանում է նախկին պետության հիմնական բնութագրիչները՝ կապված պատմական (ասոցիացիայի) նույնացման, բնակչության, ազգի, լեզվի, կառավարության և այլնի հետ, ապա հստակ կանխավարկած գոյություն ունի, որ հին և նոր պետությունների միջև ինքնության շարունակելիություն գոյություն ունի*»¹¹¹:

Փաստերի ընդհանուր վերլուծությունը վկայում է այն մասին, որ Թուրքիայի Հանրապետությունն Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողն է: Այսպես օրինակ, եթե Թուրքիայի Հանրապետությունն Օսմանյան պետության իրավահաջորդը չէ, ապա ինչու և ինչի հիման վրա է վերջինս կնքել Լոզանի հաշտության պայմանագիրը և մասնավորապես վերահաստատել Օսմանյան կայսրության որոշ միջազգային իրավական պարտավորությունները և որոշել Օսմանյան պետության տարածքների հետագա ձակատագիրը¹¹²: Թուրքիայի Հանրապետության՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հանգամանքը հաստատվել է նաև Լոզանի պայմանագրի հիման վրա կայացած արբիտրաժի ընթացքում (այսպես կոչված՝

¹¹¹ **Toriguian S.**, The Armenian Question and International Law. La Verne, Ca: «ULV Press», 1988, p. 109.

¹¹² Մասնավորապես, Լոզանի պայմանագրի հոդված 12-ը սահմանում է, որ «Բացի Իմբրոս, Թենեդոս և Ճագարի կղզիներից, Արևելյան Միջերկրականի կղզիների, մասնավորապես՝ Լեմնոս, Սամոթրակի, Միթիլենե, Քիոս, Սամոս և Նիկարիա կղզիների նկատմամբ Հունաստանի ինքնիշխանության հետ կապված 1913 թ. մայիսի 17-30-ի Լոնդոնի պայմանագրի հոդված 5-ի և 1913 թ. նոյեմբերի 1-14-ի Աթենքի պայմանագրի հոդված 15-ի կապակցությամբ Լոնդոնի վեհաժողովում 1914 թ. փետրվարի 13-ին կայացրած որոշումը (որի մասին հունական կառավարությունը տեղեկացվել է 1914 թ. փետրվարի 13-ին) վերահաստատվում է, բացառությամբ սույն պայմանագրի հոդված 15-ի համաձայն՝ Իտալիայի ինքնիշխանության տակ անցնող կղզիների վերաբերյալ դրույթների»: Հոդված 17-ը սահմանում է, որ «Եգիպտոսի և Սուդանի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավական տիտղոսներից Թուրքիայի իրաժարումն ուժի մեջ է մտնում 1914 թ. նոյեմբերի 5-ից»:

«Օսմանյան պարտքի արբիտրաժ»), որի շրջանակներում արբիտր Բորելը հստակորեն սահմանել է, որ *«միջազգային իրավունքում Թուրքիայի Հանրապետությունը պետք է դիտվի որպես Օսմանյան կայսրության ինքնության շարունակող»*¹¹³:

Բարձրաստիճան թուրք պաշտոնյաների հայտարարությունները սոսկ հաստատում են այս փաստը: Մասնավորապես, 1999 թ. մարտի 1-ին Թուրքիայի մշակույթի նախարար Իստեմիհան Թալայը թուրք լրագրողներին տված հարցազրույցում հրապարակայնորեն հայտարարել է, որ «Թուրքիայի Հանրապետությունն այն կայսրության շարունակությունն է, որի ժառանգությունը մեր պատմության մի մասն է»: Նախարարի ելույթը նվիրված էր Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակի կապակցությամբ անցկացվող հանդիսություններին: Այնուհետև նա նշել է, որ «Կայսրության ժառանգության կապակցությամբ ամաչելը հավասարազոր է սեփական գոյության ժխտմանը»¹¹⁴:

Էնց պարզ իրավահաջորդության, այսինքն՝ Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության ոչ ամբողջական միջազգային իրավական նույնականությանը հղումն է շատ հաճախ դառնում Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության համատեքստում քաղաքական և իրավական շահարկումների հիմք: Այսպես, առավել ցուցադրական է այս հարցում Եվրոպական խորհրդարանի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 1987 թվականի հունիսի 18-ի բանաձևը, որի 2-րդ կետում նշվում է, «... ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանությունը կանխարգելելու և դրա համար

¹¹³ **Toriguian S.**, The Armenian Question and International Law. La Verne, Ca: «ULV Press», 1988, p. 112.

¹¹⁴ Türkiye (Istanbul), March 1, 1999. Հղումն ըստ **Dadrian V. N.**, The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, the Zoryan Institute, 1999, p. 5.

պատժելու մասին» կոնվենցիայի ...»¹¹⁵: Միևնույն ժամանակ բանաձևի նույն կետի շարունակությունում, որքան էլ որ դա հակասական չինչի, Եվրոպական խորհրդարանը սահմանում է «... միաժամանակ, որ ժամանակակից թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատականությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա թուրքիայի նկատմամբ»¹¹⁶:

Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո նոր միջազգային իմիջ ստեղծելու, Օսմանյան կայսրության բացասական ժառանգությունից ձերբազատվելու և վերջինիս կողմից կատարված միջազգային իրավախախտումների, այդ թվում Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով Թուրքիայի Հանրապետությունը փորձում էր ներկայանալ որպես նորաստեղծ պետություն՝ բացառելով Օսմանյան կայսրության հետ կապը: Մինչ օրս թուրքական իշխանությունը և գիտական շրջանակները պարբերաբար վերադառնում են տվյալ թեզին՝ փորձելով հիմնավորել, որ Թուրքիայի Հանրապետությունը չի կարող պատասխանատվություն կրել Օսմանյան կայսրության կողմից կատարված իրավախախտումների, այդ թվում՝ նաև ցեղասպանության համար:

Միջազգային իրավունքի տեսությունում առանձնացվում են մի շարք չափանիշներ, որոնց դիտարկումը հնարավորություն է տալիս խոսել պետությունների միջև շարունակականության առկայության կամ բացակայության մասին: Դրանցից հիմնականն են՝

¹¹⁵ Եվրոպական խորհրդարանի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 1987 թվականի հունիսի 18-ի բանաձև: Հայերեն տեքստը հասանելի է http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php համացանցային հասցեով:

¹¹⁶ Նույն տեղում:

1. իրավունքների և պարտականությունների նույնականություն,
2. կառավարման մարմինների նույնականություն,
3. տարածքի նույնականություն,
4. բնակչության նույնականություն,
5. անվանման և պետական խորհրդանիշերի նույնականություն:

Բնականաբար, պետությունների նույնականության հարցը հանգում է նրանց իրավասությունների, այն է՝ իրավունքների և պարտականությունների ամբողջության, համընկնման հարցին: Հասարակ իրավահաջորդության դեպքում գոյությունը դադարած պետության իրավասությունները տարրալուծվում է նորաստեղծ պետությունների իրավասություններում: Բայց այն դեպքում, երբ իրավանախորդ պետությունը շարունակում է իր գոյությունը, իրադրությունն այլ է, քանզի դրանից անջատված նորաստեղծ պետությունները չեն դիտարկվում որպես վերջինիս իրավահաջորդներ, կամ ստանձնում են իրավունքների և պարտականությունների միայն այն ծավալը, որն անբաժանելի է նորաստեղծ պետության տարածքից: Այս դեպքում իրավունքների և պարտականությունների հիմնական ծավալը պահպանում է շարունակող պետությունը, իսկ նորաստեղծ պետություններն ստանում են նոր իրավասություններ, որը չի համընկնում շարունակող պետության իրավասությունների հետ:

Հետևաբար, պարզելու համար Թուրքիայի Հանրապետության և Օսմանյան կայսրության միջև հարաբերակցությունը՝ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին. արդյոք Օսմանյան կայսրության միջազգային իրավասությունները դադարել է 1923 թ. դրա փլուզման արդյունքում, թե շարունակվել է Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավասություններում:

Օսմանյան կայսրությունը հիմնադրվել է 1299 թ.՝ հասնելով իր առավելագույն հզորությանը XVI-XVII դարերում: XIX դարի առաջին կեսից սկսվել է կայսրության անկումը: 1830 թթ. վերջնականապես ճանաչվեց Հունաստանի անկախությունը: 1878 թ.

Բեռլինի պայմանագրի դրույթների համաձայն անկախություն ստացան Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան, միևնույն ժամանակ Բոսնիան և Հերցեգովինան փոխանցվեցին Ավստրո-Հունգարիայի տիրապետության ներքո, իսկ Կարսը, Արդահանը և Բաթումն անցան Ռուսական կայսրության տիրապետության ներքո: 1908 թվականին անկախություն հռչակեց Բուլղարական թագավորությունը, իսկ Բալկանյան պատերազմների արդյունքում անկախություն ստացան նաև Ալբանիան, իսկ Կրետե կղզին և Մակեդոնիան անցան Հունաստանին: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Ազգերի Լիգան Ֆրանսիային փոխանցեց Սիրիայի և Լիբանանի, իսկ Մեծ Բրիտանիային՝ Միջագետքի և Պաղեստինի նկատմամբ մանդատները:

Առաջին աշխարհամարտում պարտության արդյունքում Օսմանյան կայսրությունը հսկայական տարածքային կորուստներ ունեցավ, Լոզանի պայմանագրի կնքումից հետո հռչակվեց Թուրքիայի Հանրապետությունը, որի ստեղծումից հետո ծառայեց այն հարցը, թե արդյոք վերջինս նորանկախ պետություն է, թե՞ Օսմանյան կայսրության միջազգային իրավասուբյեկտության շարունակող: Այս հարցը մասնավորապես քննարկման առարկա դարձավ Օսմանյան պարտքի արբիտրաժում (the Ottoman Debt Arbitration), որն իրականացվում էր Լոզանի հաշտության պայմանագրի դրույթներին համապատասխան:

Նշված արբիտրաժի շրջանակներում քննարկելով Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական ինքնության հարցը՝ արբիտրն առաջ քաշեց հետևյալ այլընտրանքային հարցադրումները.

- Օսմանյան կայսրության փլուզման և դրա միջազգային իրավասուբյեկտության դադարելու արդյունքում առաջացել են նոր պետություններ, որոնց թվում է նաև Թուրքիան՝ առանց Օսմանյան կայսրության միջազգային իրավասուբյեկտության շարունակության, կամ
- Օսմանյան կայսրության փլուզման արդյունքում առաջացել են մի շարք նոր պետություններ, ինչպիսիք են՝ Իրաքը, Սիրիան, Լիբանանը, իսկ ինչ վերաբերում է

Թուրքիային, ապա այն նոր պետությունն է, այլ շարունակում է Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնությունը¹¹⁷:

Արդյունքում՝ Արբիտրաժը եկավ այն եզրահանգման, որ Թուրքիայի Հանրապետության դեպքում գործ ունենք երկրորդ տարբերակի հետ, քանի որ վերջինս ստացել է Օսմանյան կայսրության իրավունքների և պարտականությունների հիմնական ծավալը: Ելնելով վերոնշյալից՝ արբիտր Բորելը, ինչպես նշեցինք, վճռեց, որ «Թուրքիան ծանրաբեռնված է մնում Օսմանյան կայսրության պարտքով, որի ինքնությունը այն շարունակում է»¹¹⁸:

Թուրքիայի Հանրապետության իրավունքների և պարտականությունների ինքնության հարցը քննարկվել է նաև «Lighthouse Arbitration» գործի շրջանակներում, որը քննվել է 1956 թ. Միջնորդ դատարանի մշտական պալատի կանոններին համապատասխան ստեղծված՝ ֆրանս-հունական արբիտրաժային տրիբունալի կողմից: Այս գործը վերաբերում էր Կրետե կղզում փարոսների սպասարկման զիջման (ցեսիոն) իրավունքներին, որոնք Օսմանյան կայսրության կողմից ֆրանսիական ընկերությանն էին փոխանցվել դեռևս 1860 թվականին, այն ժամանակ, երբ Կրետե կղզին դեռ գտնվում էր Օսմանյան կայսրության ինքնիշխանության ներքո: Ֆրանսիական «la Societe Collas et Michel» ընկերությունը մի շարք պահանջներ ներկայացրեց Հունաստանին այն բանից հետո, երբ Հունաստանը, ստանձնելով տվյալ տարածքի նկատմամբ ինքնիշխանությունը (1913 թվականին), որոշեց ազգայնացնել կոնցեսիան: Արբիտրաժային տրիբունալի կողմից դիտարկվել են Ֆրանսիայի կողմից ներկայացված 27 հայցադիմում և Հունաստանի կողմից ներկայացված 10 պատասխան հայցադիմումներ: Դրանց շրջանակներում Ֆրանսիան պահանջներ է ներկայացնում Հունաստանին (որպես իրավահաջորդ պետություն) Օսմանյան կայսրության կողմից (իրավանախորդ պետություն) կատարված իրավախախտումներ:

¹¹⁷ Տե՛ս **Shavarsh Toriguian**, *The Armenian Question and International Law*, Hamaskaine Press, Beirut – Lebanon 1973, p. 147:

¹¹⁸ *Ibid* p. 150.

րի համար¹¹⁹: Ենթադրյալ իրավախախտումն Օսմանյան կայսրության կողմից ֆրանսիական ընկերությանը պատկանող ծխաների ոչ իրավաչափ բռնագրավումն էր: Արբիտրաժային տրիբունալը եզրակացրեց, որ Օսմանյան կայսրությունը չի կատարել որևէ իրավախախտում, և որ տվյալ գործողությունները պայմանավորված էին անվտանգության նկատառումներով: Այդուհանդերձ, *obiter dictum*-ում Արբիտրաժային տրիբունալը նշեց, որ եթե անգամ Օսմանյան կայսրության կողմից կատարված լիներ որևէ իրավախախտում, Հունաստանը չէր կարող դրա համար պատասխանատվություն կրել: Պարտավորությունները կարող էին փոխանցվել միայն Թուրքիային՝ որպես Օսմանյան կայսրության շարունակող պետություն, որը պատասխանատվություն կկրեր իր սեփական գործողությունների համար, որոնք կատարվել էին մինչև նշված տարածքների կորուստը: Արբիտրաժային տրիբունալը եկավ այն եզրակացության, որ պատասխանատվություն կրող պետության որոշման «կրիտիկական պահը» հանդիսանում է Լոզանի հաշտության պայմանագրի կնքման ամսաթիվը, համաձայն որի՝ Օսմանյան կայսրության կողմից կորսված տարածքները փոխանցվեցին իրավահաջորդ պետություններին¹²⁰: Այս որոշմամբ Արբիտրաժային տրիբունալը ևս մեկ անգամ հաստատեց, որ Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է Օսմանյան կայսրության ինքնությունը շարունակող պետություն՝ հղում անելով հենց իրավունքների ու պարտականությունների նույնականությանը և վիճարկելի արարքը կատարած պետության պետական մարմինների վերագրելիությանը:

Ինչ վերաբերում է տարածքային փոփոխություններին, ապա դրանք, համաձայն միջազգային իրավունքի տեսության և պրակ-

¹¹⁹ Lighthouse Arbitration case, Award of 24/27 July 1956, in: 23 I.L.R., 1956, at p. 106.

¹²⁰ «Կրիտիկական պահ է համարվում Թուրքիայի պատասխանատվության ավարտը և Հունաստանի պատասխանատվության սկիզբը որոշելու սահմանը, այդպիսով, որ մինչև կրիտիկական պահը վրա հասնելը կատարված բոլոր գործողությունները շարունակում են մնալ Թուրքական պետության պատասխանատվության ներքո»: Lighthouse Arbitration case, Award of 24/27 July 1956, in: 23 I.L.R., 1956, at p. 108.

տիկայի ազդեցություն չեն ունենում պետությունների միջազգային իրավասուբյեկտության վրա¹²¹: Ակնհայտ է, որ տարածքային փոփոխությունները *per se* չեն կարող ազդել պետությունների միջազգային իրավասուբյեկտության վրա¹²²: Այդպիսի ազդեցություն կարող է լինել միայն պետության ամբողջ տարածքի կորուստը, ինչի արդյունքում կդադարի պետության գոյությունը¹²³: Այս մոտեցումը պետք է կիրառելի լինի նաև Օսմանյան կայսրության նկատմամբ, որը 1878-1918 թթ. միջև ընկած ժամանակահատվածում կորցրել է իր տարածքի մոտ 85 տոկոսը¹²⁴: Այնուամենայնիվ, տարածքի փոքրացումը, անգամ զգալի չափերով, չի կարող ազդեցություն ունենալ պետության միջազգային իրավասուբյեկտության վրա: Որպես տվյալ մոտեցումը հաստատող օրինակ շատ հեղինակներ վկայակոչում են հենց Թուրքիայի օրինակը¹²⁵, ինչպես նաև Ավստրիայի և Հունգարիայի, որոնք Ղաչնակիցների կողմից ճանաչվեցին շարունակող պետություններ, չնայած Ավստրո-Հունգարական կայսրության տարածքի շուրջ 75 տոկոս կորստին: Միջազգային իրավունքի տեսությունում ճանաչված է, որ եթե անգամ կորսված տարածքն ավելի մեծ է, քան պահպանվածը, դա որևէ կերպ չի անդրադառնում պետության նույնականության վրա¹²⁶: Թուրքիայի դեպքում մենք

¹²¹ Տե՛ս **L. Delbez**, 'Du territoire dans ses rapports avec l'Etat', RGDIP (1932) p. 719, W. Schoenborn, 'La nature juridique du territoire', 30 Recueil des cours (1929-V) p. 116, H. Lauterpacht, 'Règles générales du droit de la paix', 62 Recueil des cours (1937-IV) p.319.

¹²² Տե՛ս **J. L. Kunz**, 'Identity of States under International Law', 49 AJIL (1955) p. 72, J. Crawford, *The Creation of States in International Law*, 2nd edn. (Oxford, Clarendon Press 2006) p. 673.

¹²³ Տե՛ս **K. Marek**, *Identity and Continuity of States in Public International Law* (Geneva, Librairie Droz 1968) p. 23, **J. L. Kunz**, 'Identity of States under International Law', 49 AJIL (1955) p. 72.

¹²⁴ Տե՛ս **T. Akcam**, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York, Metropolitan Books 2006) p. 11.

¹²⁵ Տե՛ս «Պետությունների պրակտիկան վկայում է այն մասին, որ Թուրքիայի Հանրապետությունը, չնայած զգալի տարածքային կորուստների, նույնական է Օսմանյան կայսրության հետ»: **L. Kunz**, 'Identity of States under International Law', 49 AJIL (1955) p. 72.

¹²⁶ Տե՛ս **J. Crawford**, *The Creation of States in International Law*, 2nd edn.

գործ ունենք հենց այդպիսի օրինակի հետ՝ միջազգային իրավունքի համաձայն թուրքիան չի հանդիսանում նոր պետություն, այլ հանդիսանում է նույն պետությունը, ինչ որ Օսմանյան կայսրությունն էր, պարզապես էապես ավելի փոքր տարածքով¹²⁷:

Նմանատիպ մոտեցում գոյություն ունի նաև պետության բնակչության նկատմամբ: Բնակչության թվաքանակի փոփոխությունը, մասնավորապես դրա նվազումը (անգամ էական) չի կարող վկայել պետության իրավասուբյեկտության փոփոխության մասին¹²⁸: Անհրաժեշտ է նշել նաև, որ անընդունելի են համարվում նաև հղումները կառավարման ձևի փոփոխությանը: Համընդհանուր ճանաչում ունի միջազգային իրավունքի սկզբունքը, համաձայն որի՝ կառավարման ձևի փոփոխությունը չի դիտարկվում որպես նոր պետության ստեղծում¹²⁹: Տվյալ սկզբունքի դասական օրինակ կարելի է համարել Ֆրանսիան, որն առանցքային փոփոխությունների է ենթարկվել վերջին դարերի ընթացքում, ինչը, սակայն, որևէ ազդեցություն չի ունեցել վերջինիս իրավասուբյեկտության վրա¹³⁰: Նման փոփոխություններ կառավարման ձևում տեղի են ունեցել նաև շատ այլ պետություններում, մասնա-

(Oxford, Clarendon Press 2006) p. 673, **K.G. Bühler**, *State Succession and Membership in International Organizations: Legal Theories versus Political Pragmatism* (The Hague, Kluwer Law International 2001) p. 15.

¹²⁷ Տե՛ս **J. Crawford**, *The Creation of States in International Law*, 2nd edn. (Oxford, Clarendon Press 2006) p. 676; **K. Marek**, *Identity and Continuity of States in Public International Law* (Geneva, Librairie Droz 1968) p. 40; **W. Czaplinski**, 'La continuité, l'identité et la succession d'États: évaluation de cas récents', 26 RBDI (1993) p. 376.

¹²⁸ Տե՛ս **L. Kunz**, 'Identity of States under International Law', 49 AJIL (1955) p. 71, **J. Crawford**, *The Creation of States in International Law*, 2nd edn. (Oxford, Clarendon Press 2006) p. 678; **K. Marek**, *Identity and Continuity of States in Public International Law* (Geneva, Librairie Droz 1968) p. 48; **W. Czaplinski**, 'La continuité, l'identité et la succession d'États: évaluation de cas récents', 26 RBDI (1993) p. 378.

¹²⁹ Տե՛ս **L. Kunz**, 'Identity of States under International Law', 49 AJIL (1955) p. 73, **J. Crawford**, *The Creation of States in International Law*, 2nd edn. (Oxford, Clarendon Press 2006) p. 678, **B. Stern**, 'La succession d'États', 262 Recueil des cours (1996) p. 71.

¹³⁰ Տե՛ս **R. Jennings and A. Watts**, *Oppenheim's International Law*, Vol. I: *Peace: Introduction and Part 1*, 9th edn. (London, Longman 1996) p. 204-205.

վորապես, Հունաստանում, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում և այլն: Այսպիսով, որքան էլ արմատական չլինեն 1920-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունները, այդ թվում՝ միապետությունից հանրապետության անցումը, հիմնագուրկ է խոսել նոր պետության ձևավորման մասին:

Որպես ևս մեկ չափանիշ, որը հիմք է տալիս խոսել պետությունների միջև շարունակականության մասին, կարելի է առանձնացնել պետության անվանումը և պետական խորհրդանիշերի պահպանումը: Եթե պետությունը չի փոխում անվանումը իր տարածքի վրա ազդեցություն ունեցած փոփոխությունների արդյունքում, ապա այդ հանգամանքը կարող է դիտարկվել որպես շարունակության հատկանիշ, քանի որ դրանով պետությունը ցույց է տալիս իր կամսարտահայտումը՝ շարունակելու իրավասուբյեկտությունը: Սակայն այս կանոնը չի կարող ունենալ հակառակ ազդեցություն¹³¹: 1923 թվականին «Օսմանյան կայսրություն» անվանումը փոխարինվեց «Թուրքիայի Հանրապետություն» անվանմամբ¹³²: Այդուհանդերձ, «Թուրքիա» եզրույթը օգտագործվում էր պաշտոնական փաստաթղթերում և միջազգային պայմանագրերում դեռևս 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին՝ Օսմանյան կայսրությունը բնորոշելու համար¹³³: Այդ անվանումների միաժամանակյա կիրառման օրինակ է նաև Սևրի հաշտության պայմանագրի նախաբանը, որում նշվում է, որ պայմանագրի կողմ է հանդիսանում «... Թուրքիան, հաշվի առնելով այն, որ Օսմանյան կայսերական կառավարության խնդրանքով 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Գլխավոր դաշնակից պետությունների կողմից հրադադար հայտարարվեց Թուրքիային, որպեսզի հնարավոր դառնա հաշտության պայմանագրի ստորագրումը»¹³⁴: Այսպիսով, անվանման փոփոխությունը նույնպես չի

¹³¹ Տե՛ս **B. Stern**, 'La succession d'Etats', 262 Recueil des cours (1996) p. 75.

¹³² Տե՛ս *Ibid.*, указывая, что "Югославия" меняла свое название пять раз в период с 1918 по 1992 год

¹³³ Տե՛ս **E. Oktem**, 'Turkey: Successor or Continuing State of the Ottoman Empire?', 24 Leiden JIL (2011) p. 577

¹³⁴ http://en.wikisource.org/wiki/Treaty_of_Sèvres/Preamble.

կարող վկայել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջև շարունակականության բացակայության մասին: Անհրաժեշտ է նշել նաև, որ Թուրքիայի Հանրապետությունը, ի տարբերություն Օսմանյան կայսրության տարածքի վրա առաջացած այլ պետությունների, հավատարիմ մնաց Օսմանյան կայսրության պետական խորհրդանիշերին:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ եթե պետությունը, որը շարունակում է իր գոյությունը, ամբողջությամբ պահպանում է նախորդ պետության բոլոր հիմնական հատկանիշները՝ կապված պատմական նույնականացման, բնակչության, լեզվի, կառավարության և այլնի հետ, առկա է որոշակի կանխավարկած առ այն, որ հին և նոր պետությունների միջև գոյություն ունի ինքնության շարունակություն: Օսմանյան կայսրությունում, իշխանության տեսակետից, գերիշխող էթնիկ խումբ էին հանդիսանում թուրքերը: Նրանք էին կառավարությունը և իշխանությունը երկրում, Սուլթանի և նրա հետնորդների, ինչպես նաև Երիտթուրքերի բոլոր օրենքները թուրքական էին: Երիտթուրքերի ղեկավարներից շատերը հետագայում մասնակցություն ունեցան ազգայնական շարժմանը և դարձան հանրապետության հիմնադիրներ: Ուստի փաստացի հեշտ է տեսնել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության ինքնությունների միջև նույնությունը¹³⁵: Վերջին հաշվով, «առանցքային տարածքների» չափանիշը ամբողջովին փաստում է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջև շարունակականության մասին¹³⁶:

Պետության միջազգային իրավասությունների շարունակականության հարցում կարևոր նշանակություն ունի միջազգային հանրության կողմից համապատասխան ձևաչափի հարցը: Դիտարկենք երկու ցուցադրական օրինակ, թե ինչպես է

¹³⁵ Տե՛ս **Shavarsh Toriguian**, *The Armenian Question and International Law*, Hamaskaine Press, Beirut – Lebanon 1973, p. 148-149.

¹³⁶ Տե՛ս **P. Dumberry**, “Is Turkey the ‘Continuing’ State of the Ottoman Empire under International Law?”, *Netherlands International Law Review*, LIX:235-262, 2012, p. 251.

միջազգային հանրության ճանաչումն ազդում նույնականության գործոնի վրա: Թուրքիայի Հանրապետությունը, հռչակվելուց հետո, այլ պետությունների կողմից երբեք չի ճանաչվել որպես նորանկախ պետություն և, հետևաբար, չի կարող «նոր պետություն» համարվել¹³⁷:

Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության պահպանման մասին է վկայում նաև այն, որ Թուրքիայի Հանրապետությունը ժառանգել է Օսմանյան կայսրության ողջ բյուրոկրատական և ռազմական էլիտան, դրա ինստիտուտների մեծամասնությունը, ներառյալ վարչական, կրթական և ֆինանսական համակարգերը, Թուրքիայի Հանրապետությունն ստացել է Օսմանյան կայսրության ողջ ռազմական ունեցվածքը և նավատորմը:

Միջազգային պայմանագրերի և արբիտրաժային մարմինների վերլուծությունը ևս վկայում է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության նույնականության մասին: Դրա մասին են վկայում, մասնավորապես, Լոզանի հաշտության պայմանագրի որոշ դրույթներ: Օրինակ, պայմանագրի 1-ին հոդվածում խոսվում է Թուրքիայի և Պայմանագրի այլ մասնակիցների միջև խաղաղության վերահաստատման (re-establishment) մասին¹³⁸: Մինչ պատերազմը գոյություն ունեցած խաղաղության «վերահաստատման» թեզն ամրագրելով՝ պայմանագրի մասնակիցներն ըստ էության սատարել են այն գաղափարը, որ Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողն է¹³⁹: Լոզանի պայմանագրի հոդված 18-ը վերաբերում է պատերազմի ընթացքում պայմանագրի մասնակից պետություններին և դրանց քաղաքացիներին պատճառված վնասին և ներառում է 1914 թ. օգոստոսի

¹³⁷ Տե՛ս **E. Oktem**, 'Turkey: Successor or Continuing State of the Ottoman Empire?', 24 *Leiden JIL* (2011) p. 577, **G. Cansacchi**, 'Identité et continuité des sujets de droit international', 130 *Recueil des cours* 130 (1970-I) p. 35

¹³⁸ Տե՛ս http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

¹³⁹ Տե՛ս **E. Zamuner**, 'Le Rapport entre Empire ottoman et République turque face au droit international', 6 *Journal of the History of International Law* (2004) p. 224.

1-ից մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելն ընկած ժամանակաշրջանը:

Տվյալ հոդվածում 1914-1923 թթ. գոյություն ունեցող պետությունն անվանվում է Թուրքիա, չնայած այն հանգամանքին, որ Թուրքիայի Հանրապետությունը հռչակվեց միայն 1923 թ., ինչը, անշուշտ, վկայում է այն մասին, որ պայմանագրի կողմերի համար Օսմանյան կայսրությունը և Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում էին նույնական կազմավորումներ: Բացի վերը նշված դրույթներից, տվյալ պայմանագրում առկա են մի շարք հոդվածներ, որոնցում արտացոլված են համանման դրույթներ (օրինակ հոդված 12, 17 և այլն): Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ անկախ տարածքային փոփոխությունների՝ Օսմանյան կայսրությունը չի կորցրել իր միջազգային իրավական ինքնությունը, այլ վերափոխվել է Թուրքիայի Հանրապետության՝ պահպանելով միջազգային իրավասությունը, ինչն իր հերթին ենթադրում է իրավունքների և պարտականությունների շարունակականություն:

Ամփոփելով նշվածը՝ կարող ենք վստահորեն հայտարարել, որ Թուրքիայի Հանրապետությունը շարունակում է Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնությունը: Ուստիև Թուրքիայի Հանրապետությունը պետք է դիտվի հենց որպես Օսմանյան Թուրքիայի միջազգային ինքնության շարունակող (continuity), այլ ոչ թե սուկ իրավահաջորդ (successor), և, հետևաբար, պետք է պատասխանատվություն կրի Հայոց ցեղասպանության համար և համապատասխան հատուցում տրամադրի այդ հանցագործության զոհերին կամ նրանց իրավահաջորդներին:

Պետք է նշել նաև, որ որոշ հետազոտողներ կասկածներ են հայտնում առ այն, որ երկարատև ժամանակ անցնելու հետևանքով սպառվել են Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժանկետները, և որևիցե պահանջ նրա նկատմամբ ներկայացվել չի կարող: Այս տեսակետը, սակայն, որևէ իրավական հիմնավորում ունենալ չի կարող, քանի որ ինչպես ժամանակակից միջազգային իրավական փաստաթղթերը, այնպես էլ միջազ-

գային պրակտիկան վկայում են, որ վաղեմության որևէ ժամկետ չի կարող կիրառվել պետության պատասխանատվության նկատմամբ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միջազգային դատական կամ արբիտրաժային ատյանը պետք է որոշի՝ ընդունելի են, թե՛ ոչ, որևէ պետության միջազգային իրավական պահանջները: Նշվածը հիմնավորվում է, մասնավորապես, 1968 թ. Պատերազմի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու մասին կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի պրակտիկայով, մասնավորապես, Նաուրուում Ֆոսֆատների որոշ հանքավայրերի մասին (Նաուրուում ընդդեմ Ավստրալիայի) 1992 թ. գործով կայացրած վճռով. դատարանը հանգեց այն եզրակացության, որ թեև վնասի պատճառման և պահանջների ներկայացման միջև գոյություն ունի ժամանակային խզում, այդուհանդերձ, Նաուրուի և Ավստրալիայի միջև այդ ժամանակահատվածում գոյություն ունեցող հարաբերությունների բնույթը որևէ հիմք չի տալիս Նաուրուի հայցը վաղեմության ժամկետների լրանալու հետևանքով մերժելու համար: Համանման իրավիճակ գոյություն ունի Հայոց ցեղասպանության պարագայում: Թեև ցեղասպանության և Թուրքիայի Հանրապետությանը ներկայացվող միջազգային իրավական պահանջների միջև գոյություն ունի ժամանակային խզում, այնուամենայնիվ, այն օբյեկտիվ հանգամանքների հետևանք է:

1923 թ., այսինքն՝ այն ժամանակ, երբ ավարտվել էին Հայոց ցեղասպանությունը կազմող արարքները, Հայաստանի Հանրապետությունը կորցրել էր իր միջազգային իրավասուբյեկտությունը, և հայ ժողովուրդը գրկվել էր միջազգային իրավունքի այն սուբյեկտից, որն իրավասու էր և շահագրգռված միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիայի Հանրապետությանը Հայոց ցեղասպանությունն իրագործելու համար: Խորհրդային Միության գոյության օրոք՝ Հայկական ԽՍՀ միջազգային իրավասուբյեկտության դե ֆակտո բացակայության պայմաններում, Հայոց ցեղասպանության համար Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու

որևիցե հնարավորություն գոյություն ունենալ չէր կարող: Ինչպես տեսնում ենք, գոյություն են ունեցել օբյեկտիվ խոչընդոտներ, որոնք թույլ չեն տվել միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Հայոց ցեղասպանության համար՝ մինչև Հայաստանի անկախացման գործընթացն սկսվելը:

Անկախության ձեռքբերման առաջին իսկ օրերից Հայաստանի Հանրապետությունը շեշտել է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործին սատար կանգնելու փաստը ամրագրելով այն Անկախության հռչակագրում և բազմիցս հնչեցնելով զանազան միջազգային ատյաններում: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ որևիցե հանգամանք չի կարող վկայակոչվել որպես ՀՀ կողմից Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պահանջների ներկայացումից հրաժարում կամ հիմք հանդիսանալ նման պահանջներն անընդունելի դարձնելու համար:

5. Հայոց ցեղասպանության համար Հայաստանի Հանրապետության կողմից Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավաչափությունը և հիմնական պայմանները

Ցեղասպանության համար պատասխանատվությունը դիտվում է ոչ միայն որպես իրավախախտ պետության պարտականություն՝ կրել հակաիրավական արարքների անբարենպաստ իրավաբանական հետևանքները, այլ նաև որպես պետությունների՝ իր միջազգային իրավական պարտավորությունները խախտած պետությանը պահանջներ ներկայացնելու իրավունք:

Հենց այս համատեքստում է առանձնանում ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության յուրահատկությունը: Ընդհանուր առմամբ Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրավաբանական հետազոտությունների մեծամասնությունն այն վերլուծում են հիմնականում Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության տեսանկյունից: Այն

հարցը, թե ո՞վ կամ ո՞ր սուբյեկտներն իրավունք ունեն Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիայի Հանրապետությանը, առկա աշխատություններում գրեթե չի ուսումնասիրվում: Հանուն արդարության պետք է նշել, որ այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են՝ Յու. Գ. Բարսեղովը, Շ. Թորիկյանը, Ջ. Թաշյանը և այլոք, իրենց աշխատություններում անդրադարձել են Հայոց ցեղասպանության համար պահանջներ ներկայացնելու իրավունքի հիմնախնդրին՝ վերծանելով դրա այս կամ այն կարևորագույն ասպեկտները: Այդուհանդերձ, պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները Թուրքիային միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքի տեսանկյունից՝ բավարար խորությամբ չեն ուսումնասիրվել: Մինչդեռ, ինչպես նշվեց, միջազգային հանցագործությունների համար պատասխանատվությունը ենթադրում է ոչ միայն պատասխանատվություն կրող պետության պարտավորությունը՝ հատուցել պատճառած վնասները, այլ նաև այդ հանցագործության հետևանքով տուժած պետությունների իրավունքը՝ համապատասխան միջազգային իրավական պահանջներ ներկայացնել պատասխանատվություն կրող պետությանը:

Որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ով իրավունք ունի միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիայի Հանրապետությանը Հայոց ցեղասպանության համար, նախևառաջ պետք է պարզել, թե ով կարող է այդ հանցագործության հետևանքով տուժող դիտվել:

Ցեղասպանության հանցագործությունը բարդ իրավաբանական երևույթ է, որը վնաս է պատճառում միաժամանակ սուբյեկտների տարբեր կատեգորիաների: Այդ հանցագործության հետևանքով նախևառաջ վնաս է պատճառվում համապատասխան ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկական որևէ խմբի այն անդամներին, որոնք դրա անմիջական զոհ են դառնում, և այն հետապնդվող խմբին, որն այդ հանցագործության հետևանքով ամբողջովին կամ մասամբ քայքայվում և խարխլվում է, կամ որին նման վտանգ է սպառնում: Անշուշտ,

ցեղասպանությամբ վնաս է պատճառվում նաև այն պետությանը կամ պետություններին, որի տարածքում կամ որի բնակչության նկատմամբ այն իրագործվել է: Հետևաբար, կարելի է տարբերակել ցեղասպանության հանցագործության հետևանքով տուժողների հետևյալ երեք կատեգորիաները.

1. ցեղասպանության հանցագործության անմիջական զոհ դարձած որևէ հետապնդվող ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկական խմբի անդամները,
2. հանցագործության հետևանքով ամբողջությամբ կամ մասամբ խաղիվող և քայքայվող ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկական խումբը՝ որպես այդպիսին,
3. այն պետությունը, որի տարածքում կամ որի քաղաքացիների նկատմամբ այն իրագործվել է:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է առանձնացնել Հայոց ցեղասպանության արդյունքում տուժողների համապատասխան կատեգորիաները: Հայոց ցեղասպանության զոհ պետք է դիտել նախևառաջ դրա հետևանքով անմիջականորեն տուժողներին՝ զոհվածներին և վերապրածներին: Անշուշտ, դժվար է չհամաձայնել մի շարք հետազոտողների և, մասնավորապես՝ Վ. Մ. Վարդանյանի և այլոց արտահայտած այն տեսակետին, թե հայերի դեմ իրագործած ցեղասպանության, ինչպես նաև ցանկացած այլ ցեղասպանության պարագայում տուժող պետք է դիտվեն ոչ միայն այդ հանցագործության անմիջական զոհերը, այլև հետապնդվող խմբի բոլոր անդամները, որոնք կարող էին դառնալ տվյալ հանցագործության հավանական զոհ¹⁴⁰:

Ցավոք, Հայոց ցեղասպանության զոհերի թիվը հաշվարկելիս շատ հետազոտողներ սահմանափակվում են միայն այդ հանցագործության արդյունքում զոհվածների թվով, մինչդեռ ցեղասպանության պարագայում խմբի անդամների սպանությունն ընդամենն այդ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքներից մեկն է՝ այլ արարքներին զուգահեռ, ինչպիսիք են

¹⁴⁰ Տե՛ս **Варданян В. М.**, Уголовная ответственность за геноцид. Автореферат канд. дисс. Ставрополь, 2000, с. 13.

խմբի անդամներին ծանր մարմնական վնասվածք կամ մտավոր լուրջ խանգարում պատճառելը, կյանքի այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնք միտված են խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը և այլն: Այդ արարքները չեն պահանջում հետապնդվող խմբի անդամների ֆիզիկական ոչնչացում: Հետևաբար, Հայոց ցեղասպանության զոհերի թիվը հաշվարկելիս չպետք է սահմանափակվել փաստացի զոհվածների թվով, այլ ընդգրկել Ցեղասպանության մասին կոնվենցիայում ամրագրված ցեղասպանության բոլոր դրսևորումների զոհերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանությունը նպատակաուղղված էր հայ ժողովրդի ամբողջական բնաջնջմանը, այդ հանցագործության զոհ պետք է դիտել 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում կամ դրա վերահսկողության ներքո հայտնված տարածքներում գտնվող բոլոր հայերին, որոնց սպառնում էր զանգվածային բնաջնջման վտանգը: Սակայն Ցեղասպանության մասին կոնվենցիայի պաշտպանության տակ գտնվող խմբերը միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն, ուստի և չեն կարող միջազգային իրավական պահանջներ ներկայացնել հանցանքն իրագործած պետությանը:

Այդ խմբի շահերը միջազգային մակարդակում կարող է ներկայացնել այն պետությունը, որի տարածքում կամ բնակչության դեմ է կատարվել այդ հանցանքը կամ որի շահերը ոտնահարվել են դրանով: Ցեղասպանության հանցագործության առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն այլ միջազգային հանցագործությունների (օրինակ՝ ագրեսիայի), դրա դեպքում հիմնական վնասը պատճառվում է ոչ թե պետությանը, այլ հետապնդվող խմբին և դրա անդամներին, և պետությունը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու դեպքում հիմնականում ներկայացնում է վերջիններիս շահերը: Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ միջազգային մակարդակում Հայոց ցեղասպանության հետևանքով տուժողների շահերի պաշտպանությունը հնարավոր է միայն միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտների՝ պետությունների միջոցով:

Հետևաբար, Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու համար պետք է որոշել այն պետությունների շրջանակը, որոնք օժտված են վերջինիս միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքով: Առաջին հերթին, բնականաբար, նման իրավունքով օժտված են Հայոց ցեղասպանության արդյունքում անմիջականորեն տուժած պետությունները:

Այս կապակցությամբ առաջանում են հետևյալ հարցերը: Կարո՞ղ է, արդյոք, Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության հետևանքով անմիջականորեն տուժած պետություն համարվել, և իրավունք ունի՞ր այն, արդյոք, միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիայի Հանրապետությանն այդ հանցագործության համար:

Այդ հարցերին պատասխան գտնելու համար ևս պետք է անդրադառնալ միջազգային սովորության իրավունքն արտացոլող՝ Պետությունների պատասխանատվության մասին հոդվածներին, որի հոդված 42-ը նվիրված է տուժող պետության կողմից իրավախախտողին պատասխանատվության ենթարկելուն: Համաձայն այդ հոդվածի՝ *«Պետությունը՝ որպես տուժող պետություն, կարող է պատասխանատվության կանչել այլ պետությանը, եթե խախտված պարտավորությունը վերաբերում է.*

- ա) տվյալ պետությանն առանձին վերցրած, կամ*
- բ) պետությունների խմբին՝ ներառյալ այդ պետությունը, կամ միջազգային հանրությանն ամբողջությամբ, և այդ պարտավորության խախտումը,*
- i) հատկապես առնչվում է այդ պետությանը, կամ*
- ii) կրում է այնպիսի բնույթ, որն արմատապես փոխում է բոլոր այլ պետությունների վիճակը, որոնց վերաբերում է այդ պարտավորությունը՝ վերջինիս հետագա իրագործման առումով»:*

Այս հոդվածը հիմնականում ամփոփում է միջազգային դատական և արբիտրաժային պրակտիկայում կուտակված փորձը

և այդ իսկ պատճառով կարող է դիտվել որպես միջազգային սովորութային իրավական նորմի արտացոլում:

Փորձենք ներկայացված նորմի տեսանկյունից վերլուծել այն հարցը, թե Հայաստանի Հանրապետությունը կարող է, արդյոք, դիտվել որպես Հայոց ցեղասպանության արդյունքում տուժող պետություն, թե՛ ոչ, և, հետևաբար, իրավունք ունի այն, արդյոք, միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիայի Հանրապետությանը դրա իրագործման համար:

Ցավոք, ստիպված ենք նշել, որ վերջին ժամանակներս հայկական իրականության մեջ այն տեսակետն է արտահայտվում, որ Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Օսմանյան կայսրության տարածքում՝ դրա հպատակների նկատմամբ և, հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու որևէ իրավական հիմք չունի:

Գտնում ենք, որ չափազանց վտանգավոր այս տեսակետը ոչ իրավաչափ է և չի արտացոլում իրերի իրական վիճակը, քանի որ Հայաստանի Հանրապետությունն այդ հանցանքի հետևանքով տուժած պետություն է և բոլոր իրավական հիմքերն ունի Հայոց ցեղասպանության համար Թուրքիային միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու համար:

Ներկայացնենք հետևյալ դատողությունները նշվածը հիմնավորելու համար: Նախևառաջ, թերի պետք է համարել այն մոտեցումը, թե Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել սոսկ Օսմանյան կայսրության տարածքում նրա՝ հայազգի հպատակներին բնաջնջելու հատուկ մտադրությամբ, քանի որ այն իրագործվել է նաև Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, մասնավորապես, Ռուսական կայսրության, իսկ այնուհետև՝ անկախ Հայաստանի տարածք հանդիսացող և նրանից ապօրինի օտարված Կարսի մարզում և Արևելյան Հայաստանի այլ հատվածներում:

Այսպես, օրինակ, պրոֆ. Յու. Գ. Բարսեղովի կարծիքով՝ «Արևելյան Հայաստանի սահմաններ թուրքական երկու ներխուժումների արդյունքում ցեղասպանության ենթարկվեց ինչպես

Կարսի մարզի, այնպես էլ Ջավախքի, Սուրմալուի, Գյումրիի, Նախիջևանի, Ղարաբաղի և այլ տարածքների հայկական բնակչությունը»¹⁴¹: Միայն այն հանգամանքը, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը կազմող որոշ արարքներ տեղի են ունեցել անկախ Հայաստանի տարածքում, դրա բնակչության նկատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը տվյալ հանցագործության արդյունքում անմիջականորեն տուժած պետություն է և, հետևաբար, օժտված է Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքով: Այս հանգամանքը թեև ամենահիմնականն է Հայաստանի Հանրապետությանը Հայոց ցեղասպանության հետևանքով տուժող պետություն դիտելու համար, այդուհանդերձ, միակը չէ, որ հիմնավորում է այդ հանցանքի համար Թուրքիային միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու՝ վերջինիս իրավունքը:

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության հետևանքով հազարավոր արևմտահայեր ապաստան գտան և բնակություն հաստատեցին Հայաստանի Հանրապետության տարածքում: Բացի դրանից, Հայոց ցեղասպանության հետևանքով իրենց բնօրրանը լքած և աշխարհի տարբեր անկյուններում սփռված հազարավոր արևմտահայեր, հայրենադարձության խորհրդային ծրագրին համապատասխան, 1940-ական թթ. երկրորդ կեսին բնակություն հաստատեցին Հայկական ԽՍՀ-ում՝ ձեռք բերելով վերջինիս քաղաքացիությունը (ԽՍՀՄ քաղաքացիները միաժամանակ համապատասխան միութենական հանրապետության քաղաքացիություն էին ձեռք բերում):

Թեև, մեր կարծիքով, վերը նշվածը լիովին բավարար է Հայաստանի Հանրապետությունը ցեղասպանության արդյունքում տուժող պետություն ճանաչելու համար, այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել վերջինիս կողմից Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պա-

¹⁴¹ Барсегов Ю. Г., Геноцид армян - преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 13.

հանջներ ներկայացնելու ևս մեկ հիմք: Ցեղասպանության հանցագործության էությունն այն է, որ դրա իրագործման համար միջազգային իրավական պահանջներ կարող են ներկայացվել նաև ցեղասպանության հանցագործության արդյունքում անմիջականորեն չտուժած պետությունների կողմից: Նմանօրինակ պահանջների ներկայացումը թույլատրվում է միջազգային իրավունքով ողջ միջազգային հանրության համար պարտադիր բնույթ ունեցող *erga omnes* պարտավորությունների խախտման դեպքում: *Erga omnes* պարտավորությունների գոյության հայեցակարգը լայն տարածում է ստացել ժամանակակից միջազգային իրավունքում: Այդ դրույթի հաստատման գործում էական դերը պատկանում է մեր կողմից արդեն իսկ հիշատակված «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի վերապահումների մասին» ՄԱԿ-ի միջազգային դատարանի 1951 թ. մայիսի 28-ի Խորհրդատվական եզրակացությանը, որում դատարանը սահմանել է, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվել են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես բոլոր պետությունների համար պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ պայմանագրային ամրագրման»¹⁴²: Տվյալ հայեցակարգը հետագայում լայն ճանաչում ստացավ շնորհիվ «Barcelona Traction» ընկերության գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի 1970 թ. որոշման: Դրանում, մասնավորապես, նշվում էր. «Հիմնարար տարբերություն պետք է անցկացնել պետության՝ ամբողջ միջազգային հանրության նկատմամբ (*erga omnes*) ստանձնած պարտավորությունների և դիվանագիտական պաշտպանության ոլորտում այլ պետության նկատմամբ (*vis-à-vis*) առաջացող պարտավորությունների միջև: Հենց իրենց բնույթով առաջինները վերաբերում են բոլոր պետություններին:

¹⁴² International Court of Justice, Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion (May 28, 1951). I.C.J. Report 1951. P. 15. – L.C. Green. International Law through the cases. Fourth Edition. The Carswell Company Limited. Toronto, Canada; Oceana Publications, Inc. Dobbs Ferry, New York, USA. 1978, p. 573-579.

Ընդգրկվող իրավունքների կարևորության տեսանկյունից՝ բոլոր պետությունները կարող են դիտվել որպես դրանց պաշտպանության հարցում իրավական շահ ունեցողներ. խոսքը *erga omnes* բնույթի պարտավորությունների մասին է»¹⁴³:

Այնուհետև որոշման մեջ նշվում էր, որ «յուրաքանչյուր պետություն միջազգային հանրությանն անդամակցելու ուժով իրավական շահ ունի որոշակի հիմնարար իրավունքների պաշտպանության և որոշակի հիմնարար պարտավորությունների կատարման գործում»: Դրանց շարքին դատարանը դասել է «օրենքից դուրս ազդեցիկ և ցեղասպանության ակտերը, ինչպես նաև... մարդու հիմնական իրավունքներին վերաբերող նորմերը և սկզբունքները՝ ներառյալ ստրկությունից և ռասայական խտրականությունից պաշտպանությունը»¹⁴⁴: Այս դրույթը դատարանի կողմից բազմիցս հաստատվել է նաև հետագայում¹⁴⁵:

Ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության նման յուրահատկությունն արտացոլվում է միջազգային իրավական պատասխանատվության հարաբերությունների վրա: Ի տարբերություն հասարակ (օրդինար) միջազգային իրավախախտումների արդյունքում առաջացող միջազգային իրավական հարաբերությունների, միջազգային հանցագործությունների և, առաջին հերթին, ցեղասպանության կատարման արդյունքում առաջացող իրավահարաբերությունները կրում են ունիվերսալ բնույթ, քանի որ նման իրավախախտումները շոշափում են ամբողջ միջազգային հանրության առջև պարտա-

¹⁴³ Barcelona Traction, Light and Power Company, Limited, Second Phase, I.C.J. Reports 1970, p. 3, at p. 32, para. 33.

¹⁴⁴ Ibid., at p. 32, para. 34.

¹⁴⁵ Տե՛ս, օրինակ, Արևելյան Թիմորի մասին գործով որոշումը (Պորտուգալիան ընդդեմ Ավստրալիայի) I.C.J. Reports 1995, p. 90, at p. 102, para. 29, Սիջուկային գենքի կիրառման կամ կիրառման սպառնալիքի իրավաչափության մասին խորհրդակցական եզրակացությունը I.C.J. Reports 1996, p. 226, at p. 258, para. 83, Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ գործով որոշումը I.C.J. Reports 1996, p. 595, at pp. 615-616, paras. 31-32.

վորությունները, ուստի յուրաքանչյուր պետություն իրավաբանորեն շահագրգռված է համարվում պատասխանատվության համապատասխան իրավահարաբերությունների իրացման հարցում¹⁴⁶:

Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք վստահորեն հայտարարել, որ ցեղասպանության դեմ պայքարելու պարտավորության *erga omnes* բնույթն իրավունք է վերապահում ոչ միայն ցեղասպանության հանցագործության հետևանքով անմիջականորեն տուժած, այլ նաև բոլոր այլ պետություններին՝ պատասխանատվության կանչել ցեղասպանություն իրագործած պետությանը:

Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի ընդհանուր դրույթները թույլ են տալիս պայմանագրի ցանկացած մասնակցի կողմից պատասխանատվության կանչել իրավախախտին: Ընդ որում, տարբերություն է անցկացվում իրավախախտման փաստի մասին հարց բարձրացնելու՝ պետության իրավունքի և խախտված պարտավորության շահառուների շահերը պաշտպանելու իրավունքի միջև:

Պետք է միաժամանակ նշել, որ ինչպես ցույց է տալիս միջազգային իրավունքի նորմերի և Պատասխանատվության մասին հողվածների դրույթների վերլուծությունը, իրավախախտման արդյունքում անմիջականորեն չտուժած պետության իրավունքներն ավելի սահմանափակ են անմիջականորեն տուժած պետության իրավունքների համեմատությամբ:

Դեպքերի մեծամասնությունում խոսքը հենց իրավախախտման փաստի գնահատման, այսինքն՝ որպես ցեղասպանություն այն որակելու, կամ դրա դադարեցման, եթե արարքը շարունակվում է, և ցեղասպանության զոհերին պատճառված նյութական ու բարոյական վնասի հատուցման մասին է¹⁴⁷:

¹⁴⁶ Տե՛ս **Лукшук И. И.**, *Право международной ответственности*, М., «Волтерс Клувер», 2004, с. 252.

¹⁴⁷ Այսպես, օրինակ, Հարավարևմտյան Աֆրիկայի գործում Եթովպիան և Լիբերիան պահանջում էին միայն հայտարարություն իրավական վիճակի վերաբերյալ: Հետագայում դատարանը որոշեց, որ տվյալ գործով տուժող կողմ էր հանդիսանում Հարավարևմտյան Աֆրիկայի բնակչությունը: *South West Africa. Preliminary Objections. I.C.J. Reports 1962, p. 319; South West Africa,*

Նմանօրինակ պահանջները պետք է ուղղված լինեն տուժած պետության, եթե այդպիսին առկա է, կամ խախտված պարտավորության շահառուների շահերի պաշտպանությանը: Քննարկվող խնդրի հետ կապված՝ առաջանում է հետևյալ հարցադրումը, թե արդյոք որևիցե պետություն, այդ թվում՝ և Հայաստանի Հանրապետությունը, Հայոց ցեղասպանության պարագայում իրավունք ունի միջազգային իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիային օսմանահպատակ հայերի հանդեպ իրագործված ցեղասպանության համար: Ինչպես երևում է Պատասխանատվության մասին հոդվածների ընդհանուր վերլուծությունից, պետությունը կարող է միջազգային իրավական պահանջներ ներկայացնել այլ պետությանը՝ ներկայացնելով շահառուների շահերը, որոնք ցեղասպանության հանցագործության դեպքում հենց այդ հանցագործության զոհերն են, ինչպես նաև նրանց ժառանգներն ու իրավահաջորդները՝ զրկված իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության վայրի պետության անմիջական պաշտպանությունից: Սակայն, ինչպես և իրավախախտմամբ անմիջականորեն չտուժած պետության կողմից պահանջներ ներկայացնելու բոլոր այլ դեպքերում, նշված դեպքում ներկայացվող պահանջների ծավալը սահմանափակվում է ցեղասպանության հանցագործությունը դադարեցնելու, ինչպես նաև դրա չկրկնման երաշխիքների և հավաստիքների տրամադրման, հատուցման պարտավորության կատարման պահանջներով՝ ի պաշտպանություն խախտված պարտավորության շահառուների շահերի: Նշված դեպքում սահմանափակ են նաև իրավական պաշտպանության միջոցները:

Ուստի, եթե նույնիսկ հիպոթետիկ կերպով ընդունենք, որ Հայաստանի Հանրապետությունը հայերի դեմ իրագործած ցեղասպանության հետևանքով տուժած պետություն համարվել չի կարող, ապա Թուրքիայի Հանրապետությանը նրա կողմից

Second Phase, I.C.J. Reports 1966, p. 6; Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), I.C.J. Reports 1971, p.12 at p. 56, para. 127:

միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքը չի վերանում, քանզի այն կարող է հանդես գալ տարբեր միջազգային ատյաններում՝ ներկայացնելով ոչ թե իր, այլ ցեղասպանության արդյունքում տուժողների շահերը, որոնց մեծ մասը բնակություն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում և ձեռք բերել տվյալ պետության քաղաքացիություն՝ արդյունավետ իրավաբանական կապ հաստատելով վերջինիս հետ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության կողմից Թուրքիայի Հանրապետությանը Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքն անվիճելի է և հիմնված միանգամից մի շարք բաղկացուցիչների վրա, որոնցից յուրաքանչյուրն ինքնին բավարար է նման պահանջներ ներկայացնելու համար:

Ամփոփելով ամբողջը՝ կարող ենք արձանագրել, որ Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու՝ Հայաստանի Հանրապետության իրավունքը հիմնված է միջազգային իրավունքի հանրաձանաչ նորմերի վրա և որևիցե կերպ վիճարկվել չի կարող: Մարմնավորելով ողջ հայ ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն իրավունք ունի, այլ նաև պարտավոր է միջազգային մակարդակում իրականացնել Հայոց ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների ու իրավահաջորդների շահերի պաշտպանությունը:

ԳՆՈՒՄ 3.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության արդյունքում առաջացած հետևանքները բազմատեսակ են և բազմապիսի (Օսմանյան կայսրության և դրա վերահսկողության ներքո ընկած տարածքներում հայկական էթնիկ տարրի և հայ ինքնության ոչնչացում, հարկադրված դավանափոխություն, հայրենագրկում, հայերին պատկանող մասնավոր և համայնքային գույքի, հայ մշակութային արժեքների յուրացում և ոչնչացում և այլն), դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը պահանջում է առանձնակի, յուրահատուկ մոտեցում, առանց որի համապատասխան հետևանքի վերացումը չի կարող ամբողջական, իսկ պատճառված վնասի հատուցումը լիարժեք լինել:

Հայոց ցեղասպանության արդյունքում պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ է հստակ տարբերակում անցկացնել բուն ցեղասպանության հանցագործության հետևանքով առաջացած անմիջական կամ ուղղակի վնասի և այլ միջնորդավորված (անուղղակի) վնասների միջև (այն վնասների, որոնք կարող էին առաջանալ նաև ցեղասպանության իրագործման փաստից անկախ):

Ցեղասպանության հանցագործության թիրախը հետապնդվող համապատասխան կայուն և մշտական մարդկային խմբի գոյությունն է: Այլ կերպ ասած, ցեղասպանությունը ոտնձգություն է ոչ թե առանձին անհատների՝ անկախ նրանց թվից, նրանց գույքի կամ բնակության վայրից, այլ հենց

մարդկային մշտական և կայուն խմբերի գոյության դեմ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հստակորեն ընդգծել, որ Հայոց ցեղասպանության առանցքային անմիջական հետևանքն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության վերահսկողության ներքո գտնված տարածքներում հայ էթնիկ խմբի և արևմտահայ ինքնության ոչնչացումն է: Սա Հայոց ցեղասպանության առավել ծանր հետևանքն է, որովհետև արևմտահայ տարրի վերականգնումն իր բնօրրանում այսօր հնարավոր է միայն տեսականորեն:

Եթե այսօր տեսականորեն հնարավոր լինի հայերով վերաբնակեցնել ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքը և նախկինում այլ հայաբնակ վայրերը, ապա նույնիսկ այդ պարագայում էլ չենք կարողանալու խոսել արևմտահայկական էթնիկ տարրի ամբողջական վերականգնման մասին, քանի որ կորչել են արևմտահայ բարբառներից, սովորույթներից, ավանդույթներից շատերը, իսկ նորի վերականգնումը տվյալ տարածքներում չի կարող համարժեք լինել կորսվածի համադրությամբ:

Ուստի Հայոց ցեղասպանության անմիջական հետևանք պետք է համարել հենց հայության, որպես այդպիսին, և արևմտահայ ինքնության ոչնչացումը և վերհանել դրա հետևանքով առաջացած վնասի հատուցման հնարավոր իրավական միջոցները:

Սույն ենթաբաժնի շրջանակներում վերլուծության առարկա են հանդիսանալու այն հնարավոր իրավական միջոցները, որոնք կարող են ուղղվել արևմտահայ տարրի ոչնչացման արդյունքում առաջացած հետևանքների հաղթահարմանը:

1. Հայոց ցեղասպանության ուղղակի (անմիջական) հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն

Իրավական միջոցներով Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարման հարցը քննարկելիս անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ այն հնարավոր միջազգային իրավական մեխանիզմներին, որոնք հնարավորություն կընձեռեն բարձրացնել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հարցը միջազգային մակարդակում:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հարցը միջազգային դատական ատյաններում բարձրացնելն անուղղակիորեն կարող է հանգեցնել Հայոց ցեղասպանության եղելության և որակման հարցին անդրադառնալուն, հետևաբար՝ միջազգային մակարդակում Հայոց ցեղասպանության իրավական հետևանքների հաղթահարմանն ուղղված հայցապահանջներ ներկայացնելու պարագայում անհրաժեշտ է չափազանց աչալուրջ մոտեցում դրսևորել:

Անհրաժեշտ է նաև հստակեցնել, թե հայեցակարգային առումով ի՞նչ կարգի իրավական միջոցներով է պետք առաջնորդվել՝ դատական, թե արտադատական: Արտադատական մեխանիզմները (բանակցություններ, հաշտեցման կամ այլ հանձնաժողովներ և այլն) շատ ավելի ձկուն են, թեև պարտադիրության ավելի նվազ աստիճան կարող են ունենալ, քան, օրինակ, դատական կամ արբիտրաժային մեխանիզմները: Վերջինները, իրենց հերթին, պարտադիրության առավել մեծ աստիճան ունեն, սակայն միաժամանակ բավականին կարծր են և ժամանակատար:

Արտադատական մեխանիզմների միջոցով Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարման հետ կապված հարցերը դուրս են սույն հետազոտության շրջանակներից, քանի որ վերջիններս առավելապես կրում են քաղաքական բնույթ և կարող են ընդունել կողմերի համար ցանկացած ընդու-

նելի ձևաչափ՝ պայմանով, որ վերջիններս չեն հակասում միջազգային իրավունքի նորմերին:

Առավել ուշագրավ է միջազգային դատական ատյանների միջոցով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հիմնահարցերի քննարկումը, քանի որ վերջիններս ենթադրում են համապատասխան իրավական նախապայմանների և ընթացակարգի առկայություն և դրանց խստագույն պահպանություն:

Այսօր միջազգային ասպարեզում ձևավորվել է միջազգային դատական մարմինների մի ամբողջ համակարգ, որոնք օժտված են իրավագործությամբ իրավական հարցերի որոշակի շրջանակի նկատմամբ (Միջազգային քրեական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եվրոպական միության դատարան, նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի համար ստեղծված *ad hoc* տրիբունալներ, միջազգայնացված (հիբրիդային) տրիբունալներ և այլն):

Այդուհանդերձ, տվյալ համակարգում միջազգային վեճերի լուծման գործում գերակայող դերը շարունակում է պատկանել ՄԱԿ-ի միջազգային դատարանին՝ ՄԱԿ-ի գլխավոր դատական ատյանին:

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան հողված 9-ում նախատեսում է, որ «Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:

Ինչպես հայտնի է, և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը համապատասխանաբար՝ 1993 թ. հունիսի 23-ից և 1950 թ. հուլիսի 31-ից Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակիցներ են: Ավելին, ինչպես Հայաստանը, այնպես էլ Թուրքիան որևէ վերապահում չեն արել հիշա-

տակված Կոնվենցիայի հոդված 9-ի, ինչպես նաև դրա այլ հոդվածների կապակցությամբ: Հետևաբար, Հայոց ցեղասպանության հարցը ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննության առարկա կարող էր դառնալ արդեն 1951 թ. հունվարի 12-ից (կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվից), սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ կազմում Հայկական ԽՍՀ միջազգային իրավասուբյեկտությունը, ինչպես նշել ենք, սոսկ անվանական բնույթ էր կրում, նման գործի հարուցումը գործնականում անհնար էր:

Հայաստանի Հանրապետությունն արդեն ավելի քան 20 տարի օժտված է Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցը ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննությանը միակողմանի կարգով՝ Կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա փոխանցելու իրավունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի Հանրապետությունը Ցեղասպանության մասին կոնվենցիայի վավերացմամբ (առանց հոդված 9-ի վերաբերյալ վերապահման) ճանաչել է դատարանի իրավագործությունն այդ հարցի կապակցությամբ: Սակայն տվյալ դեպքում, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանը կարող է բախվել բազմաթիվ ստորջրյա խութերի, որոնցից կարելի է հիշատակել Կոնվենցիայի հետադարձության, Թուրքիայի Հանրապետության իրավահաջորդության, կոնվենցիայի տարածքային կիրառելիության հետ կապված հարցերը և այլն:

Պարզելու համար, թե արդյոք դատարանն օժտված է Ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա գործը քննելու իրավագործությամբ, դատարանին անհրաժեշտ է հաստատել, թե գոյություն ունի արդյոք կողմերի միջև տվյալ դրույթի գործողության տակ ընկնող վեճ¹⁴⁸:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության մասին գործով (Բոսնիան և Հերցեգովինան՝ ընդդեմ Հարավսլավիայի) որոշման մեջ դատարանը վեճի առկայության հաստատ-

¹⁴⁸ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996, para. 27.

ման համար, դիտարկելով կողմերի բևեռային և իրարամերժ դիրքորոշումները և հղում կատարելով նախկինում իր իսկ կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, եկավ այն եզրակացության, որ «ձևավորված պրակտիկային համապատասխան... շարունակում է գոյություն ունենալ մի իրավիճակ, որում երկու կողմերն զբաղեցնում են ծայրահեղ հակադիր տեսակետներ որոշակի պայմանագրային պարտավորությունների կատարման կամ չկատարման հարցի վերաբերյալ» (Interpretation of Peace Treaties with Bulgaria, Hungary and Romania, First Phase, Advisory Opinion, I.C.J. Reports 1950, p. 74), և որ Հարավսլավիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի ներկայացրած պահանջների ժխտման պատճառով նրանց միջև «առկա է իրավական վեճ» (East Timor (Portugal v. Australia), I.C.J. Reports 1995, p. 100, para 22)¹⁴⁹:

Հիմք ընդունելով դատարանի նշված իրավական դիրքորոշումը՝ կարելի է վստահորեն հայտարարել, որ Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունն ունեն հստակ արտահայտված ծայրահեղ հակադիր դիրքորոշումներ որոշակի միջազգային իրավական պարտավորությունների կատարման կամ չկատարման վերաբերյալ, որոնք, մասնավորապես, շարադրված են 1948 թ. դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Հետևաբար, հղում կատարելով ՄԱԿ-ի միջազգային դատարանի պրակտիկային՝ կարելի է ենթադրել, որ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից իրավաբանական բնույթի միջազգային վեճ է: Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է հայտարարել, որ տվյալ հարցում Միջազգային դատարանի *ratione materiae* իրավագործությունը որևիցե էական առարկություն առաջացնել չի կարող:

Ավելի բարդ է դատարանի *ratione temporis* իրավագործության հարցը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վեճի առարկա

¹⁴⁹ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996, para. 29.

կազմող արարքները տեղի են ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ: Կարևոր ռազմավարական ուղենիշ այս առումով կարող է հանդիսանալ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից *Խորվաթիան ընդդեմ Սերբիայի* գործով 2015 թվականի մարտի 3-ին կայացրած վճիռը, որը, ըստ էության, բացառել է Ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիման վրա Հայոց ցեղասպանության վերաբերյալ պահանջներ ներկայացնելու հնարավորությունը: Նշված վճռում ՄԱԿ-ի միջազգային դատարանը, մասնավորապես, արտահայտեց իրավական դիրքորոշում առ այն, որ «ցեղասպանությունը պատժելու պարտականությունը, ինչպես և [Ցեղասպանության մասին 1948 թ.] կոնվենցիայի այլ նյութական դրույթները նախատեսված են եղել ապագայում տեղի ունեցող արարքների նկատմամբ կիրառվելու համար և ոչ թե Երկրորդ համաշխարհային պատերազմի կամ որևէ ժամանակ անցյալում տեղի ունեցած արարքների նկատմամբ կիրառվելու համար»¹⁵⁰: Այլ կերպ ասած, Դատարանն արդեն իսկ տեսականորեն սահմանափակել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի դեմ իրավական պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունը:

Ըստ էության, Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ը ՄԱԿ-ի միջազգային դատարանում միակողմանի դիմումի հիման վրա գործ հարուցելու միակ իրավական հիմքն է, քանի որ վեճի կողմերը ճանաչել են դատարանի իրավագործությունը՝ դառնալով կոնվենցիայի մասնակից: Բոլոր մնացած դեպքերում, գտնում ենք, որ կողմերը պետք է գործը ներկայացնեն Միջազգային դատարան երկկողմ համաձայնության, այն է՝ տվյալ հարցով դատարանի իրավագործությունը ճանաչող հատուկ համաձայնագրի հիման վրա:

Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը, որևէ միջազգային պայմանագրի դրույթի հիման

¹⁵⁰ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Serbia), 2015 I.C.J.-unreported, ¶97.

վրա, այս պարագայում՝ Ցեղասպանության կոնվենցիայի 9-րդ հոդվածի, իրավագործություն իրականացնելիս սահմանափակված է միայն այդ կոնվենցիայի դրույթների կիրառմամբ¹⁵¹: Այդ իսկ պատճառով, դատարանը նույնիսկ չի փորձի կիրառել մինչև Կոնվենցիայի ընդունումը գոյություն ունեցած սովորույթային իրավունքն իր իրավագործությունը հաստատելու համար:

Վերջնական եզրահանգումն այն է, որ որպես պայմանագրային իրավագործության հիմք՝ պետք է փորձել ներկայացնել Թուրքիայի և Հայաստանի կողմից վավերացված այլ միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցում առկա է դատարանի իրավագործությանն առնչվող դրույթ:

Հանուն ճշմարտության, պետք է նշել, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան ՄԱԿ-ի միջազգային դատարան դիմելու հնարավորություն ընձեռող միակ փաստաթուղթը չէ, քանզի դառնալով Միավորված ազգերի կազմակերպության անդամ՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ Թուրքիայի Հանրապետությունը ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 93-ի մաս 1-ի համաձայն դարձել են, Միջազգային դատարանի կանոնադրության *ipso facto* կողմեր: Դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 1-ը սահմանում է, որ «Դատարանի իրավասությանն են վերաբերում բոլոր գործերը, որոնք կփոխանցեն իրեն կողմերը...»: Սակայն պետությունը, դառնալով Միջազգային դատարանի Կանոնադրության մասնակից, ինքնաբերաբար չի ձանաչում դատարանի պարտադիր իրավագործությունը բոլոր իրավական հարցերով, դրա համար պետություններից պահանջվում է առանձին ուղղակի արտահայտված համաձայնություն ցանկացած իրավական վեճի շուրջ: Միջազգային դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 2-ը սահմանում է, որ «սույն Կանոնադրության մասնակից պետությունները կարող են ցանկացած ժամանակ հայտարարել, որ իրենք ձանաչում են՝ առանց

¹⁵¹ Այս հարցով առավել մանրամասն տե՛ս Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Georgia v. Russian Federation), Preliminary Objections, Judgment, I.C.J. Reports 2011, p. 70:

դրա վերաբերյալ հատուկ համաձայնության *ipso facto* նման պարտավորություն ստանձնած ցանկացած այլ պետության վերաբերյալ, դատարանի իրավագործությունը պարտադիր բոլոր իրավական հարցերով, որոնք վերաբերում են.

- ա) *պայմանագրի մեկնաբանությանը,*
- բ) *միջազգային իրավունքի ցանկացած հարցի,*
- գ) *փաստի առկայությանը, որը, հաստատվելու պարագայում, իրենից կներկայացնի միջազգային պարտավորության խախտում,*
- դ) *միջազգային պարտավորության խախտման համար հասանելի հատուցման բնույթին և չափերին»:*

Այսօր ո՛չ Հայաստանի Հանրապետությունը, ո՛չ էլ Թուրքիայի Հանրապետությունը նման հայտարարություններ չեն կատարել ո՛չ միակողմանի, ո՛չ փոխադարձությամբ պայմանավորված և ո՛չ էլ որոշակի ժամկետով սահմանափակված, ինչպես դա սահմանված է նշված հոդվածի մաս 3-ում:

Կանոնադրության հոդված 40-ի մաս 1-ը սահմանում է, որ դատարանում գործերը հարուցվում են կախված հանգամանքներից կամ հատուկ համաձայնության նոտիֆիկացիայով, կամ Քարտուղարին հասցեագրված գրավոր դիմումի հիման վրա: Երկու դեպքերում էլ պետք է նշված լինեն վեճի առարկան և կողմերը: Եթե Միջազգային դատարանում Թուրքիայի Հանրապետության դեմ գործ հարուցելու դեպքում Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա բավարար կլիներ Ղատարանի Քարտուղարին հասցեագրված գրավոր դիմում ուղարկելը, ապա Հայոց ցեղասպանության վերաբերյալ գործի հարուցման դեպքում առանց Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ին հղում կատարելու անհրաժեշտ է հատուկ համաձայնության կայացում, այսինքն՝ տվյալ գործը դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ կողմերի փոխադարձ համաձայնության կայացումը՝ հաշվի առնելով տվյալ կոնկրետ դեպքում դատարանի պարտադիր իրավագործությունը ճանաչելու անհրաժեշտությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ըստ Միջազգային դատարանի կանոնակարգի հոդված 39-ի մաս 1-ի՝ Կանոնադրության հոդված 40-ի մաս 1-ի համաձայն՝ հատուկ համաձայնության ծանուցման միջոցով դատարանում գործ հարուցելու դեպքում այդ ծանուցումը կարող է հանձնվել Կողմերի կողմից համատեղ կամ մեկ կամ մի քանի Կողմի կողմից: Եթե ծանուցումը համատեղ չէ, դրա վավերացված օրինակը Քարտուղարի կողմից անմիջապես փոխանցվում է մյուս կողմին: Նույն հոդվածի մաս 2-ը սահմանում է, որ «Ցանկացած դեպքում ծանուցման պարագայում տրամադրվում է հատուկ համաձայնության բնօրինակը կամ վավերացրած պատճենը: Բացի դրանից, ծանուցման մեջ հստակ նշվում են վեճի առարկան և դրա կողմերը, եթե դա չի բխում հատուկ համաձայնությունից»:

Հետևաբար, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միջազգային դատարանում գործ հարուցելը հատուկ համաձայնագրի հիման վրա լիովին հնարավոր է և իրավաչափ, քանի որ տվյալ հարցը միաժամանակ վերաբերում է և՛ պայմանագրի մեկնաբանությանը, և՛ միջազգային իրավունքի բազում հարցերին (մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը ցեղասպանությունն արգելող նորմերի առկայություն), և՛ փաստի առկայությանը, որը, հաստատվելու պարագայում, իրենից կներկայացնի միջազգային պարտավորության խախտում (Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների հաստատում), և՛ միջազգային պարտավորության խախտման համար հատուցման բնույթին և չափերին, այլ կերպ ասած՝ Միջազգային դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 2-ի համաձայն՝ Միջազգային դատարանի իրավագործությանը վերաբերող գրեթե բոլոր իրավական հարցերին:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս նշել, որ ի տարբերություն Կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա դատարանում գործ հարուցելուն՝ ընդհանուր հիմունքներով գործ հարուցելու դեպքում անհրաժեշտ է վեճի մեջ ներքաշված բոլոր կողմերի համաձայնությունը, որը Թուրքիայից ստանալն այնքան էլ իրատեսական չի թվում՝ հաշվի առնելով տվյալ հարցում վեր-

ջինիս ծայրահեղ ժխտողական դիրքորոշումը: Այդուհանդերձ, գտնում ենք, որ հատուկ համաձայնության հիման վրա գործ հարուցելու առավելություններից մեկն այն է, որ դատարանը տվյալ դեպքում կլուծի ոչ միայն Թուրքիայի կողմից Ցեղասպանության մասին կոնվենցիայի խախտման հետ կապված հարցերը, այլ նաև, օգտագործելով իրավունքի այլ աղբյուրները, գործը կլուծի ըստ էության՝ ամրագրելով Հայոց ցեղասպանության հանցակազմը կազմող փաստերում լուրջ միջազգային իրավախախտման անհրաժեշտ տարրերի առկայությունը:

Ըստ էության, դատարանը կարող է օգտագործել իրավունքի բոլոր աղբյուրները, որոնք կիրառելու իրավունք ունի՝ համաձայն հոդված 38-ի մաս 1-ի, մասնավորապես՝ միջազգային կոնվենցիաները՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ, որոնք սահմանում են վիճող պետությունների կողմից որոշակիորեն ճանաչված կանոններ, միջազգային սովորույթները՝ որպես իրավական նորմ ճանաչված համընդհանուր պրակտիկայի ապացույց, քաղաքակիրթ պետությունների կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները, հոդված 59-ում նշված վերապահմամբ՝ դատական որոշումները, տարբեր ազգերի հանրային իրավունքի առավել որակյալ մասնագետների դոկտրինները՝ որպես իրավական նորմերի հաստատման օժանդակ միջոց:

Շատ դեպքերում, իհարկե, կիրառելի իրավունքի աղբյուրների մասին հարցը կախված է հատուկ համաձայնության կոնկրետ դրույթներից և կողմերի կամաարտահայտությունից: Բացի դրանից, կողմերի համապատասխան համաձայնությունն ստանալիս դատարանը՝ Կանոնադրության հոդված 38-ի մաս 2-ի հիման վրա, կարող է լուծել այդ գործը *ex aequo et bono*¹⁵²: Սակայն այդ հնարավորությունը պետությունների կողմից երբևիցե դեռ չի օգտագործվել¹⁵³:

Պետությունների միջև վեճ քննելու իրավագործությունից զատ, ՄԱԿ-ի միջազգային դատարանը, համաձայն ՄԱԿ-ի կա-

¹⁵² Արդարությամբ և բարի կամքով (լատ.):

¹⁵³ St'u **Лукашук И. И.**, Международное право. Особенная часть. Учебник, М., Издательство БЕК, 1998, с. 130:

նոնադրության 96-րդ հոդվածի համաձայն, Գլխավոր ասամբլեան կամ Անվտանգության խորհուրդը կարող են դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարանին՝ որևէ իրավական հարցի առնչությամբ խորհրդատվական եզրակացություն տալու նպատակով: Նույն հոդվածի համաձայն ՄԱԿ-ի այլ մարմինները և մասնագիտացված կազմակերպությունները ևս կարող են, Գլխավոր ասամբլեայի կողմից թույլտվություն ստանալու դեպքում, հայցել դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն՝ իրենց գործունեության շրջանակներում ծագող իրավական հարցի առնչությամբ: Մինչ օրս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից խորհրդատվական եզրակացություն հայցելու թույլտվության համար դիմել են՝ Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Քարտուղարությունը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը¹⁵⁴:

ՄԱԿ-ի դատարանի խորհրդատվական եզրակացությունները, ի տարբերություն իրավական վեճով կայացված վճիռների, չեն հանդիսանում իրավաբանորեն պարտադիր և ունեն լուկ խորհրդատվական բնույթ¹⁵⁵: Չնայած որ նշված եզրակացությունները չունեն պարտադիր իրավաբանական ուժ, միևնույն է, դատարանի հեղինակությունն այնքան բարձր է, որ նույնիսկ առանց պարտադիր իրավաբանական ուժի հանգամանքի խորհրդատվական եզրակացությունները խստորեն հաշվի են առնվում և իրավաբանական նախադեպային նշանակությամբ որևէ կերպ չեն տարբերվում վճիռներից¹⁵⁶:

Իհարկե, ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից նման խորհրդատվական եզրակացություն հայցելը Հայաստանի Հանրապետությունից և այլ շահագրգիռ սուբյեկտներից կպահանջի հսկայածավալ դիվանագիտական աշխատանք, քանզի տվյալ

¹⁵⁴ Stú **Mahasen M. Aljahoub**, The Advisory Function of the International Court of Justice. 1946-2005. Springer, 2006, pp.46-56.

¹⁵⁵ ICJ Reports, 1950, p. 71. Հետագա գործերում այս դիրքորոշումը կրկին անգամ վերահաստատվել է, այսպես, օրինակ՝ ICJ Reports, 1956, p. 84.

¹⁵⁶ **Mahasen M. Aljahoub**, The Advisory Function of the International Court of Justice. 1946-2005. Springer, 2006, pp.116-121.

պարագայում նման խորհրդատվական եզրակացություն հայցելը միջնորդավորված է լինելու ՄԱԿ-ի և դրա մասնագիտացված հաստատությունների կամքով: Այդուհանդերձ, նման խորհրդատվական եզրակացության հայցումն առավել իրատեսական է թվում՝ Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության առնչությամբ գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի իրավագործության ճանաչման հեռանկարների համեմատությամբ:

ՄԱԿ-ի միջազգային դատարանից Հայոց ցեղասպանությանն առնչվող խորհրդատվական եզրակացություն հայցելու պարագայում կարևորագույն նշանակություն կունենա ներկայացված հարցի հստակ ձևակերպումը՝ հնարավոր բացասական պատասխանից խուսափելու համար: Հարցը, մասնավորապես, կարող է վերաբերել նրան, թե ինչ իրավական հետևանքներ է առաջացնում Օսմանյան կայսրության կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարված արարքների ամբողջությունը:

Նման քայլի դիմելիս անհրաժեշտ է խորապես և բազմակողմանի քննարկել հարցը՝ ներգրավելով միջազգային ճանաչված փորձագետների: Խորհրդատվական եզրակացություն հայցելու դեպքում չպետք է մոռանալ, որ դատարանն իրավասություն ունի ներկայացված հարցը փոփոխել, միևնույն ժամանակ, Գլխավոր ասամբլեայի օրակարգում հարցի ձևակերպումն այնպիսին պետք է լինի, որ հնարավորինս դյուրին դարձնի դրա ընդունումը:

2. Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարմանն ուղղված միջազգային իրավական հատուցման հնարավոր ձևերի և եղանակների վերլուծություն

Ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության ձևերի և տեսակների հիմնահարցը ցայսօր շարունակում է մնալ ժամանակակից միջազգային իրավունքի ամենաբարդ խնդիրներից մեկը՝ ոչ միայն Հայոց ցեղասպանու-

թան, այլ նաև ցեղասպանության մյուս դեպքերի պարագայում: Ղա, առաջին հերթին, պայմանավորված է միջազգային իրավախախտումների համար պատասխանատվության ձևերի և տեսակների որոշման հարցում հստակ պրակտիկայի բացակայությամբ: Այդուհանդերձ, հետազոտողների ճնշող մեծամասնությունը, միջազգային պրակտիկան և միջազգային իրավական փաստաթղթերը միասնական են մի հարցում՝ ցանկացած միջազգային իրավախախտում ենթադրում է դրանով պատճառված վնասի հատուցում:

Պետությունների պատասխանատվության մասին հողվածները վնասի հատուցմանը նվիրված հողված 31-ի կետ 1-ում սահմանել են, որ «միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի համար լիարժեք հատուցում տրամադրել»: Նշված հողվածի կետ 2-ի համաձայն՝ «վնասը ներառում է պետության հակաիրավական արարքով պատճառված ցանկացած կորուստ՝ ինչպես նյութական, այնպես էլ բարոյական»:

Վնասի հատուցման բազմաթիվ ձևեր գոյություն ունեն: Այդ ձևերը ներկայացնում են, մի կողմից, վնասի լիակատար հատուցման պարտականություն, մյուս կողմից՝ նման հատուցում ստանալու իրավունք¹⁵⁷: Պատասխանատվության մասին հողվածների 34 հողվածի համաձայն՝ «Միջազգային հակաիրավական արարքով պատճառված վնասի լիարժեք հատուցումն իրականացվում է ռեստիտուցիայի, կոմպենսացիայի և սատիսֆակցիայի ձևով՝ կամ առանձին, կամ դրանց համադրությամբ...»: Պատասխանատվության մասին հողվածները պատահականորեն չեն թվարկել պատասխանատվության տվյալ տեսակները՝ նշված հերթականությամբ. փաստաթղթի՝ ռեստիտուցիային, կոմպենսացիային և սատիսֆակցիային նվիրված համապատասխանաբար՝ 35, 36 և 37 հողվածները սահմանել են դրանց

¹⁵⁷ Տե՛ս **Лукашук И. И.**, *Право международной ответственности*, М., «Волтерс Клувер», 2004, с. 211:

կիրառման որոշակի աստիճանակարգություն: Որպես հատուցման հիմնական և օպտիմալ միջոց ճանաչվել է ռեստիտուցիան: Կոմպենսացիան գտնվում է երկրորդ տեղում և կիրառվում է այն դեպքում, եթե ռեստիտուցիան ոչ արդյունավետ է կամ կապված է այնպիսի բեռի հետ, որն ընդհանրապես անհամաչափ է կոմպենսացիայից ստացված օգուտին: Սատիսֆակցիան բնութագրվում է որպես լրացուցիչ, բացառիկ միջոց, որը կիրառվում է այն դեպքում, երբ ռեստիտուցիայի կամ կոմպենսացիայի կիրառումն անհնարին կամ ոչ բավարար է վնասը հատուցելու համար:

Պետք է նշել, որ միջազգային իրավական գրականության մեջ, համենայնդեպս, մինչև Պատասխանատվության մասին հողվածների ընդունումը, պատասխանատվության ձևերի հարցում որպես հիմք ընդունվում էին այլ մոտեցումներ, որոնց համաձայն՝ վերջիններս բաժանվում էին նյութականի և ոչ նյութականի կամ քաղաքականի (իսկ երբեմն՝ նաև բարոյականի): Չներքաշվելով տեսական վեճի մեջ պատասխանատվության ձևերի դասակարգման ճշգրիտ մեթոդաբանության վերաբերյալ՝ սույն աշխատության շրջանակներում կառաջնորդվենք Պատասխանատվության մասին հողվածներում ամրագրված իրավախախտմամբ պատճառված վնասի հատուցմանն ուղղված եղանակներով, նախևառաջ անդրադառնալով պատասխանատվության այն ձևերին, որոնք կարող են կիրառելի լինել Հայոց ցեղասպանությամբ պատճառված նյութական և բարոյական վնասի հատուցման պարագայում:

Ռեստիտուցիա. ռեստիտուցիան, որպես միջազգային իրավական պատասխանատվության ձև, մինչև միջազգային հակաիրավական արարքը գոյություն ունեցած վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է: Ռեստիտուցիայի մասն մեկնաբանությունը հանրաձանաչ է համարվում միջազգային իրավունքում: Այսպես, դեռևս Դ. Բ. Լևինը նշում էր, որ «ռեստիտուցիան իրերի, նյութական արժեքների նախկին վիճակի վերականգնումն է՝ այդ թվում նաև բնեղե-

նով»¹⁵⁸: Ռեստիտուցիան միջազգային իրավական պատասխանատվության առավել առաջնային ձևն է, քանի որ հատուցման հիմնախնդիրը լուծելիս նախևառաջ առաջանում է մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման հնարավորության խնդիրը: Ռեստիտուցիայի առաջնային բնույթը հաստատվել է դեռևս Միջազգային արդարադատության մշտական պալատի կողմից Խոժովի գործարանի գործով կայացրած որոշմամբ¹⁵⁹: Ռեստիտուցիան, որպես այդպիսին, կարող է ներառել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պատասխանատվության ձևեր: Ելնելով նշվածից՝ միջազգային իրավունքի գիտության մեջ առանձնացնում են ռեստիտուցիայի երկու տարատեսակներ՝ ռեստիտուցիա բնեղենով (*restitutio in integrum*), որը նախկին նյութական վիճակի վերականգնումն է, և ռեստորացիա կամ իրավական ռեստիտուցիա (*restitutio in pristinum*), որը խախտված իրավունքների վերականգնումն է: Տվյալ տարատեսակին են դասվում, մասնավորապես, ապօրինի բռնազավթման դադարեցումը, օրենսդրական, ենթօրենսդրական, վարչական և դատական ակտերի անվավեր ճանաչումը և այլն¹⁶⁰:

Պատասխանատվության մասին հոդվածներում ռեստիտուցիային նվիրված է հոդված 35-ը, համաձայն որի՝ «միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է ռեստիտուցիա իրականացնել, այսինքն՝ վերականգնել մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակը, այն ծավալով, որով այդ ռեստիտուցիան.

ա) նյութապես անհնար չէ,

բ) չի առաջացնում կոմպենսացիայից ստացված օգուտն ակնհայտորեն անհամաչափ բեռ»:

¹⁵⁸ Տե՛ս **Левин Д. Б.**, Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 115.

¹⁵⁹ Factory at Chorzów, Merits, 1928, P.C.I.J Series A, No. 17, p. 48.

¹⁶⁰ Ավելի մանրամասն տե՛ս Курс международного права: В 7 т., т. 3. Отв. ред. Н. А. Ушаков, М., «Наука», 1990, с. 237.

Անշուշտ, Հայոց ցեղասպանության պարագայում ևս ռեստիտուցիան ունի առաջնային նշանակություն: Ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համար սովորաբար անհրաժեշտ է լինում ռեստիտուցիայի բոլոր հնարավոր տարատեսակների՝ ինչպես նյութական (*restitutio in integrum*), այնպես էլ ոչ նյութական (*restitutio in pristinum*), համադրումը:

Ցեղասպանության դեպքում նյութական ռեստիտուցիան ներառում է պատճառված նյութական վնասի՝ բնեղենով հատուցումը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանությունը հաճախ ուղեկցվում է հետապնդվող խմբի ներկայացուցիչներին պատճառած լուրջ նյութական վնասով, քանզի վերջիններս սովորաբար ստիպված են լինում լքել իրենց շարժական և անշարժ գույքը (տներ, կալվածքներ, խնայողություններ, արժեթղթեր և այլն): Որպես կանոն, ցեղասպանության զոհերի ունեցվածքը կամ բռնագրավվում է պետության կողմից, կամ ոչնչացվում, կամ պարզապես հափշտակվում է դիակապտիչների կողմից:

Հետևաբար, ցեղասպանության հանցագործության դեպքում պատասխանատվություն կրող պետությունը, առաջին հերթին, պարտավոր է հատուցել այդ հանցագործությամբ պատճառված վնասը բնեղենով, որը հիմնականում ներառում է հանցագործության արդյունքում ապօրինաբար օտարված գույքը ցեղասպանության զոհերին կամ նրանց ժառանգներին և իրավահաջորդներին վերադարձնելը, իսկ վնասված լինելու դեպքում՝ այն վերականգնելը:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի 2007 թ. որոշման մեջ դիմողը՝ Բոսնիան և Հերցեգովինան, ընդունել էր, որ պատշաճ չէ դատարանից պահանջել պատասխանողի վրա նյութական ռեստիտուցիայի *restitutio in integrum*, այլ կերպ ասած՝ մինչև հակաիրավական արարքն առկա վիճակի վերականգնման պարտավորություն դնելը, քանզի ռեստիտուցիան հնարավոր չէ¹⁶¹:

¹⁶¹ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (*Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro*), Judgment, I.C.J., p.164, para. 460 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

Ցավոք, ավելի քան մեկ դար անց դժվար է ակնկալել Հայոց ցեղասպանության զոհերին պատկանած շարժական գույքը վերադարձնելը՝ չպահպանված լինելու պատճառով: Երևի թե միակ բացառությունը կարող են կազմել հայ մշակութային արժեքները, որոնց վերադարձի հեռանկարները մասնավոր հայցերի շրջանակներում կքննարկենք ստորև:

Այս տեսանկյունից, մեր կարծիքով, բնեղենով նյութական ռեստիտուցիան (*restitutio in integrum*) դժվար թե Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հիմնական ձև հանդիսանա: Սակայն նշվածը որևիցե կերպ չպետք է ընկալվի իբրև ընդհանրապես պատասխանատվության նման տեսակի բացառում: Հայոց ցեղասպանության զոհերին պատկանած գույքը պահպանված լինելու վերաբերյալ բավարար հիմքերի ու պահպանված իրավական ապացույցների առկայության բոլոր դեպքերում ռեստիտուցիայի պահանջ կարող է ներկայացվել:

Այլ կերպ է դրված հարցը ռեստորացիայի (այսպես կոչված՝ «իրավական ռեստիտուցիայի»), այսինքն՝ մինչև տվյալ հանցագործությունը գոյություն ունեցած իրավական վիճակի՝ *status quo ante*-ի վերականգնման դեպքում: Հենց այս իմաստով էլ ռեստիտուցիան հիմնարար նշանակություն ունի Հայոց ցեղասպանությանը պատճառված վնասի հատուցման գործում:

Իրավական ռեստիտուցիայի ձևեր կարող են լինել՝ ի խախտումն միջազգային իրավունքի ընդունված օրենքի անվավեր ճանաչումը կամ հակաիրավական կերպով ընդունված վարչական կամ դատական ակտի վերանայումը: Կարող է նաև որոշակի միջազգային պայմանագիրը դադարեցնելու ուղղված միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացվել, եթե միջազգային իրավունքը դա թույլ է տալիս¹⁶²:

Նշված ձևերից ցեղասպանության դեպքում առաջնային նշանակություն ունեն օրենսդրական փոփոխությունները, առաջին հերթին՝ ցեղասպանության քաղաքականությունն ուղղակի կամ

¹⁶² Стів Лукашук И. И., Право международной ответственности, М., «Волтерс Клувер», 2004, с. 214:

անուղղակի կերպով լեգիտիմացնող օրենքներն ու համապատասխան նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանության հանցագործության կատարման դեպքում օրենսդիր մարմիններն ընդունում են օրենքներ, որոնք ուղղակի կամ քողարկված ձևով լեգիտիմացնում են ցեղասպանության քաղաքականությունը: Նման քողարկված լեգիտիմացման դեպքերից են, մասնավորապես, նացիստական Պերմանիայում ընդունված՝ ռասայական սեգրեգացիան ամրագրող փաստաթղթերը (օրինակ՝ 1935 թ. սեպտեմբերի 15-ի Նյուրնբերգյան օրենքները), իսկ քողարկված լեգիտիմացման դեպքերից՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից անմիջապես հետո ընդունված օրենքները, մասնավորապես՝ հայերի սեփականության բռնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց վերադառնալու և բնակություն հաստատելու իրավունքից զրկող օրենքները և այլն¹⁶³: Հայոց ցեղասպանության դեպքում իրավական ռեստիտուցիան կարող է ներառել, մասնավորապես, նշված իրավական ակտերն անվավեր ճանաչելը, քանզի առանց դրա անհնար է Հայոց ցեղասպանությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը:

Ընդ որում, չեղարկվել կարող են ոչ միայն դեռևս գործող օրենքները, այլ նաև արդեն իսկ ուժը կորցրածները՝ ի սկզբանե (*ex tunc*) ոչ իրավաչափ լինելու հիմքով: Նման «ի սկզբանե» օրենքները չեղարկելու պարագայում կչեղարկվեն նաև դրանց հիման վրա ընդունված իրավակիրառ ակտերը՝ հնարավորու-

¹⁶³ Այսպես, օրինակ, 1923 թ. սեպտեմբերին Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո Թուրքիայում ընդունվեց օրենք, որով վերադառնալու իրավունքից զրկվում էին Կիլիկիայից և արևելյան վիլայեթներից «արտագաղթած» հայերը, իսկ 1927 թ. մայիսի 23-ին օրենք ընդունվեց, որով գործադիր իշխանությունը լիազորվում էր հայտարարել «Օսմանյան կայսրության այն հպատակներին, որոնք անկախության համար պատերազմի ժամանակ ազգային պայքարին մասնակցություն չեն ունեցել, գտնվել են Թուրքիայից դուրս և չեն վերինտեգրվել թուրքական տարածքում 1923 թ. հուլիսի 24-ի և սույն օրենքի ընդունման միջև ընկած ժամանակահատվածում՝ զրկված Թուրքիայի քաղաքացու իրենց կարգավիճակից»: Ավելի մանրամասն տես **Барсеров Ю. Г.**, Геноцид армян - преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 199-200.

թյուն ընձեռելով Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներին վերականգնել իրենց նախնիների համապատասխան իրավունքները:

Նոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը ևս պետք է դիտել որպես ցեղասպանության հանցագործության համար իրավական ռեստիտուցիայի դրսևորում: Ելնելով կոնկրետ իրավիճակից՝ տվյալ օրենսդրական ակտերը կարող են վերաբերել քրեական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելուն, ցեղասպանության փաստը չճանաչելու համար պատասխանատվություն նախատեսելուն (Գերմանիայի օրինակով), խմբի անդամներին պատճառված նյութական և ոչ նյութական վնասի հատուցմանը նպատակաուղղված միջոցներ ձեռնարկելուն, հասարակությունում հակասությունների հարթեցման աջակցմանն ու հետապնդվող խմբի անդամների ռեաբիլիտացիային և տվյալ հասարակությունում վերջիններիս վերաինտեգրմանը և այլն:

Գտնում ենք, որ սա սոսկ օրինակելի ցանկ է և կարող է ներառել նաև իրավական հատուցման այլ տարատեսակներ: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Հայոց ցեղասպանության հետևանքով ցեղասպանության բազում զոհեր ստիպված էին ապաստան գտնել այլ պետություններում (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իրան, Պաղեստին, Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան, Սերբիա, Խորվաթիա, Կիպրոս, Ֆրանսիա, Եթովպիա, Եգիպտոս և այլն)՝ վերածվելով փախըստականների և կորցնելով կապերն իրենց հայրենակիցների հետ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ գտնում ենք, որ որպես իրավական ռեստիտուցիայի տարատեսակ, ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը պարտավոր է և կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի ժառանգների ու իրավահաջորդների վերադարձի և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչը, մեր կարծիքով, լավագույն կերպով կանդրադառնար արևմտահայերի հետագա ասիմիլյացիան կանխարգելելուն և կաջակցեր պատմական հայրենիքում հայ-

կական ազգաբնակչության հետագա վերականգնմանը: Առանց նման պայմանների ստեղծման, առանց ցեղասպանության զոհերին և նրանց ժառանգներին ու իրավահաջորդներին ավանդական բնակության վայրեր վերադառնալու հնարավորության ապահովման՝ անհնար է տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը:

Կոմպենսացիա (փոխհատուցում). պատասխանատվության մասին հողվածների հողված 35-ի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ռեստիտուցիան բացարձակ բնույթ չի կրում: Այն իրականացվում է այն ծավալով և այն չափով, որով այն անհնար և կոմպենսացիայից ստացված օգուտն անհամաչափ չէ:

Կոմպենսացիան (փոխհատուցումը) ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համընդգրկուն ձև է: Այն հատկապես կարևոր է Հայոց ցեղասպանության պարագայում և, ըստ էության, կարող է այդ հանցագործության համար նյութական պատասխանատվության կենտրոնական ձև հանդիսանալ:

Ընդհանրապես, ցեղասպանության հանցագործության պարագայում կոմպենսացիան պատճառած վնասի հատուցման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար միջոց է: Կոմպենսացիայի իրավունքն ամրագրված է ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով: «Լուզիտանիա» նավի գործով 1923 թ. հայտնի արբիտրաժային որոշման մեջ, մասնավորապես, սահմանվում էր, որ ««վնասի հատուցման» հիմնական հայեցակարգը կայանում է կրած վնասի հատուցման՝ հակաիրավական արարքի համար դատական կարգով սահմանված փոխհատուցման (կոմպենսացիայի) վճարման մեջ: Դատական պաշտպանության միջոցը պետք է համապատասխան լինի պատճառված վնասին, որպեսզի տուժող կողմը կարողանա լիարժեք հատուցում ստանալ»¹⁶⁴:

Պատասխանատվության մասին հողվածներում կոմպենսացիայի վերաբերյալ դրույթները սահմանված են հետևյալ կերպ.

¹⁶⁴ «Լուզիտանիա» նավի գործով որոշումը: RIAA Vol. VII (1923), p. 39.

«Միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է փոխհատուցել այդպիսի արարքով պատճառած վնասն այնքանով, որքանով այդ վնասը չի հատուցվում ռեստիտուցիայով» (հոդված 36, կետ 1): Նույն հոդվածի կետ 2-ը սահմանել է, որ «Կոմպենսացիան ընդգրկում է ֆինանսական արտահայտությամբ հաշվարկվող ցանկացած վնաս՝ ներառյալ բաց թողնված օգուտն այնքանով, որքանով այն հաստատված է»:

Ինչպես երևում է նշված դրույթների վերլուծությունից, Պետությունների պատասխանատվության մասին հոդվածները կոմպենսացիայի բավական ձկուն բանաձև են որդեգրել, ինչը, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ արտացոլում է միջազգային իրավական պրակտիկան և լիովին հիմնավորված է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր առանձին դեպքում կոմպենսացիայի չափի որոշումը պայմանավորված է համապատասխան իրավախախտման առանձնահատկություններով:

Ընդ որում՝ պետք է նշել, որ դրամով հաշվարկվող վնասը ներառում է ինչպես բուն պետությանը, այնպես էլ դրա ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը¹⁶⁵: Ցեղասպանության հանցագործության պարագայում առաջնային նշանակություն ունի հենց ցեղասպանության զոհերին, այլ ոչ թե պետությանը պատճառված վնասը: Թեև Հայոց ցեղասպանության արդյունքում հենց Հայաստանի Հանրապետությանն է պատճառվել հսկայական նյութական վնաս, որն արտահայտվել է ցեղասպանությամբ պատճառված վնասի վերացմանը կան նվազեցմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկմամբ, այդուհանդերձ, կոմպենսացիայի հարցում հիմնական բեռն ընկնում է հենց ցեղասպանության զոհերին պատճառված վնասի վրա:

¹⁶⁵ Տե՛ս **Лукашук И. И.**, *Право международной ответственности*, М., «Волтерс Клувер», 2004, с. 217:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ փոխհատուցման ենթակա է ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառված նյութական, այլ նաև ոչ նյութական (բարոյական) վնասը, որի ներքո սովորաբար հասկանում են հարազատների և ազգականների կորուստը, ցավը և տառապանքը, անձի, բնակարանի կամ մասնավոր կյանքի նկատմամբ ոտնձգությունների հետ կապված զգացմունքների վիրավորումը և այլն:

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը Պատասխանատվության մասին հոդվածների մեկնաբանություններում հատուկ ընդգծել է ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը՝ նշելով այն հանգամանքը, որ ոչ նյութական վնասը կարող է ունենալ դրամական արտահայտություն և կարող է համապատասխան պահանջի հիմք դառնալ: Նշվածը հաստատվում է ծավալուն միջազգային իրավական պրակտիկայով: Այսպես, օրինակ, «Լուզիտանիա» նավի գործով 1923 թ. արբիտրաժային որոշման մեջ նշվում էր, որ միջազգային իրավունքը փոխհատուցում է նախատեսում հոգեկան տառապանքների, զգացմունքները վիրավորելու, անձին և նրա արժանապատվությունը նվաստացնելու, հասարակական դիրքից զրկելու, վստահությանը կամ հեղինակությանը վնաս պատճառելու համար: Միաժամանակ նշվում էր, որ նման վնասը «լիովին իրական է, և այն ակնհայտ փաստը, որ այն դժվար է ենթարկվում քանակական որոշման կամ դրամական արտահայտությամբ գնահատման, չի դարձնում այն նվազ իրական և հիմքեր չի տալիս տուժած անձին համապատասխան փոխհատուցումից զրկելու համար»¹⁶⁶: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ 20-րդ դարասկզբին ձևավորված դատական պրակտիկան վկայում է բարոյական վնասը դրամական արտահայտությամբ փոխհատուցելու հնարավորության և իրավաչափության մասին, ինչը կարևոր է Հայոց ցեղասպանության պարագայում Թուրքիայի Հանրապետությանը՝ նման վնասը փոխհատուցելու համապատասխան պահանջները հիմնավորելու տեսանկյունից:

¹⁶⁶ «Լուզիտանիա» նավի գործով որոշումը: RIAA Vol. VII (1923), p. 32.

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության պարագայում հատկապես սուր է դրված ցեղասպանության գոհերի ժառանգների և իրավահաջորդների կողմից միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու հնարավորության խնդիրը, քանի որ այդ հանցագործության դեպքում գոհերի մեծամասնությունը ֆիզիկապես ոչնչացվում է՝ բնականաբար զրկվելով իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունից: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը, անդրադառնալով նշված հիմնախնդրին, սահմանել է, որ «անձի մահվան հետ կապված պահանջների դեպքում վնասը, որպես կանոն, որոշվում է ժառանգների կամ իրավահաջորդների կողմից վնասների գնահատման հիման վրա»: Այս հարցի վերաբերյալ համապատասխան կանոնները ևս շարադրվել են «Լուգիտանիա» նավի գործով արբիտրաժային որոշման մեջ, որում ուղղակիորեն նշվում էր, որ հատուցման ենթակա են հետևյալ գումարները.

- «ա) որոնք հանգուցյալը՝ եթե կենդանի մնար, կարող էր փոխանցել հայցվորին,
- բ) հանգուցյալի՝ հայցվորին նրա ապահովման, կրթության կամ հսկողության համար հատկացվելիք անձնական ծառայությունների դրամական արժեքը և
- գ) ողջամիտ փոխհատուցում ընտանեկան կապերի բռնի խզմամբ պատճառած այնպիսի հոգեկան տառապանքների կամ ցնցումների համար, եթե այդպիսիք տեղի են ունեցել, որոնք հայցվորը կարող էր փաստացիորեն ապրել նման մահվան արդյունքում:

Այդպիսի գնահատումների գումարը՝ դրանց ներկայիս դրամական արժեքի հաշվարկմամբ նվազեցրած, որպես կանոն, և կկազմի հայցվորի կրած վնասը»¹⁶⁷:

Ըստ էության, ցեղասպանության հանցագործության պարագայում հետապնդվող խմբի անդամների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, ռեզեներացիային, հոգեկան վիճակին վնաս

¹⁶⁷ Նույն տեղում:

պատճառելը, նրանց ազգականների և հարազատների մահվան արդյունքում բոլոր տեսակի առավելություններից զրկվելն էլ կազմում է բարոյական վնասի հատուցման հիմքը:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված վնասների նախնական գնահատման մեկ կարևոր փորձ իրականացվել է դեռևս 1919 թ. Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար Փաշայի նախաձեռնությամբ, որը ներկայացվել էր 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին: Նյութական հատուցման վերաբերյալ հուշագիրը, որը կրում էր «Թուրքիայի և Կովկասի Հայկական Հանրապետության հայ բնակչության կրած վնասների ռեպարացիայի և հատուցման մոտավոր աղյուսակ» անվանումը, անդրադարձնում էր այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունեցել Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայ բնակչության շրջանակներում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Հուշագրի համաձայն՝ 1914 թ. դրությամբ Օսմանյան կայսրությունում բնակվող հայության թիվը կազմում էր 2,026,000: Այս թվից միայն 4. Պոլսում և Ջմյուռնիայում բնակվող 226 հազարն էր, որ չէր կրել Հայոց ցեղասպանության բոլոր բացասական հետևանքները. մնացած 1,800,000-ը տեղահանվեցին, սպանվեցին կամ ապաստան գտան Եվրոպայում, Մերձավոր Արևելքում կամ Կովկասում՝ լքելով իրենց գույքը:

Հիմնվելով վիճակագրական սկզբունքների վրա՝ այդ 1,800,000-ը ներառում էին 360,000 ընտանիք (1 ընտանիք՝ 5 անդամ հաշվարկով), որից 1/4-ը (90,000 ընտանիք) բնակվում էր քաղաքներում, մինչդեռ մնացած 3/4-ը (270,000 ընտանիք)՝ գյուղական վայրերում:

Հուշագիրը հիշատակում էր 19,130,932,000 ֆրանսիական ֆրանկ թիվը (հիմնված 1919 թ. կիրառվող արժույթի վրա) որպես պատճառված վնասների արժեք, որից 14,598,460,000 ֆրանկը Օսմանյան կայսրության հայերին պատճառված վնասներն էին, իսկ 4,532,472,000 ֆրանկը՝ Հայաստանի Հանրապետության և Կովկասի հայերին պատճառված վնասները:

Այս հաշվարկները, իհարկե, չեն ներառում 1919 թ. մինչ օրս ձեռնարկությունների և այլ սեփականությունից բացթողնված եկամուտը, չեն ներառում հայերին պատկանող և թուրքական բանկերում պահվող ֆինանսական միջոցների, ոսկու, մուրհակների և արժեթղթերի վրա կուտակված տոկոսները, դրանք չեն ներառում ոչ նյութական վնասները, որոնք կապված են հայրենագրկման և մշակութային ժառանգությունից զրկելու, մշակութային կոթողների ոչնչացման և պատմության կեղծման հետ:

Զնայած հակառակ այդ ամենի՝ հատուցումների հուշագիրը պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվել է Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից և որպես այդպիսին հանդիսանում է Հայոց ցեղասպանությամբ հայությանը պատճառված կոլեկտիվ վնասների գնահատման համար անգնահատելի սկզբնակետ:

Ամփոփելով նշվածը՝ կարող ենք նշել, որ կոմպենսացիայի նմանօրինակ ընկալումն ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ դատական պրակտիկայում, թույլ է տալիս եզրակացնել, որ այն Հայոց ցեղասպանությամբ պատճառված վնասի նյութական հատուցման իդեալական ձև կարող է լինել՝ հնարավորություն ընձեռելով փոխհատուցել ինչպես նյութական կորուստները, այնպես էլ բարոյական վնասը:

Սատիսֆակցիա. սատիսֆակցիան միջազգային հակաիրավական արարքով պատճառված բարոյական վնասի հատուցման ձևն է: Սատիսֆակցիայի նման ընկալումը լայնորեն ճանաչված է ինչպես միջազգային իրավունքի գիտության մեջ, այնպես էլ պրակտիկայում¹⁶⁸: Պատասխանատվության մասին հողվածների համաձայն՝ «Միջազգային հակաիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է սատիսֆակցիան տրամադրել տվյալ արարքով պատճառած վնասի համար այնքանով, որքանով այն չի կարող հատուցվել

¹⁶⁸ Տե՛ս **Левин Д. Б.**, Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 214-215; **Василенко В. А.**, Ответственность государств за международные правонарушения, Киев: «Вища школа», 1976, с. 213:

ռեստիտուցիայով կամ կոմպենսացիայով» (հոդված 37, կետ 1): Թեև սատիսֆակցիայի ձևերի որևիցե կոնկրետ ցանկ միջազգային իրավունքում նախատեսված չէ, այդուհանդերձ, նշված հոդվածի երկրորդ կետն առաջարկում է պատասխանատվության ձևերի, որոնք կարող են ներառվել սատիսֆակցիա հասկացության շրջանակների մեջ, մոտավոր ցանկը, մասնավորապես, նշելով, որ «սատիսֆակցիան կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևի միջոցով»: Սատիսֆակցիայի ձևը և ծավալը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է իրավախախտման բնույթից և ծանրությունից¹⁶⁹: Երևի թե ոչ ոքի մոտ կասկած չի առաջացնում այն հանգամանքը, որ ցեղասպանությունն իր բնույթով և ծանրությամբ ենթադրում է սատիսֆակցիայի ամենալուրջ ձևերի կիրառումը: Պատասխանատվության մասին հոդվածները նախատեսում են սատիսֆակցիայի կիրառման անհնարինությունը միայն այն դեպքում, երբ այն անհամաչափ է վնասին կամ կարող է ընդունել պատասխանատվություն կրող պետությանը նվաստացնող ձև:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը 2007 թ. Բոսնիան և Հերցեգովինան Սերբիայի դեմ գործով կայացրած որոշմամբ նշեց, որ հստակ է, որ դիմողը իրավասու է սատիսֆակցիայի տեսքով հատուցում պահանջել, և այն կարող է ընդունել առավել պատշաճ ձև, ինչպես դիմողն ինքն է առաջարկել, սույն որոշման մեջ հռչակել, որ պատասխանողը ձախողվել է Կոնվենցիայում նախատեսված՝ ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու պարտավորությանը համապատասխանելու հարցում¹⁷⁰:

Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ ցեղասպանությունների այլ դեպքերում, շատ հաճախ պատասխանատվու-

¹⁶⁹ Տե՛ս **Рассказов Л. П., Упоров И. В.**, Понятие и принципы ответственности в международном праве // Московский журнал международного права, 2000, № 2 (38), с. 43-44:

¹⁷⁰ Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.165, para. 462 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>.

թյուն կրող պետությունը չի ճանաչում, ժխտում է դրա կատարման փաստը, ահա ինչու արդեն իսկ ցեղասպանության փաստի ճանաչման հնարավորությունը՝ որպես սատիսֆակցիա, ձեռք է բերում հատուկ նշանակություն: Թեև միջազգային իրավունքում գոյություն չունի հստակ ձևավորված պրակտիկա ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվության ձևերի և տեսակների հարցում, ինչը թույլ չի տալիս ներկայացնել ցեղասպանության համար կիրառելի սատիսֆակցիայի ձևերի լրիվ կամ գոնե մոտավոր ցանկը, այդուհանդերձ, ցեղասպանության հանցագործության բնույթը և կուտակված միջազգային իրավական պրակտիկան թույլ են տալիս ենթադրել, որ ցեղասպանության հանցագործության դեպքում որպես սատիսֆակցիայի տարբեր դրսևորումներ կարող են հանդես գալ՝ ցեղասպանության համար անկյունաքարային նշանակություն ունեցող՝ ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումից զատ, նաև ձևական (ֆորմալ) ափսոսանքի արտահայտումը, ցեղասպանության փաստի ժխտման տարբեր դրսևորումների կանխմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, ցեղասպանության մեջ մեղավոր անձանց դատապարտումը¹⁷¹, տվյալ մարդկային խմբին պատկանող մշակութային, պատմական և կրոնական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցառումների մշակումը, ի հիշատակ ցեղասպանության զոհերի՝ հուշարձանների և հուշակոթողների կառուցումը և այլն:

Հայոց ցեղասպանության պարագայում սատիսֆակցիան կարող է ներառել հետևյալ միջոցները. նախևառաջ՝ Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական հրապարակային ճանաչումն ու ափսոսանքի և ցավակցության արտահայտումը, Հայոց ցեղասպանության փաստի մերժման քաղաքականությունից հրաժարումը և անհրաժեշտ օրենսդրության ընդունումը, որն ի վիճակի կլինի համարժեք

¹⁷¹ Այն դեպքերում, երբ տվյալ անձինք մինչև պետությանը միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելը չեն դատապարտվել կամ ազգային, կամ միջազգային դատական մարմինների կողմից:

կերպով հակազդել Հայոց ցեղասպանության ժխտման տարատեսակ դրսևորումներին, Հայոց ցեղասպանության մեջ մեղավոր անձանց հրապարակային դատապարտումը, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցների մշակումը¹⁷²:

Սրանք ընդամենը սատիսֆակցիայի այն հնարավոր դրսևորումներն ու տարատեսակներն են, որոնք, մեր կարծիքով, կարող են կիրառելի լինել Հայոց ցեղասպանությամբ պատճառված ոչ նյութական վնասները հատուցելու պարագայում:

Ամփոփելով նշվածը՝ կցանկանայինք ևս մեկ անգամ նշել, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը և այդ հանցագործությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը կարող է պարարտ հող ստեղծել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները բնականոն հուն տեղափոխելու համար և նպաստել տարածաշրջանում կայունության և հարատև գարգացման ամրապնդմանը: Ավելին, գտնում ենք, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը Թուրքիայի կողմից կարող է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները միասնական եվրոպական տարածության մեջ վերջինիս համապարփակ ինտեգրման համար:

¹⁷² Այս առումով բավական հետաքրքրական է Յու.Գ.Բարսեղովի առաջարկը, որպեսզի Թուրքիայի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ծրագիր ընդունի՝ ուղղված իր տարածքում գտնվող հայկական մշակույթի հուշարձանների հետագա քայքայման դեմ, ինչպես նաև որպես պատմական արգելոց առանձնացնի կամ Հայաստանին հանձնի դրա սահմանին հարող միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակներով փոքրիկ տարածքը: Տե՛ս **Барсегов Ю. Г.**, Геноцид армян - преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 13:

3. Հայոց ցեղասպանության միջնորդավորված հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն

Ընդհանուր առմամբ, Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցները բազմաբնույթ են և բազմաբովանդակ: Նման պահանջները կարող են ընդգրկել պատճառված գույքային և բարոյական վնասի հատուցմանն ուղղված տարաբնույթ գործողություններ ոչ միայն Թուրքիայի, այլ նաև այլ երկրների ազգային իրավազորության ներքո:

Պետք է նշել, որ նման պահանջներ իրավասու են ներկայացնել թե՛ անհատները, թե՛ համապատասխան հաստատությունները, ներառյալ՝ եկեղեցին և այլ կրոնական կազմակերպությունները: Պատճառված գույքային կամ բարոյական վնասի հատուցման համար ներկայացվելիք յուրաքանչյուր պահանջ ենթադրում է համապատասխան իրավական գործընթաց՝ պայմանավորված յուրաքանչյուր պետության օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկություններով: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նման պահանջներ ներկայացնելիս, առնվազն նյութաիրավական առումով, պետք է առաջնորդվել իրավախախտումները կատարելու պահին գործող օրենսդրությամբ (եթե նման խախտումները չեն կրում շարունակական բնույթ):

Նման վնասը ներառում է կորսված կյանքերը, յուրացված, ոչնչացված և բռնագրավված սեփականությունը, բաց թողնված օգուտը (եկամուտները), խեղված ինքնության, փաստերի մերժման և պատմության շարունակական կեղծման, ոչ միայն Հայոց ցեղասպանության հերքման, այլև արևմտահայությանն իր սեփական պատմության մերժման հետ կապված բարոյական վնասը, վնասներ՝ կապված պատմական կոթողների ոչնչացման, յուրացման և ձևախեղման հետ և այլն:

Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքներից առավել արդիական պետք է համարել ունեզրկման, սեփականության

յուրացման, առգրավման, բռնագրավման և ոչնչացման հետ կապված հարցերը: Հայոց ցեղասպանության գոհերի ժառանգների իրավական պահանջները՝ ուղղված իրենց նախնիներին պատկանող սեփականության վերականգնմանը, իհարկե, պետք է ներկայացվեն հենց Թուրքիայի իրավագործությանը, այդուհանդերձ, տվյալ պարագայում, պայմանավորված Թուրքիայի ժխտողական դիրքորոշմամբ, նման պահանջներ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք բախվում են բազում իրավական խոչընդոտների: Խոսելով Հայոց ցեղասպանության արդյունքում սեփականագրվման առունով պահանջներ ներկայացնելու մասին՝ նախևառաջ նկատի ունենք Հայոց ցեղասպանության գոհերին մասնավոր կամ համայնքային սեփականության իրավունքով պատկանող *անշարժ գույքին* առնչվող իրավական պահանջները, հատկապես հողի և պահպանված կառույցների և շինությունների առնչությամբ: Անշարժ գույքին առնչվող նման հայցապահանջներ ներկայացնելու համար կարևոր նշանակություն ունի անշարժ գույքի պետական գրանցում իրականացնող մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը, քանի որ անշարժ գույքի նկատմամբ տիտղոսի փոխանցումը պայմանավորված է պետական գրանցման գործընթացի պահպանմամբ:

Այս առունով տեղեկատվության առաջնային աղբյուր են հանդիսանում Թուրքիայի Հողային ռեգիստրի և կադաստրի գլխավոր տնօրինության վերահսկողության ներքո գտնվող տվյալները: Սակայն 2001 թ. հունիսի 29-ին վերջինս արձակեց հրաման՝ արգելելով «լքյալ գույքի» վերաբերյալ ցանկացած տեղեկատվության հրապարակումը և բացահայտորեն խախտելով արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը և սեփականության խաղաղ իրացման իրավունքը՝ սահմանված, համապատասխանորեն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով: Այս փաստը, ինչպես ցույց կտրվի ստորև, էական հետևանքներ ունի Հայոց ցեղասպանության արդյունքում պատ-

ճառված միջնորդավորված հետևանքների առկայության ապացուցման բեռի և ապացուցման շեմի որոշման համար:

Պատճառված վնասները քննարկելիս և հաշվի առնելով նաև թուրքական պետության՝ ապացույցների ոչնչացմանը և գաղտնագրմանն ուղղված մեկդարյա գործունեությունը՝ անհրաժեշտ է անդրադառնալ ապացուցման շեմի և ապացուցման բեռի բաշխման հիմնահարցերին: Այս առումով առանձնակի կարևորություն են ներկայացնում միջազգային դատական ատյանների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից օգտագործվող չափանիշները:

Այսպես, ՄԱԿ-ի միջազգային դատարանի պրակտիկայի համաձայն ապացուցման շեմը ենթակա է նվազեցման այնպիսի իրավիճակներում, երբ պատասխանող կողմը, ինչպես 1915 թ. իրադարձությունների դեպքում (որոնք ամբողջությամբ տեղի են ունեցել ժամանակակից Թուրքիայի, Հայաստանի Հանրապետության և մասամբ՝ նաև Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքում), ունի լիարժեք վերահսկողություն այն տարածքի նկատմամբ, որտեղ տեղի են ունեցել վիճելի գործողությունները և երբ հայցվորների ապացույցներից օգտվելու հնարավորությունը սահմանափակված է:

Այսպես՝ *Քորֆու ջրանցքի վերաբերյալ գործով* ՄԱԿ-ի միջազգային դատարանը նշել է. Այս բացառիկ վերահսկողության ուժով, մյուս [կողմը]՝ միջազգային իրավունքի խախտման գոհը, հաճախ անկարող է լինում ներկայացնել պատասխանատվության համար հիմք հանդիսացող փաստերի անմիջական ապացույց: Նման [կողմին] պետք է իրավունք վերապահվի հետևություններ անելու ոչ անմիջական ապացույցներից¹⁷³:

Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ Հայոց ցեղասպանության մասին խոսելիս գործ ունենք այնպիսի իրադարձությունների հետ, որոնք խնդրո առարկա ժամանակահատվածում արժանացել են լայնածավալ հանրային քննարկման և ճանաչման: Նման լայնածավալ հանրային քննարկման արժանացած

¹⁷³ Corfu Channel (UK/Albania), 1949 I.C.J. Reports 4, p. 18.

իրադարձությունները ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից որակվել են որպես «հանրային իմացություն», որոնց ապացուցման շեմը ենթակա է նվազեցման¹⁷⁴:

Վերոնշյալ գործոնները և միջազգային չափանիշները պետք է հաշվի առնվեն ապացուցման շեմի նվազեցման համար: Առերևույթ ապացույցներն ինքնին բավարար են արևմտահայության պահանջներն ապացուցված համարելու համար, որից հետո արդեն Թուրքիայի Հանրապետության պարտականությունն է դառնում ապացուցել հակառակը:

Թուրքիայի ազգային դատական իրավագործության ներքո համապատասխան գույքային և ոչ գույքային պահանջներ ներկայացնելու պարագայում չպետք է անտեսվեն երիտթուրքերի դատավարությունների արդյունքները:

Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների վերացմանն ուղղված մի շարք դատավարություններ՝ տարատեսակ ելքերով, արդեն իսկ իրականացվել են տարբեր երկրների իրավագործությունների ներքո: Վերլուծելով Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների վերացմանն ուղղված դատական պահանջները՝ կարող ենք պայմանականորեն առանձնացնել հետևյալ խումբ հայցերը.

1. Հայոց ցեղասպանությունից առաջ կամ դրա ընթացքում իրենց կյանքը ապահովագրած անձանց մահվան համար ապահովագրական ընկերությունների դեմ ներկայացված հայցեր:
2. Հայոց ցեղասպանության արդյունքում բռնագրավված, ապօրինի օտարված, ոչնչացված կամ յուրացված գույքի վերադարձմանը կամ դրա համար փոխհատուցում պահանջելուն ուղղված հայցեր:
3. Հայոց ցեղասպանության արդյունքում յուրացված հայ մշակութային արժեքների վերադարձմանն ուղղված հայցեր:

¹⁷⁴ *United State Diplomatic and Consular Staff in Tehran (U.S.A. v. Iran)*, 1980 I.C.J. Reports 3, p. 9, ¶12.

4. Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալուն ուղղված հայցեր:

Հայոց ցեղասպանությունից առաջ կամ դրա ընթացքում իրենց կյանքն ապահովագրած անձանց մահվան համար ապահովագրական ընկերությունների դեմ ներկայացված հայցերն առավելապես հարուցվել են ԱՄՆ դատական իրավագործության ներքո: Նշված գործընթացն զգալիորեն պայմանավորված էր Կալիֆոռնիայի նահանգային օրենսդրության մակարդակով հայանապատ օրենսդրության ընդունմամբ, որի արդյունքում հնարավոր եղավ երկարաձգել Հայոց ցեղասպանության առնչությամբ ապահովագրական ընկերությունների դեմ հայց ներկայացնելու վաղեմության ժամկետները: Այսպես, 2000 թվականին Կալիֆոռնիայի խորհրդարանն ընդունեց օրենսդրական ակտ, որով Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներն իրավունք ձեռք բերեցին մինչև 2010 թվականի ավարտը դատական կարգով փոխհատուցում պահանջել այն ապահովագրական ընկերություններից, որոնք ապահովագրել են իրենց զոհված նախնիներին¹⁷⁵: Տվյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգային դատարանում հարուցվեց հավաքական հայց «New York Life Insurance» ընկերության դեմ, որի շրջանակներում հայցվորները պահանջում էին փոխհատուցում տրամադրել 50 միլիոն ԱՄՆ դոլարի չափով այդ ընկերությունում իրենց կյանքն ապահովագրած Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներին: Արդյունքում՝ կողմերը դատական կարգով կնքեցին հաշտության համաձայնություն, որով ընկերությունը պարտավորվեց 20 միլիոն ԱՄՆ դոլարի չափով փոխհատուցում տրամադրել հայցվորներին:

2002 թ. կրկին Կալիֆոռնիայում հավաքական հայց (Class action) ներկայացվեց Ֆրանսիական AXA ապահովագրական ընկերության դեմ: «Քյուրքջյանը և Ուզունյանն ընդդեմ AXA-ի» անունն ստացած դատավարությունն անցնում էր ԱՄՆ Կալի-

¹⁷⁵ **К. Маноян:** Обама должен выступить против решения Федерального апелляционного суда <http://glamakama.com/index.php?name=pages&op=printe&id=3254>

Ֆոռնիա նահանգի կենտրոնական շրջանի դատարանում: AXA ընկերությունը հանդիսանում է «L'Union Vie», «Caisse Paternelle» և «La Confiance» ֆրանսիական ապահովագրական ընկերությունների իրավահաջորդը, որոնք 1880-1930 թթ. ապահովագրական գործունեություն են իրականացրել Օսմանյան կայսրության տարածքում՝ ապահովագրելով, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության զոհ դարձած բազում հայերի կյանքերը: Դատարան ներկայացված ցուցակում առկա էր ավելի քան 7000 հայի անուն: 2006 թ. մայիսի 16-ին դատավոր Քրիստինա Շնայդերը հաստատեց կողմերի միջև ձեռքբերված հաշտության համաձայնությունը, որի արդյունքում պահանջներ ներկայացրած զոհերի իրավահաջորդներն ստացան մոտ 17 միլիոն ԱՄՆ դոլարի փոխհատուցում: 2003 թ. հայց հարուցվեց «Victoria» գերմանական ապահովագրական ընկերության, իսկ 2008 թ. սեպտեմբերին նմանօրինակ հայց հարուցվեց նաև «Aviva» բրիտանական ապահովագրական ընկերության դեմ:

Այդուհանդերձ, Կալիֆոռնիայի իրավագործության ներքո ապահովագրական ընկերությունների դեմ հայցեր ներկայացնելն արգելափակվեց ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից, որը հաստատեց ԱՄՆ 9-րդ շրջանի դաշնային վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը, ըստ որի՝ Կալիֆոռնիայի նահանգային օրենքը համահունչ չէ դաշնային օրենսդրությանը, քանզի խոչընդոտում է օտարերկրյա պետությունների հետ հարաբերություններին¹⁷⁶:

Հայոց ցեղասպանության արդյունքում բռնագրավված, ապօրինի օտարված, ոչնչացված կամ յուրացված գույքի վերադարձմանը կամ դրա համար փոխհատուցում պահանջելուն ուղղված հայցերը, ելնելով իրենց բնույթից, չափազանց տարատեսակ են: Դրանք, ի տարբերություն վերը նշված հայցերի, ապահովագրական ընկերությունների դեմ հարուցվել են ինչպես թուրքիայի, այնպես էլ այլ օտարերկրյա դատական իրավագոր-

¹⁷⁶ Верховный суд США не станет пересматривать неблагоприятное для армян решение <http://www.azatutyun.am/a/25015301.html>

րությունների ներքո: Մասնավորապես, Թուրքիայի իրավագործության ներքո որոշ հայցեր են հարուցվել բռնագրավված գույքի վերադարձման առնչությամբ, սակայն, ինչպես նշել ենք վերը, Թուրքիայում առկա ընդհանուր ժխտողական քաղաքականության և հստակ օրենսդրական խոչընդոտների առկայության պարագայում դրանց դրական ելքն առավել մշուշոտ է թվում: Փոքրինչ այլ է իրավիճակն այլ պետությունների իրավագործության ներքո ներկայացված նմանօրինակ հայցերի պարագայում:

Այսպես, 2006 թ. փետրվարին կրկին ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգային իրավագործության ներքո հայց է ներկայացվել «Deutsche Bank»-ի դեմ՝ Հայոց ցեղասպանության զոհ դարձաց անձանց բանկային հաշիվներում պահվող գումարները և այլ արժեքավոր իրերը չվերադարձնելու, ինչպես նաև Հայոց ցեղասպանության տարիներին Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման ժամանակ հայերի հարկադիր աշխատանքը փոխհատուցելու պահանջով: Նմանատիպ հայց է ներկայացվել նաև «Dresdener Bank» ընկերության դեմ:

2010 թ. դեկտեմբերին կրկին ԱՄՆ իրավագործության ներքո հավաքական հայց հարուցվեց Թուրքիայի Հանրապետության, Թուրքիայի կենտրոնական բանկի և «Զիրաաթ» բանկի դեմ՝ 16 հայցվորի անունից Ինջիրլիք տարածաշրջանում Հայոց ցեղասպանության ընթացքում բռնագրավված հողատարածքների վերադարձման առնչությամբ:

Նույն թվականի հուլիսին կրկին ԱՄՆ-ում կոլեկտիվ հայց է ներկայացվել մի շարք հայ փաստաբանների կողմից (Davoyan v. Turkey) Թուրքիայի Հանրապետության, Թուրքիայի կենտրոնական բանկի և «Զիրաաթ» բանկի դեմ՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին բռնագրավված ողջ սեփականության համար, ներառյալ նաև Սսի Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի առնչությամբ:

Տվյալ գործերով դատավարությունները դեռ գտնվում են ընթացքում և դրանցով վերջնական որոշումներ դեռևս չեն կայացվել: Պետք է նշել, սակայն, որ չափազանց վտանգավոր պետք է համարել հատկապես վերջին հավաքական հայցը, քանի որ

վերջինս առնչվում է հայերին պատկանող *ողջ սեփականությանը*: Ղատարանի կողմից վերջնական անբարենպաստ ակտի կայացումը կարող է արգելափակել ԱՄՆ-ի իրավագործության ներքո Հայոց ցեղասպանությանն առնչվող որևէ գույքային պահանջ ներկայացնելու հեռանկարները:

Հայոց ցեղասպանության արդյունքում հայ մշակութային արժեքների վերադարձմանն ուղղված հայցերը Հայոց ցեղասպանության անուղակի հետևանքների հաղթահարմանն ուղղված կարևորագույն իրավական միջոցների թվին կարելի է դասել: Առայսօր նման հայցեր են ներկայացվել ԱՄՆ-ի, Թուրքիայի և միջազգային իրավագործության ներքո:

Այսպես, 2010 թ. հուլիսին հայց ներկայացվեց «The Getty Museum» թանգարանում գտնվող հայկական մշակութային արժեքների վերադարձման կապակցությամբ: Հայցն առնչվում էր դեռևս 1994 թ. «Getty» թանգարանի կողմից 950 հազար ԱՄՆ դոլարով ձեռք բերված՝ Թորոս Ռոսլինի մանրանկարներով Ջեյթունի ավետարանի ութ էջերին, որոնք առանձնացվել են ավետարանից 1916 թ. Հայոց ցեղասպանության տարիներին: Ըստ հայցվորի՝ թանգարանը ձեռք է բերել նշված մանրանկարները հափշտակողի ժառանգից՝ առանց փորձելու պարզել ձեռագրի ծագումը: Ինչպես հայտնի է, Ջեյթունի ավետարանը գտնվում է Մատենադարանում: Այն թվագրված է մոտավորապես 1256-68 թվականներով: Հայցը ներկայացվել էր Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևմտյան թեմի կողմից: Մատենադարանը և Հայաստանի Հանրապետությունը թեև չէին մասնակցում դատավարությանը, սակայն Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը նամակ էր հղել փաստաբաններին՝ հայցելով հաշվի առնել Մատենադարանի և Հայաստանի Հանրապետության շահերը և աջակցել մանրանկարներն իրական սեփականատիրոջը վերադարձնելու ուղղությամբ¹⁷⁷:

¹⁷⁷ Гетти судится с церковью. <http://artchronika.ru/news/гетти-судится-с-церковью/>

Թեև պատասխանողը դատարանում պնդում էր, որ վաղեմության ժամկետների անցման հետևանքով հայցը պետք է մերժվի սակայն Կալիֆոռնիայի Գերագույն դատարանը բավարարեց Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևմտյան թեմի ներկայացրած հայցը և առաջարկեց դիմել միջնորդության ընթացակարգին:

Թեև հայցվորների հիմնական մտադրությունն էր դատավարության դրական ելքի պարագայում վերադարձնել նշված մանրանկարները Մատենադարանում պահվող Ջեյթունի ավետարանի հետ վերամիավորվելու համար, սակայն «Getty» թանգարանի հետ ձեռք բերված համաձայնության արդյունքում կողմերը համաձայնեցին, որ թանգարանը կձանաչի մանրանկարների նկատմամբ եկեղեցու սեփականության իրավունքը, իսկ եկեղեցին կփոխանցի նշված մանրանկարները թանգարանին հանդիսավոր արարողության ընթացքում, որից հետո դրանք մաս կկազմեն «Շրջագայություն աշխարհով Միջնադարի և Վերածննդի մանրանկարների միջոցով» ցուցահանդեսի, որը պետք է անցկացվեր 2016 թ. հունվարի 26-ից հունիսի 26-ը¹⁷⁸:

2015 թ. ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը դատական հայց ներկայացրեց Թուրքիայի սահմանադրական դատարան՝ պահանջելով Սսի պատմական կաթողիկոսարանի վերադարձը: Հայցի ընդունումը, սակայն, մերժվեց Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից, որից հետո 2016 թ. դեկտեմբերին հայց ներկայացվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան Սսի կաթողիկոսարանը վերադարձնելու վերաբերյալ: Սույն գործով դատավարությունը ներկա պահին գտնվում է նախնական ուսումնասիրության փուլում:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալուն ուղղված հայցեր: Նման հայցերը թեև մեծաթիվ չեն, սակայն դրանք ևս կարող են չափազանց մեծ նշանակություն ունենալ Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների

¹⁷⁸ Арт-дайджест: Рембрандт - сенсация на аукционе, реституция древней рукописи https://artchive.ru/news/1269~Artdajdzhest_Rembrandt_sensatsija_na_auksione_restitutsija_drevnej_rukopisi_i_zoloto_vaginy

վերացման համար՝ հստակեցնելով Հայոց ցեղասպանության առնչվող տեղեկատվությունը: Այս հարցում հատկապես հետաքրքրական են Ճճարտությունն իմանալու իրավունքի վրա հարուցված հայցերը: Այսօր կարող ենք փաստել, որ նման դատական պրակտիկա արդեն իսկ առկա է Արգենտինայի Հանրապետությունում, մասնավորապես 2011 թ. ապրիլի 1-ին Բուենոս Այրեսի թիվ 5 դաշնային դատարանը, Ճճարտությունն իմանալու իրավունքի շրջանակներում, քննեց Գրեգորիո Հայրապետյանը և այլոք հայցով գործը և վճռեց, որ 1915-1923 թթ. ընթացքում Թուրքիան ցեղասպանության հանցագործություն է կատարել հայ ժողովրդի նկատմամբ: Նշված իրավունքի իրագործման շրջանակներում ևս հնարավոր է մասնակիորեն հաղթահարել Հայոց ցեղասպանության հետևանքներն առնվազն մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան համակարգի շրջանակներում, ինչպես նաև Լատինական Ամերիկայի պետությունների ազգային իրավագործության ներքո:

4. Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելուն ուղղված հիմնական ռազմավարական մոտեցումները

Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված վնասը միաբնույթ և միատեսակ չէ: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել միասնական ռազմավարություն, որի շրջանակներում կհստակեցվի ներկայացվելիք պահանջների շրջանակը, կորոշվեն պայքարի առանցքային ուղղությունները, կսահմանվի գործողությունների հերթականությունը և կլուծվեն այլ առանցքային հարցեր:

Հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մոտեցումների հարցում միակարծություն գոյություն չունի, հետազոտողների, հասարակական կազմակերպությունների, ցեղասպանության զոհերի շահերը ներկայացնող հաստատությունների, հայաստանյան և սփյուռքի կառույցների

մոտեցումներում առկա են զգալի տարբերություններ: Չի կարելի իրատեսական համարել այն, որ մեկ օր հնարավոր կլինի սեղանի վրա դնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցների միասնական հայեցակարգ, այդուհանդերձ, գտնում ենք, որ հնարավոր է մշակել առանցքային հայեցակարգային մոտեցումների համառոտագիր, որը կարող է միասնականացնել Հայաստանի և Սփյուռքի ջանքերը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղությամբ:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում յուրաքանչյուր տարածաշրջանում պետք է որդեգրել յուրահատուկ մոտեցում, որը կբխեր օբյեկտիվորեն գոյություն ունեցող առանձնահատկություններից:

Մասնավորապես, եվրոպական իրավական համակարգի շրջանակներում պետք է շարունակել Հայոց ցեղասպանության ուրացման դեմ պայքարող համապատասխան օրենսդրության մշակմանն ու ընդունմանը և այդ հարցում հայանպաստ դատական պրակտիկայի ձևավորմանն ուղղված ջանքերը՝ շեշտադրելով այլատյացության դեմ պայքարի կարևորությունը:

Քննարկելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական ուղիները՝ հնարավոր չէ չանդրադառնալ Հայոց ցեղասպանության միջազգային իրավական ճանաչման հիմնահարցերին: Նման ճանաչումները, ինչպես նշել ենք, թեև իրավական պարտադիր ուժ չեն կարող ունենալ Թուրքիայի Հանրապետության համար, սակայն չափազանց բարենպաստ հիմնապաստառ են ստեղծում վերջինիս տվյալ հարցում առավել զիջող դարձնելու համար: Այդուհանդերձ, պետք է նշել, որ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման ռեսուրսները սահմանափակ են: Ներկայումս կարելի է փաստել, որ հայությունն այդ հարցում հաջողություններ է արձանագրել Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում (նահանգային մակարդակով), սակայն Ասիայում և Աֆրիկայում, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ճանաչման գործընթացը չափազանց ոչ

արդյունավետ է (փաստացիորեն Ասիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչել են միայն Կիպրոսը և Լիբանանը):

Ելնելով վերը շարադրված հայեցակարգային կանխադրույթներից՝ նպատակահարմար ենք համարում ստորև ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր առանցքային իրավական միջոցներ.

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը վերաբերող և հայոց պահանջատիրությունը հիմնավորող միջազգային իրավական փաթեթի ստեղծում: Միջազգային իրավական փաթեթը կներառի Ցեղասպանության հիմնավորումները, դրա հետևանքների ու վնասների ամփոփումը, ցեղասպանության դատապարտման և փոխհատուցման միջազգային իրավական մեխանիզմների կիրառման իրավական հիմնավորումները: Լայնորեն կօգտագործվեն տարբեր միջազգային կազմակերպությունների, դատական ատյանների, միջազգային դատարանների, ինչպես նաև առանձին պետությունների դատական համակարգերի կողմից ընձեռվող հնարավորությունները:
2. Միջազգային իրավունքի, միջազգային և ներպետական դատավարական ընթացակարգերի հեղինակավոր փորձագետների, փորձառու իրավաբանների ներգրվում կոնկրետ իրավական պահանջ ներկայացնող փաթեթի նախապատրաստման գործընթացում:
3. Արխիվային և վավերագրական նյութերի կենտրոնացված բազայի ստեղծում՝ դրանք այդ ոլորտում գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի և միջազգային դատարանների որոշումներին համահունչ դասակարգելու նպատակով: Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր և միջազգային դատարանների որոշումներ ճանաչում են անհատի՝ իր բնակության վայր վերադարձի, սեփականության իրավունքի վերականգնման, փոխհատուցումներ ստանալու և պահանջատիրությանն առնչվող այլ իրավունքներ:

4. Ցեղասպանության զոհերի և վերապրածների ժառանգներին դատական ճանապարհով դրամական և բարոյական փոխհատուցումներ տրամադրելու նպատակով ապահովագրական, բանկային և այլ ընկերությունների դեմ հայցերի ներկայացման ու դատական որոշումների ընդունման գործընթացի խրախուսում:
5. Հայցվորների, զոհերի և վերապրածների ժառանգների և նրանց հասցված վնասների մասին տվյալների կենտրոնացված թվայնացված բազայի ստեղծում, որը կունենա համացանցային հասանելիություն: Նման տվյալների կենտրոնացված բազայի ստեղծումը հնարավորություն կընձեռի նույնականացնել Հայոց ցեղասպանության զոհերին և վերապրածներին, կուղղվեն վերջիններիս և նրանց ժառանգների միջև ազգակցական կապերի վերականգնմանը և այլն:
6. Թուրքիայում հայերի գույքի մասով փաստաթղթերի թվայնացված կենտրոնացված բազայի ձևավորում` հայ ժողովրդի հայրենագրկման և ունեգրկման խնդիրները միջազգային ատյաններում բարձրաձայնելու և հատուցման պահանջներով հանդես գալու նպատակով:
7. 1919-1920 թթ. թուրքական ազգային դատական ատյանների կողմից Հայոց ցեղասպանությունը հաստատող և դատապարտող դատական ակտերի վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:
8. Աշխատանքներ տարբեր երկրներում Հայոց ցեղասպանությանն առնչվող արխիվները հանրամատչելի դարձնելու ուղղությամբ:
9. Հատուցման պահանջների զուգորդում Թուրքիայի պատասխանատվության խնդրին առավել քիչ ուղղորդված այնպիսի միջոցներով, որոնք ավելի կմեծացնեն ճնշումը Թուրքիայի վրա: Որոշ գործողություններ արդեն իսկ ձեռնարկվել են (եկեղեցիների գույքի վերադարձման պահանջները), այդ գործողությունները կարող են նե-

րառել ԵՆ, ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակում սահմանված իրավական մեխանիզմների ու համապատասխան կոմիտեների ընթացակարգերի կիրառման աշխատանքները:

10. Միջազգային ասպարեզում ցեղասպանության և մարդկայնության դեմ գործած հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային մեխանիզմների ձևավորմանն ու կիրառման, ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացն իրավական հիմքերի վրա դնելու ուղղությամբ շարունակական քայլերի ձեռնարկում:
11. Ձեռնարկվելիք գործողությունների համատեքստում Թուրքիայի հնարավոր բացասական արձագանքների դեմ ուղղված միջոցների ձեռնարկում: Ժամանակակից գիտության, մասնավորապես՝ մարդաբանության, կենսաբանության, բժշկության, հոգեբանության և այլ գիտությունների նվաճումների օգտագործում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցների ձեռնարկման պարագայում, որոնք կարող են, մասնավորապես, վերաբերել ցեղասպանության ազդեցությանը հանցագործության գոհերի ժառանգների ԴՆԹ-ի վրա, ցեղասպանության գոհերի խեղված ինքնության և այլ հոգեբանական խնդիրներին, գոհվածների և նրանց իրավահաջորդների ազգակցական կապը հիմնավորելուն, գոհերին նույնակալանացնելուն և այլն:
12. Թուրքիայում և այլ երկրներում բնակվող իսլամացած հայերի ինքնության վերականգնմանն ուղղված համապատասխան իրավական միջոցների ձեռնարկում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի արդի զարգացումների, այդ ոճրագործության նկատմամբ կիրառելի միջազգային իրավական նորմերի, Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հայեցակարգի վրա Հայոց ցեղասպանության ազդեցությանն առնչվող հիմնահարցերի, Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության, Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության իրավաչափության և նման պատասխանատվության համար անհրաժեշտ նախապայմանների, միջազգային կառույցների շրջանակներում նման պատասխանատվության իրացման հիմնահարցերի ու ցեղասպանության հետևանքով պատճառված վնասի հատուցման ձևերի ու տեսակների հետազոտությունը, ինչպես նաև սույն հիմնախնդրին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի, պետությունների պրակտիկայի, ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի վերլուծությունը թույլ են տալիս ընդհանրացված տեսքով ներկայացնել մի շարք եզրակացություններ ուսումնասիրության առարկա հիմնախնդրին առնչվող հանգուցային հարցերի վերաբերյալ:

1. Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը սկսվել է դեռևս 1915 թ. և շարունակվում է առայսօր: Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացն ազգային մակարդակում կրում է առավելապես խորհրդարանական բնույթ, ինչը տեսականորեն նվազեցնում է ճանաչման միջազգային իրավական նշանակությունը, քանզի վերջիններս չեն դիտվում որպես արտաքին հարաբերությունների մարմիններ, իսկ դրանց ընդունած բանաձևերը կրում են ոչ պարտադիր իրավական բնույթ: Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչ-

ման գործընթացում աճող նշանակություն են ձեռք բերում միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալումը: Թեև օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը չի կարող միջազգային իրավական առումով պարտադիր լինել Թուրքիայի Հանրապետության համար, սակայն այն կարևոր իրավաքաղաքական հիմնապատասխան է ստեղծում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցներ ձեռնարկելու համատեքստում:

2. Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի արդի փուլի հիմնական մարտահրավերները պայմանավորված են Ասիայի և Աֆրիկայի երկրներում ճանաչման գործընթացի պասիվությամբ, ճանաչման փաստաթղթերում փաստագրական և իրավաբանական ձևակերպումների խայտաբղետությամբ, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության խորհրդարանային ճանաչման դեմ ուղղված ակտիվ մերժողական քաղաքականությամբ և միջազգային պետական և համայնքային մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչող փաստաթղթերը չեղարկելուն ուղղված պաշտոնական Անկարայի ակտիվ փորձերով:

3. Պետությունների միջազգային իրավական պրակտիկան, մարդասիրական միջամտությունների ինստիտուտի առաջացումն ու զարգացումը և 19-րդ դարի երկրորդ կեսի ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի վերլուծությունը վկայում են այն մասին, որ որևէ ռասայական, ազգային, կրոնական կամ էթնիկական խմբի, որպես այդպիսին, ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացնելուն նպատակաուղղված կանխամտածված արարքների ամբողջությունը, որը հետագայում անվանվեց ցեղասպանություն, դիտվում էր որպես ընդհանուր միջազգային իրավունքի նորմերին հակասող և դրանցով պատժելի արարք ամենաուշը 19-րդ դարի երկրորդ կեսից: Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության ժամանակ արդեն իսկ գոյություն ունեին ցեղասպանության հանցագործության արգել-

ման վերաբերյալ ընդհանուր միջազգային իրավունքի համապատասխան նորմեր, ուստիև դրա պատժելի լինելը որևէ կասկած հարուցել չի կարող:

4. Հայոց ցեղասպանությունն իրագործելիս Օսմանյան կայսրությունը, ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի խախտումից զատ, խախտել է նաև միջազգային մի շարք պայմանագրերով, մասնավորապես՝ 1878 թ. Բեռլինի պայմանագրով, 1899 թ. Ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների մասին Հաագայի կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները:

5. Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև դրա նախապատրաստական փաստաթղթերի ուսումնասիրությունը, վկայում են այն մասին, որ կոնվենցիան մշակողները չեն նպատակադրվել միջազգային իրավական նոր նորմ ստեղծել, այլ միայն փորձել են ամրագրել արդեն իսկ գոյություն ունեցող սովորույթային-իրավական նորմի արևելայության փաստը՝ հանգեցնելով կոնվենցիայի հիմնական առաքելությունը գոյություն ունեցած միջազգային իրավական նորմի ունիվերսալ պայմանագրային ճանաչմանը:

6. Մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ վերջինիս կիրառելիության հնարավորությունը հաստատող կամ մերժող որևէ հեղինակավոր պաշտոնական միջազգային իրավական փաստաթուղթ ցայսօր գոյություն չունի: Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ի համաձայն՝ կոնվենցիայի դրույթների մեկնաբանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանի բացառիկ իրավասությունն է, և քանի դեռ դատարանը մինչև նշված կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ դրա կիրառելիության հնարավորության կամ անհնարինության մասին վերջնական որոշում չի կայացրել, այդ հարցի վերաբերյալ ցանկացած դատողություն կհանդիսանա կոնվենցիայի՝ պարտադիր ուժ չունեցող, դոկտրինալ (ոչ պաշտոնական) մեկնաբանություն: Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածի հիման վրա ՄԱԿ-ի դատարանի իրավագործության իրականացման հավանա-

կանությունը, հիմք ընդունելով կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիմնախնդիրը, բավականին վիճահարույց է:

7. Հայոց ցեղասպանության փորձառությունը և Սողոմոն Թեփերյանի դատավարությունն էական նշանակություն են ունեցել Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանության հանցագործության հայեցակարգի հիմքերի ձևավորման համար:

8. Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառման հնարավորությունից անկախ՝ ցեղասպանության հանցագործությունը դիտվում է որպես ժամանակակից ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմից բխող պարտավորության լուրջ խախտում (միջազգային հանցագործություն) և պատժելի է՝ անկախ որևէ կոնվենցիոնալ պարտավորության առկայության: Հակառակ դեպքում հնարավոր չէր լինի որպես ցեղասպանություն որակել և պատժելի դիտել ոչ միայն մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը գործած հանցանքները, այլ նաև Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունների կողմից կատարված ցեղասպանության արարքները:

9. Ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի համաձայն՝ պետությունը պատասխանատվություն է կրում իր մարմինների ու պաշտոնատար անձանց արարքների՝ գործողությունների և անգործության համար: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Թուրքիայի պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անմիջական մասնակցությամբ, վերջինս պետք է այդ հանցանքի համար պատասխանատվություն կրող պետություն դիտվի:

10. Ցեղասպանությունը միջազգային իրավունքի իմպերատիվ (*jus cogens*) նորմի խախտում է, ինչը բացառում է պետության կողմից ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվությունը բացառող որևէ հանգամանք վկայակոչելու հնարավորությունը: Առաջին հերթին, դա վերաբերում է ցեղասպանության հանցագործության շարժառիթներին, որոնք, որպես կանոն, բերվում են պատասխանատվությունից ազատվելը հիմնավորելու համար: Հետևաբար, Թուրքիայի Հանրապետու-

թյունը չի կարող վկայակոչել հայերի ապստամբության ճնշման կամ քաղաքացիական պատերազմի պատրվակները՝ որպես Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

11. Միջազգային իրավական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Թուրքիայի Հանրապետությունն Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողն է (continuity) և, հետևաբար, պատասխանատվություն պետք է կրի Օսմանյան կայսրության կողմից Հայոց ցեղասպանության համար ու համապատասխան հատուցում տրամադրի այդ հանցագործության զոհերին և նրանց ժառանգներին:

12. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունն զբաղեցնում են հստակ արտահայտված ծայրահեղ հակադիր դիրքորոշումներ որոշակի միջազգային իրավական պարտավորությունների կատարման կամ չկատարման վերաբերյալ, որոնք, մասնավորապես, շարադրված են 1948 թ. դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում, կարելի է ենթադրել, որ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից իրավաբանական բնույթի միջազգային վեճ է և, որպես այդպիսին, կարող է փոխանցվել ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննությանը:

13. ՄԱԿ-ի միջազգային դատարանում միակողմանիորեն Հայոց ցեղասպանության վերաբերյալ գործ հարուցելը հնարավոր է միայն Ցեղասպանության մասին կոնվենցիայի հողված 9-ի հիման վրա, քանի որ դառնալով կոնվենցիայի մասնակից՝ և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը ձանաչել են տվյալ հարցով դատարանի պարտադիր իրավագործությունը: Բոլոր մնացած դեպքերում Միջազգային դատարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ գործ հարուցելը հնարավոր է միայն երկկողմ համաձայնության հիման վրա:

14. Ժամանակակից միջազգային իրավական փաստաթղթերը և միջազգային պրակտիկան վկայում են այն մասին, որ

վաղեմության որևէ ժամկետ չի կարող կիրառվել ցեղասպանության համար պետության պատասխանատվության նկատմամբ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միջազգային դատական կամ արբիտրաժային ատյանն ինքնուրույն պետք է որոշի՝ ընդունելի՞ են, թե՞ ոչ, որևէ պետության միջազգային իրավական պահանջները: Ցեղասպանության հանցագործության իրագործման և դրա համար միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու միջև ընկած երկար ժամանակահատվածը չի կարող հիմք հանդիսանալ դրանք մերժելու համար: Թեև Հայոց ցեղասպանության և դրա համար Թուրքիայի Հանրապետությանը ներկայացվող միջազգային իրավական պահանջների միջև առկա է ժամանակային խզում, այն օբյեկտիվ հանգամանքների հետևանք է: Անկախության ձեռքբերման առաջին իսկ օրերից Հայաստանի Հանրապետությունը շեշտել է Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործին սատար կանգնելու հանգամանքը՝ ամրագրելով այն Անկախության մասին հռչակագրում և բազմիցս հնչեցնելով զանազան միջազգային ամբիոններից՝ իր սատարումն ստանալով ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներում: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ որևիցե հանգամանք չի կարող վկայակոչվել որպես Հայոց ցեղասպանության համար Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային իրավական պահանջների ներկայացումից հրաժարում կամ հիմք հանդիսանալ նման պահանջներն անընդունելի դարձնելու համար:

15. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքում, այլ նաև դրա սահմաններից դուրս, մասնավորապես, անկախ Հայաստանի տարածքում՝ հայ ազգաբնակչությանը բնաջնջելու հատուկ մտադրությամբ, իսկ այդ հանցագործության հետևանքով հազարավոր արևմտահայեր ապաստան են գտել և բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը տվյալ հանցագործության արդյունքում անմիջականորեն տուժած պետություն է և, հետևաբար, օժտված է Թուր-

քիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքով:

16. Եթե նույնիսկ հիպոթետիկ կերպով ընդունենք, որ Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության հետևանքով տուժած պետություն համարվել չի կարող, ապա նրա կողմից Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու իրավունքը չի վերանում, քանզի նույնիսկ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է հանդես գալ տարբեր միջազգային կառույցներում՝ ներկայացնելով ոչ թե իր, այլ ցեղասպանության զոհերի շահերը, որոնց մեծ մասը բնակություն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում և ձեռք բերել վերջինիս քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետության այդ իրավունքը պայմանավորված է ցեղասպանության դեմ պայքարելու պարտավորության *erga omnes* բնույթով, որն իրավունք է վերապահում ոչ միայն ցեղասպանության հանցագործության հետևանքով անմիջականորեն տուժած, այլ նաև բոլոր այլ պետություններին պատասխանատվության ենթարկել ցեղասպանություն իրագործած պետությանը՝ պաշտպանելով ցեղասպանության զոհերի շահերը:

17. Ժամանակակից միջազգային իրավունքի զինանոցում գոյություն ունեցող միջազգային իրավական պատասխանատվության բոլոր ձևերն ու տեսակները (ռեստիտուցիա, կոմպենսացիա, սատիսֆակցիա) կարող են կիրառելի լինել Հայոց ցեղասպանության նկատմամբ, ավելին՝ միայն նրանց համադրությամբ է հնարավոր այդ հանցանքով պատճառված նյութական և բարոյական վնասի լիակատար հատուցումը:

18. Թուրքիայի Հանրապետությունը՝ որպես Հայոց ցեղասպանության համար իրավական ռեստիտուցիայի (ռեստորացիայի) տարատեսակ, պարտավոր է, մասնավորապես, համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված իրենց նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների ու իրավահաջորդների վերադառնալու և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչպես նաև անվավեր ճանաչել Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին և

դրանից անմիջապես հետո ընդունած ցեղասպանության քաղաքականությունը լեգիտիմացնող նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես, հայերի սեփականության բռնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց վերադառնալու և բնակություն հաստատելու իրավունքից զրկող օրենքները:

19. Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված այն վնասը, որը ռեստիտուցիայի առարկա դառնալ չի կարող, այսինքն՝ չի կարող վերականգնվել կամ հատուցվել բնեղենով, պետք է փոխհատուցվի դրամական արտահայտությամբ: Ընդ որում, համաձայն ժամանակակից միջազգային իրավունքի նորմերի և ձևավորված պրակտիկայի՝ փոխհատուցման ենթակա են ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառված նյութական կորուստները, այլ նաև բարոյական վնասը:

20. Հայոց ցեղասպանության պարագայում, որպես սատիսֆակցիայի տարատեսակներ, կարող են կիրառվել, մասնավորապես, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական հրապարակային ճանաչումն ու ափսոսանքի և ցավակցության արտահայտումը, Հայոց ցեղասպանության փաստը մերժելու քաղաքականությունից հրաժարումը և նման ժխտման դեմ պայքարելու համար անհրաժեշտ օրենսդրության ընդունումը, Հայոց ցեղասպանության կազմակերպիչների ու իրագործողների հրապարակային դատապարտումը, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանությանն ու վերականգնմանն ուղղված հատուկ միջոցների մշակումը:

Ահա սրանք են այն հիմնական եզրակացությունները, որոնց հնարավոր եղավ հանգել սույն ուսումնասիրության շրջանակներում՝ ի մի բերելով հայերի դեմ իրագործված ցեղասպանության իրավական հարթության հիմնական հարցերը: Անշուշտ, այս հետազոտությունն ընդամենը մի կաթիլ է Հայոց ցեղասպանության իրավական հարթության հիմնահարցերի օվկիանոսում: Դրանում շոշափված յուրաքանչյուր հիմնահարց պետք է առանձին գիտական վերլուծության առարկա դառնա՝ հայերի

դեմ իրագործված ցեղասպանության իրավական հարթության առանձին գորշ կետերը վերացնելու և նշված հիմնախնդրի միջազգային իրավական պատկերն առավել հստակ դարձնելու նպատակով:

Եզրափակելով ամբողջը՝ անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ նշել, որ միայն Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերի հետագա ուսումնասիրության արդյունքում է հնարավոր թուրքիայի Հանրապետությանը համապատասխան միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու համար ամուր հայեցակարգային հիմք ստեղծել և ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ դրա հետևանքով պատճառված վնասների լիարժեք հատուցման համար:

Резюме

Владимир Давидович Варданян

ПРАВОВЫЕ ВОПРОСЫ ПРИЗНАНИЯ, ОСУЖДЕНИЯ И ПРЕОДОЛЕНИЯ ПОСЛЕДСТВИЙ ГЕНОЦИДА АРМЯН

Работа посвящена исследованию правовых аспектов признания Геноцида армян, осуждению данного международно-противоправного деяния и преодоления его последствий.

Всеобъемлющее, объективное и целостное изучение возможных путей и средств привлечения к международно-правовой ответственности за данное преступление по международному праву становится все более обязывающим в свете положений Всеармянской декларации к столетию Геноцида армян касательно необходимости разработки пакета правовых средств, направленных на преодоление его последствий.

Под воздействием многочисленных объективных и субъективных факторов научная проблематика, связанная с Геноцидом армян, долгое время ограничивалась исследованием преимущественно историко-политологических вопросов, что не позволяло в полной мере выявить и изучить многоаспектную сущность и содержание преступления геноцида.

Процесс международного признания Геноцида армян, выявление его фактологических обстоятельств, уточнение права, применимого к данному международно-противоправному деянию, изучение соответствующих международно-правовых обязательств Османской империи, конкретизация сущности и объема ущерба, причиненного Геноцидом армян, и

формулирование предполагаемых правовых требований требуют осуществления глубинного юридического анализа.

Преодоление последствий Геноцида армян представляет собой сложную и многоаспектную задачу, решение которой требует комплексного изучения правовых, политологических, экономических, социологических, демографических, психологических и иных аспектов данного преступления.

В рамках данного исследования предпринята попытка анализа процесса международного признания Геноцида армян, в частности выявления его международно-правовой значимости, исследования основных видов и форм официального признания со стороны иностранных государств, международных организаций и иных субъектов международного права, а также изучения основных правовых вызовов процесса признания Геноцида армян на современном этапе.

Проведенное исследование позволяет констатировать, что процесс официального признания Геноцида армян, начавшись еще в 1915 году, продолжается до сих пор. На современном этапе процесс официального признания Геноцида армян на национальном уровне имеет преимущественно парламентский характер, что ограничивает его международно-правовую значимость, так как законодательные органы, как правило, не рассматриваются в качестве органов внешних сношений, а принятые ими резолюции, постановления и иные документы о признании не имеют обязательной юридической силы.

В процессе официального признания все большее значение приобретает признание Геноцида армян международными учреждениями, особенно межпарламентскими органами сотрудничества. Несмотря на то, что признание со стороны иностранных государств и иных субъектов международного права не может носить обязывающий характер для Турецкой Республики, тем не менее это создает благоприятный политико-правовой фон в контексте принятия правовых средств,

направленных на преодоление негативных последствий Геноцида армян.

Основными вызовами, связанными с процессом официального признания Геноцида армян, на современном этапе являются, в частности, активная политика отрицания юридической квалификации Геноцида армян со стороны Турецкой Республики, направленная против расширения парламентского признания Геноцида армян иностранными государствами, активные посягательства официальной Анкары, направленные на денонсацию документов о признании Геноцида армян, принятых на международном, национальном или локальном уровнях, а также пассивность процесса официального признания в странах Азии и Африки.

В исследовании скрупулезно изучаются основания международно-правовой ответственности за Геноцид армян, анализируются вопросы, связанные с применимым к Геноциду армян правом, выявляется специфика правовой квалификации данного преступления, акцентируются судебно-правовые аспекты преодоления его последствий.

Исследование международно-правовой практики государств, изучение положений соответствующих международно-правовых договоров, заключенных во второй половине 19-го начале 20-го веков, позволяют сделать заключение, что совокупность направленных на уничтожение какой-либо расовой, национальной, религиозной или этнической группы как таковой предумышленных деяний, в дальнейшем получившая название “геноцид”, уже с середины 19-го века рассматривалась как противоречащая нормам общего международного права. Помимо общих обязательств, в рамках обычного международного права Османская империя имела также партикулярные международно-договорные обязательства в отношении обеспечения безопасности армянского населения. Следовательно, в момент совершения Геноцида армян данное деяние уже рассматривалось как серьезное нарушение

международно-правовых обязательств, взятых Османской империей как на основании обычного международного права, так и на основании заключенных ею международных договоров.

В работе подробно исследованы возможности предъявления Турецкой Республике международно-правовых требований за Геноцид армян соответствующими заинтересованными субъектами, включая Республику Армения, учреждения, представляющие интересы диаспоры, религиозных и иных учреждений и частных лиц. В данном аспекте были проанализированы вопросы, связанные со статусом Турецкой Республики как государства, продолжающего международно-правовую идентичность Османской империи. В исследовании получили отражение также вопросы, касающиеся правомерности предъявления международно-правовых претензий Турецкой Республике со стороны Республики Армения за совершение Геноцида армян.

В исследовании также затронуты вопросы, связанные с влиянием Геноцида армян на становление концепции геноцида, разработанной Рафаэлем Лемкином.

Центральным элементом исследования является раздел, посвященный анализу правовых средств, направленных на преодоление последствий Геноцида армян, в рамках которого изучаются основные международные и внутригосударственные правовые возможности преодоления его последствий. Среди которых в работе выделяются непосредственные и опосредованные последствия данного международно-противоправного деяния.

К непосредственным последствиям Геноцида армян относятся такие являющиеся прямым результатом действия непосредственной причинно-следственной связи последствия, как уничтожение армянской этнической группы как таковой, искоренение западноармянской идентичности и т. д. К опосредованным последствиям относятся такие вытекающие из непосредственных последствий Геноцида армян или сопутст-

вующие им последствия, как незаконное лишение собственности жертв данного преступления, конфискация их имущества, уничтожение и присвоение культурных ценностей и т. д. Подобный подход в вопросе разделения непосредственных и опосредованных последствий Геноцида армян обусловлен необходимостью определения наиболее релевантных правовых путей, средств и механизмов, направленных на их преодоление.

Помимо вышеизложенного, в работе предпринята попытка представления основных концептуальных подходов в вопросе преодоления непосредственных и опосредованных последствий Геноцида армян, изучена специфика правовой стратегии и тактики преодоления последствий Геноцида армян в различных плоскостях.

В исследовании изучен наиболее широкий спектр, возможных правовых средств и методов, позволяющих выработать концептуальные основы стратегии и тактики преодоления последствий Геноцида армян.

Summary

Vladimir D. Vardanyan

THE LEGAL ISSUES OF RECOGNITION, CONDEMNATION AND OVERCOMING OF CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE

The study deals with the legal aspects of the recognition and condemnation of the Armenian Genocide as well as overcoming of its consequences.

The comprehensive, objective and holistic study of possible paths and means of bringing to the state responsibility for the given crime under international law is becoming even more binding in the light of the provisions of the Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide concerning with the elaboration of the legal claims file to overcome its consequences.

For a long period of time and under the influence of the many objective and subjective factors the scientific issues related to the Armenian Genocide were confined to the study of mostly historical and political issues thus impeding complete identification and examination of the multi-faceted nature and content of the crime of genocide.

The process of the international recognition of the Armenian Genocide, identification of its factual circumstances, clarification of law applicable to a given internationally wrongful act, examination of relevant international legal obligations of the Ottoman Empire, the specification of the scope of damage caused by the Armenian Genocide, and the formulation of the supposed legal claims require the implementation of in-depth legal analysis.

Overcoming the consequences of the Armenian Genocide is a complex and multifaceted task and its solution requires a comprehensive study of legal, political, economic, sociological, demographic, psychological and other aspects of the given crime.

An attempt was undertaken to analyze the process of international recognition of the Armenian Genocide within the study, in particular to identify its international legal significance; to investigate the main types and forms of its official recognition by foreign states, international organizations and the other subjects of International Law, as well as to identify the main legal challenges of the process of recognition of the Armenian Genocide at the present stage.

The respective study allows to conclude that the process of official recognition of the Armenian Genocide, which was launched back in 1915, continues up today. Nowadays, the process of official recognition of the Armenian Genocide at the national level is mainly of a parliamentary nature, which limits its international legal significance, since legislatures, as a rule, are not considered as foreign affairs bodies. Hence, their resolutions, decisions and other documents on recognition are not legally binding by their nature.

The recognition of the Armenian Genocide by international institutions, particularly by inter-parliamentary co-operation bodies is of growing importance for the process of official recognition. Despite the fact that the recognition by foreign states and other subjects of international law can not be deemed as binding for the Republic of Turkey, yet it creates a favorable political and legal environment in the context of the adoption of legal measures aimed at overcoming the negative consequences of the Armenian Genocide.

At the present stage the main challenges of the process of official recognition of the Armenian Genocide can be crystallized as in particular, an active policy of the legal qualification denial of the Armenian Genocide by the Republic of Turkey, directed against the proliferation of the parliamentary recognition of the Armenian Genocide by foreign states, active diplomatic pressure

of Official Ankara towards the denunciation of documents on the Armenian Genocide recognition, adopted at the international, national or local levels, as well as an inactivity of the process of official recognition in the countries of Asia and Africa.

The study thoroughly examines the basis of international legal responsibility for the Armenian Genocide, analyzes issues related to law applicable to the Armenian Genocide, reveals the specifics of the legal qualification of the given crime, emphasizes judicial and legal aspects of overcoming its consequences.

The analysis of the state practice and investigation of provisions of the relevant international agreements concluded in the second half of the 19th and the early 20th centuries lead to the conclusion that the set of deliberate acts intended at the destruction of any racial, national, religious or ethnic group as such, which called the "genocide" later, was deemed as contradicting to the norms of general international law at least since the mid-19th century. In addition to the general obligations under customary international law, the Ottoman Empire also had particular international treaty obligations in respect of security of the Armenian population. Therefore, at the time of the Armenian Genocide the given act had already been considered as a serious violation of international legal obligations undertaken by the Ottoman Empire on the basis of customary international law as well as on the basis of the international treaties concluded by the latter.

The publication gives an in detail examination of the existing possibilities for submitting the international legal claims against the Republic of Turkey for the Armenian Genocide by relevant stakeholders, including the Republic of Armenia, organizations representing the interests of the Diaspora Armenians, religious and other institutions and individuals. From this perspective the issues related to the Status of the Republic of Turkey as a state continuing the international legal identity of the Ottoman Empire was examined. The issues concerning the lawfulness of submitting the international legal claims by the Republic of Armenia versus

the Republic of Turkey for committing the Armenian Genocide were highlighted in the study.

The study also highlights issues related to the influence of the Armenian Genocide on the development of the concept of genocide elaborated by Raphael Lemkin.

The central element of the research is a section devoted to the analysis of legal means aimed at overcoming the consequences of the Armenian Genocide, within which the main international and domestic legal means on overcoming its consequences are examined. Amongst which the direct and indirect consequences of the given internationally wrongful act are marked out.

The direct consequences of the Armenian Genocide are those immediately deriving from the direct causal link, such as the destruction of the Armenian ethnic group, as such, the eradication of Western Armenian identity and etc. The indirect consequences include those arising from the immediate consequences of the Armenian Genocide or adjunct to them, such as unlawful deprivation of property of victims of the crime, the confiscation of their assets, destruction and appropriation of cultural values and etc. This approach towards the issue of division of direct and indirect consequences of the Armenian Genocide is due to the need to determine the most relevant legal paths, means and mechanisms to overcome them.

In addition to the abovementioned, an attempt was undertaken to highlight the main conceptual approaches of overcoming direct and indirect consequences of the Armenian Genocide, the specifics of the legal strategies and tactics to overcome the consequences of the Armenian Genocide in various dimension were examined.

The study gives an effort to analyze the widest range of the possible legal means and methods allowing developing of the conceptual basis of the strategy and tactics of overcoming the consequences of the Armenian Genocide.

ՎԱՐԴԻՄԻՐ ԴԱՎԻԹԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ,
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հրատ. խմբագիր՝ Ա. Կարապետյան
Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Ձևավորող՝ Ա. Աղուզումցյան

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Չափսը 60x84 1/16: Տպագր. 11 մամուլ:
Տպաքանակ՝ 200:

Երևան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան 1



Վլադիմիր Դավիթի ՎԱՐՂԱՆՅԱՆ

Վլադիմիր Դավիթի Վարդանյանը ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական է:

2003-2006 թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմում՝ որպես Իրավախորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ: 2006 թ. ապրիլից մինչև 2013 թ. մայիսը զբաղեցրել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի Իրավախորհրդատվական ծառայության միջազգային պայմանագրերի բաժնի վարիչի պաշտոնը: 2013-2016 թթ.

զբաղեցրել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի Իրավախորհրդատվական ծառայության (վարչության) պետի պաշտոնը:

2005 թ. ստացել է իրավագիտության թեկնածուի գիտական աստիճան («Ցեղասպանության հանցագործության համար պետությունների պատասխանատվության միջազգային իրավական հիմքերը»):

2005 թ. ԵՂՉ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս է:

Վլադիմիր Վարդանյանը ակադեմիական հետաքրքրությունների շրջանակը ներառում է ցեղասպանության և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների իրավական ասպեկտներին, միջազգային մարդասիրական իրավունքին, մարդու իրավունքների միջազգային իրավունքին, միջազգային քրեական իրավունքին առնչվող հիմնահարցերը: Նա հեղինակ է միջազգային հանրային իրավունքի արդի հիմնահարցերին նվիրված ավելի քան 30 գիտական հոդվածների:

Վլադիմիր Վարդանյանը Իրավաբանների համահայկական խորհրդածոլովի խորհրդին առընթեր՝ «Հայոց ցեղասպանության իրավական հարցերի գիտավերլուծական կենտրոնի» համակարգողն է, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի, Հայաստանի միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի (ICLaw) համահիմնադիրն է, «Միջազգային և համեմատական իրավունքի հայկական տարեգրքի», «Պրավոլայա ինիցիատիվա» (Իրավական նախաձեռնություն) համառուսաստանյան գիտագործնական ամսագրի խմբագրական խորհրդների անդամ է: Վլադիմիր Վարդանյանը հանդիսացել է 1949 թ. Ժնևի Առաջին կոնվենցիայի 2016 թ. ԿԽՄԿ մեկնաբանությունների (հայաստանյան) գրախոսող:

